Մոսկվայի կոնսերվատորիայի Կոնստանտին Սարաջևի դիրիժորական դասարանի սանն իր ուսանող ընկերների հետ մասնագիտական գիտելիքներն ամրապնդում էր «Պրոֆեսոր Սարաջևի անվան սիմֆոնիկ նվագախումբում»: Այս ինքնատիպ կոլեկտիվը կազմված էր նախկինում երաժշտությամբ զբաղված բժիշկներից, նկարիչներից, բանասերներից և այլ մասնագետներից, սակայն ուներ կատարողական պատշաճ մակարդակ: Այն գործում էր հասարակական հիմունքներով: Գ. Ե. Բ ու դ ա դ յ ա ն ը 1928-1929 թթ. մի քանի անգամ ղեկավարել է նվաճված նվագախմբի համերգները: Իսկ 1929 թ. ապրիլի 21-ին Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում կայացավ երիտասարդ դիրիժորի դիպլոմային աշխատանքի կատարումը: Հատկանշական համերգին մասնակցում էին Մոսկվայի ռադիոհաղորդումների կենտրոնի սիմֆոնիկ նվագախումբը և դաշնակահար Գրիգորի Գինգբուրգը: Ներկայացվում են Մյասկովսկու 4-րդ Սիմֆոնիան, Շոպենի դաշնամուրային մի միևնույն Կոնցերտը և Չայկովսկու «Վոյեվոդա» սիմֆոնիկ բալլադը: Բ ու դ ա դ յ ա ն ը դրսևորած գերազանց աշխատանքի արդյունքում, նրան Մոսկվայի մի շարք առաջատար համերգային կազմակերպություններ հրավիրում են աշխատելու որպես դիրիժոր, սակայն նրան սպասում էր հայրենիքը: Մոսկվայի կոնսերվատորիայի 1-ին շրջանավարտ հայ դիրիժորին Երևանի կոնսերվատորիայում դիմավորում են ջերմությամբ. ռեկտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանը և ուսումնական գծով նրա տեղակալ Սյպիրիդոն Մելիքյանը նրան են վստահում կոնսերվատորիայի սիմֆոնիկ և օպերային դասարանները: Ուսանողական նվագախումբը, որի հետ մինչ այդ պարսպել էր Լենինգրադ ուսման մեկնած Սուրեն Չարեքյանը, արդեն ուներ որոշակի դիմագիծ և նվագացանկ: Բ ու դ ա դ յ ա ն ը, համալրելով նվագախումբը, որն այն ժամանակ միակն էր Հայաստանում, հաճախակի է դարձնում փորձերն ու ելույթները: Նվագախմբի կատարողական բարձր որակները դրսևորվեցին 1929-1930 թթ. ուսումնական տարվա 3 հաշվետու համերգներին, որոնք տեղի ունեցան Մշակույթի տանը, որտեղ ներկա էր Կոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, հնչեցին հատվածներ Հայդնի և Մոցարտի սիմֆոնիաներից, արիաներ Մոցարտի օպերաներից, Բեթհովենի նախերգանքները, Մուտրգալկու «Գիշերը Լիսի լեռան վրա» սիմֆոնիկ պատկերը, Չայկովսկու 1-ին Սիմֆոնիան և ջութակի Կոնցերտը՝ մենակատարն էր Ռուբեն Ստեփանյանը: «Խորհրդային Հայաստան» թերթի 1930 թվականի հունիսի 22-ի համարում ջերմ արձագանքով հոդված տպագրվեց՝ երիտասարդ, շնորհալի և մասնագիտական հմտություններով առանձնացող դիրիժորի կատարած աշխատանքի վերաբերյալ:

Կոնսերվատորիայի նվագախմբի համար պատասխանատու ելույթ էր 1932-ի ապրիլի 14-ին կայացած համերգը, կազմված բազմազան ծրագրով՝ հատվածներ Հարո Ստեփանյանի «Քաջ Նազար» օպերայից, Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Ախթամար» սիմֆոնիկ պոեմը և հայ կոմպոզիտորների այլ նորաստեղծ սիմֆոնիկ

կտավներ: Կատարված ստեղծագործությունները քրննարկվեցին ՀԿՄ-ում:

Կոնսերվատորիական նվագախմբի հետ որպես մենակատարներ ելույթ էին ունենում խոստումնալից ուսանողները: Այսպես, 1935 թ. ապրիլի 27-ին 14-ամյա Աննո Բաբաջանյանը ներկայացավ Բեթհովենի դաշնամուրային 1-ին Կոնցերտի կատարմամբ: 1930-ականների սկզբին նվագախումբն ամառվա ամիսներին բացօթյա համերգներ էր ունենում Երևանի 26 կոմիսարների այգում: Յուրօրինակ համերգաշրջանների կազմակերպիչն իհարկե Գ. Բ ու դ ա դ յ ա ն ը էր: Նվագախումբը ղեկավարում էին նաև Մելիք-Փաշանը, Չարեքյանը, Շատիրյանը և այլ ականավոր դիրիժորներ:

1932-ին, կոնսերվատորիայի նվագախմբի հիմքով կազմավորվեց Երևանի օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը, որը մշտապես ելույթներ էր ունենում ինքնուրույն սիմֆոնիկ ծրագրերով: Բ ու դ ա դ յ ա ն ը մեծապես նպաստեց այս երաժշտախմբի կայացմանն ու զարգացմանը: 1933-ի մարտի 12-ին կայացավ օպերային նվագախմբի 1-ին ինքնուրույն համերգը, որը ներկայացնում էր Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Ախթամար» սիմֆոնիկ պոեմը և հատվածներ «Սեդա» օպերայից: 1939 թ. Գ. Բ ու դ ա դ յ ա ն ը ղեկավարությամբ հայաստանյան հանդիսատեսն առաջին անգամ ունկնդրեց Արամ Խաչատրյանի 1-ին Սիմֆոնիան և դաշնամուրային Կոնցերտը, մենակատարն էր Լև Օրբորինը: Բ ու դ ա դ յ ա ն ը չէր մերժում իր պանծալի ուսուցչի՝ Կոնստանտին Սարաջևի հրավերները՝ ղեկավարելու վերջինիս ջանքերով 1941 թ. հիմնված Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի համերգները: Տարբեր առիթներով, Բ ու դ ա դ յ ա ն ը շնորհիվ համերգային կյանք են ստացել Հարո Ստեփանյանի, Սարգիս Բարխուդարյանի, Գրիգոր Եղիազարյանի և այլ հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ երկերը, և հատկապես Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործությունները: 1932 թ., կոնսերվատորիայի նվագախումբը Բ ու դ ա դ յ ա ն ը ղեկավարությամբ կատարեց 1-ին հայ սիմֆոնիստի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, «Ղրիմյան էսքիզներ» սյուիտի 2-րդ շարքը: Այս համերգը սկիզբ դրեց յուրօրինակ ավանդույթի՝ ամենամյա սիմֆոնիկ համերգներով կոմպոզիտորի հիշատակին տուրք մատուցելուն: Սպենդիարյանի սիմֆոնիկ կտավները Բ ու դ ա դ յ ա ն ը շնորհիվ կատարվում էին նաև Լենինականում և Կիրովականում, իսկ 1939-ին դրանք հնչեցին Թբիլիսիում, Վրաստանի ֆիլհարմոնիայի նվագախմբի կատարմամբ:

Սպենդիարյանական համերգներին ընդգրկվում էին նրա գրեթե բոլոր սիմֆոնիկ երկերը, հատվածներ «Այմաստ» օպերայից, երգեր, ռոմանսներ: Որպես մեներգիչներ հանդես էին գալիս Հայկանուշ Դանիելյանը, Շարա Տայյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Պավել Լիսիցյանը և այլոք: Գիրժոր Բ ու դ ա դ յ ա ն ը նվագացանկում նշանակալի տեղ էին գրավում նաև արևմտաեվրոպացի և ռուս կոմպոզիտորների երկերը՝ Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի, Մենդելսոնի, Շումանի ստեղծագործությունների կողքին հնչում էին Բորոդինի «Դյուցազնական» սիմֆոնիան, Մյասկովսկու 16-րդ Սիմֆո-

նիան, Չայկովսկու սիմֆոնիկ գլուխգործոցները և կոնցերտները: Մենակատարներն էին՝ Յակով Ֆլիերը, Հրաչյա Բոգդանյանը, Ավետ Գաբրիելյանը և այլ անվանի երաժիշտներ:

Բուդաղյանի գործունեությունը սիմֆոնիկ դիրիժորության ասպարեզում եզրափակվեց 1959 թ., երբ հրավեր ստացավ մասնակցելու Դադստանի ինքնավար հանրապետության կոմպոզիտորների ստեղծագործական ստուգատեսին: Մախաչկալայում նա ղեկավարեց Դադստանի միացյալ մեծ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մենակատարների մասնակցությամբ համերգային երեկոներ՝ կյանքի կոչելով դաստանցի հեղինակների ավելի քան 20 գործ: Կատարողական բարձր մակարդակն իհարկե, արժանացավ տարբեր ազգերի մասնագետների ու երաժշտասերների գոհունակությանը, իսկ Դադստանի Գերագույն սովետի նախագահության պատվոգրին արժանանալը հենց դրա վկայությունն էր:

Գևորգ Բուդաղյանի անունը մեծապես կապված է նաև հայկական օպերային թատրոնի կայացման և զարգացման հետ: 25 տարի շարունակ նա եղել է այս թատրոնի դիրիժոր-մեկնաբան, կատարողներին ուղղորդող և կրթող անխնայ գործիչ, նոր ներկայացումների ստեղծման աջակից, որոշ դեպքերում՝ խմբագիր և համահեղինակ: Հայաստանում երաժշտական կարևորագույն օջախներից մեկի՝ օպերային թատրոնի ստեղծումն արվեստի առաջադեմ գործիչների երազանքն էր, այն հաճախ նաև Սպենդիարյանի և Բուդաղյանի զրույցների թեման էր: 1932 թ. թատրոնի բացումն սկսեց ստանալ իրատեսական ուրվագծեր, անգամ նշանակվեցին առաջին տնօրենը՝ գրականագետ, թատերական գործիչ Մամիկոն Գևորգյանը և դիրիժորը՝ Գևորգ Բուդաղյանը: Մինչև թատրոնի բացվելը, ներկայացումների համար հատկացվել էր այսպես կոչված Աշխատանքային թատրոն, որի տեղում այժմ գտնվում է Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնը: 1933 թ. Երևանի օպերային թատրոնը բացվեց Ա. Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ, որին կանդիդատականք ստորև: Նույն տարում երիտասարդ մաստրոն նախածեռնեց Պ. Բ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի բեմադրությունը, հաջորդ համերգաշրջանին՝ Ջ. Պուչինիի «Զիո-չիո-սան»-ը: Վերջինիս մասին «Խորհրդային արվեստ» հանդեսում երաժշտագետ Ռուբեն Թերլեմեզյանն է գրել, բարձր գնահատելով նաև ռեժիսոր Արշակ Բուրջայանի, բեմանկարիչ Պատո Անանյանի աշխատանքը և մեներգիչների կատարողականությունը:

Առաջիկա տարիներին հայաստանյան հանդիսատեսի դատին հանձնվեցին Ռ. Լեոնկավալոյի՝ «Պայացները», Հարո Ստեփանյանի՝ նորավարտ «Քաջ Նազարը», Դերժինսկու՝ «Խաղաղ Դունը»:

Ներկայացումների կատարողական որակները հասցվեցին բարձր նշանոթի և հնարավոր եղավ հայարտությամբ մասնակցել 1939 թ. Հայկական արվեստի 10-օրյակին Մոսկվայում, որի բացումը կայացավ Մեծ թատրոնում՝ «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ: Առանց չափազանցության, փառահեղ ելույթից հետո

թատերախումբը շարունակեց ինտենսիվ գործունեությունը, իսկ խաղացանկում ավելացան Արմեն Տիգրանյանի «Անուշ», Հարո Ստեփանյանի «Լուսաբացին», Կարո Ջաքարյանի «Մարջան», Ուզեիր Հաջիրեկովի «Քյոռոլի», Ջաքարիա Փալիաշվիլու «Դահսի», Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերան, Խաչատրյանի «Երջանկություն» բալետը:

Դիրիժորի սկզբունքներից էր կոմպոզիտորներին աջակցելն ու խրախուսելը, որպեսզի ծնվեն հայկական երաժշտական թատրոնի նորանոր ներկայացումներ: Դա է վկայում համատեղ աշխատանքը Հարո Ստեփանյանի, Կարո Ջաքարյանի և Անուշավան Տեր-Ղևոնդյանի հետ: Նման դեպքերում Բուդաղյանը գործի էր դնում նաև իր ստեղծագործական ունակությունները: Մտահղացումներից մեկն էլ «Սայաթ-Նովա» բալետի ստեղծումն էր՝ մեծամուն աշուղի երգերի հիմքով, որի աշխատանքը սակայն, մնաց անավարտ, և պահպանվեց միայն 1-ին գործողության կլավիրը: Ջարմանալի չէ այն, որ Բուդաղյանը դարձավ ՀԿԿ անդամ՝ կազմակերպության ստեղծման առաջին իսկ օրերից և, մշտապես կապի մեջ լինելով երիտասարդ կոմպոզիտորների հետ, աջակցում էր նրանց, երբեմն շտկում պարտիտուրները:

Անհամբերությամբ սպասում էր, թե երբ է Արմեն Տիգրանյանն ավարտին հասցնելու «Դավիթ Բեկ» օպերան: Կոմպոզիտորն առողջական լուրջ խնդիրների պատճառով չկարողացավ կատարել օպերայի վերջնական խմբագրումը, աշխատանքն ամբողջացրեց ինքը՝ Բուդաղյանը: 1949-ին Արվեստի գործերի վարչությունը դիրիժորին գործուղեց Թբիլիսի՝ հանդիպելու Տիգրանյանին և բեմադրության պատրաստելու «Դավիթ Բեկ»-ը: Վատառողջ կոմպոզիտորը Հայաստանից ժամանած դիրիժորին մանրակրկիտ ներկայացրեց իր մտահղացումը, անավարտ կլավիրը, դրամատուրգիական պլանը: 1950 թ. Արմեն Տիգրանյանը կյանքից հեռացավ: Թբիլիսիում արտագրված հեղինակային կլավիրը վրացի արվեստագետներն ուղարկեցին Երևան: Արվեստի գործերի վարչությունում տեղի ունեցավ «Դավիթ Բեկ»-ի դաշնամուրային ունկնդրումը Շարա Տալյանի և Գևորգ Բուդաղյանի կատարմամբ: Արդյունքում հատուկ հանձնաժողովի որոշմամբ, դրամատուրգ Արշալույս Տեր-Հովհաննիսյանին հանձնարարվեց գրել նոր լիբրետո: Բուդաղյանն սկսեց վերականգնել և վերստեղծել օպերայի ամբողջական հատվածները, զարգացնել լայնմոտիվները, շտկել հարմոնիկ ֆակտուրան, հստակեցնել երաժշտական դրամատուրգիան, տեսարանների կառուցվածք, անգամ հեղինակել երաժշտական հատվածներ՝ վրացական «Լեկկուրի» պարը: Նույն տարին օպերան բեմական կյանք ստացավ: Նվագախմբի կոնցերտմայստեր, հետագայում դիրիժոր և պրոֆեսոր Ռոման Կասպարովն իր հուշերում նկարագրում է, թե որքան հետևողական էր Բուդաղյանի աշխատանքը պարտիտուրում, արտահայտչականության և ամբողջականության հասնելու, կերպարային աշխարհի հայրենասիրական ուղղվածությունը, հերոսների հոգևոր գեղեցկությունը և քնարական տեսարանների անկեղծությունն արտացոլելու ձգտումով: «Դա-

վիթ Բեկ»-ը Բուդադանը խմբագրեց ևս մեկ անգամ, 1953 թ., իսկ 1956 թ. այն խմբագրեցին կոմպոզիտորի որդին՝ Վարդան Տիգրանյանը և դիրիժոր Միքայել Թավրիզյանը:

Ուշադրությունը կենտրոնացնելով հայ կոմպոզիտորների երկերի վրա՝ մասստրոն չէր դադարում անդրադառնալ համաշխարհային օպերային գլոբալ գործոցներին. 1946-ին նա ներկայացրեց Անտոն Ռուբինշտեյնի «Դևը» օպերան, 1949-ին Լեո Դելիբի «Լակմե»-ն, որտեղ գլխավոր հերոսուհու դերերգն առաջին անգամ հայկական օպերային թատրոնում կատարեց Գոհար Գասպարյանը:

Գ. Բ ու դ ա դ յ ա ն ի օպերային դիրիժորական գործունեության գագաթնակետն իհարկե «Ալմաստ» է: Սպենդիարյանի կարապի երգն ապահով ձեռքերում հայտնվեց և լավագույն մեկնաբանությունն ստացավ հենց նրա շնորհիվ: Ինչպես նշում է երաժշտագետ Մարինա Բերկուն. «Ինչ էլ և երբ էլ որ նա բեմադրեր, օպերային կլասիկայի ինչպիսի բարձր մնուշների էլ որ առնչվեր, «Ալմաստ»-ը նրա առաջին և հավերժական սերն էր» (3. էջ 49):

Իսկ օպերայի շուրջ գրույցները կոմպոզիտորի և դիրիժորի միջև ծավալվել էին դեռևս 1927 թ., երբ Բուդադանը Մոսկվայի կոնսերվատորիայի 4-րդ կուրսի ուսանող էր: «Երբ Հայաստանում արդեն կլինի օպերային թատրոն, Դուք կդեկավարեք իմ «Ալմաստ»-ը, - այնքան անսպասելի եզրափակեց Սպենդիարովը՝ դիմելով ինձ: ... Կարող էի արդյոք ես այն ժամանակ մտածել, որ Սպենդիարովի խոսքերը կիրականանան ընդամենը հինգ տարի անց» (2. էջ 16):

1930 թ. «Ալմաստ»-ի համաշխարհային պրեմիերան կայացավ Մոսկվայի Մեծ թատրոնի մասնաճյուղում, իսկ 1932 թ. մայիսի 21-ին Թբիլիսիի օպերային թատրոնում ներկայացվեց օպերայի վրացերեն տարբերակը: Հայաստանյան պատվիրակության կազմում էին Մարտիրոս Սարյանը, Ռոմանոս Մելիքյանը, Գևորգ Բուդադանը և գրող Վահրամ Ալազանը: Հենց «Ալմաստ» օպերայով էլ նախատեսվում էր Հայաստանի օպերային թատրոնի բացումը, սակայն որոշ գործիչներ դեմ էին և փոխարենն առաջարկում էին ազգային թատրոնում առաջինը բեմադրել Ռոսինիի «Սևիլյան սափրիչը», պատճառաբանելով, որ վերջինիս երաժշտությունն ավելի մատչելի է հանդիսատեսի համար, որ կատարողներն ավելի հմուտ են և լավ պատրաստված: Հուզիչ և տպավորիչ էր դիրիժորի պատասխանը. «Հայաստանի օպերային թատրոնը պետք է բացվի հայ կոմպոզիտոր Սպենդիարովի «Ալմաստ» օպերայով: Այլ որոշում չի կարող լինել: Պատմությունը կդատապարտի նրանց, ովքեր պատասխանատու կլինեն այդ հարցի ոչ հօգուտ «Ալմաստ»-ի լուծման համար» (2. էջ 41): Եվ, որպես իր խոսքերի ապացույց, գնաց մեծագույն զոհողության և իր կողմից ամբողջությամբ նախապատրաստված ներկայացման դիրիժորական վահանակը զիջեց մեկ ուրիշին...

Մինչ այդ երիտասարդ մաստրոն գնացրով ճանապարհ ընկավ Մոսկվա՝ օպերայի կլավիրոն ու պարտիտուրը Մեծ թատրոնից անվնաս Երևան հասցնելու:

Սակայն իրական բարդությունները դեռ առջևում էին: Կատարողների կողմից երաժշտական նյութը յուրացնելու գործընթացը կազմակերպելն արդեն իսկ խնդիր էր, քանի որ դեռ լիովին ձևավորված չէին նվագախումբը, երգչախումբը, բալետային պարախումբը, մեներգիչների խումբը և իհարկե, դեռ չկար բուն թատրոնի շենքը: Փորձերն ընթանում էին բանվորական թատրոնի, կուլտուրայի տան դահլիճներում, կոնսերվատորիայի դասարաններում, անգամ արտիստների սենյակներում, քանի որ բնակարան նրանցից գրեթե ոչ ոք չուներ: Այնուամենայնիվ, մեծ էր նպատակն ու մոտիվացիան, և դիրիժորի խորաթափանց ու մանրակրկիտ ցուցումներով ընթացող նախապատրաստական աշխատանքն ու համագործակցությունը ռեժիսոր՝ Արշակ (Արկադի) Բուրջայանի, նկարիչներ՝ Մարտիրոս Սարյանի և Միքայել Աբուտչյանի, պարերի բեմադրող Վահրամ Արիստակեսյանի հետ էլ ավելի խոստումնալից էին դարձնում: Չնայած ստեղծագործական թիմի կուռ աշխատանքին, որոշվեց օպերայի պրեմիերային հրավիրել Սամուիլ Ստոլերմանին, ով Թբիլիսիում և Օդեսայում արդեն առիթ էր ունեցել ղեկավարելու «Ալմաստի» բեմադրությունները: Բուդադանը գործնականորեն պատրաստ աշխատանքը հանձնեց իր ավագ գործընկերոջը և 1933-ի հունվարի 20-ին, Գորկու անվ. բանվորական թատրոնում օպերայի երևանյան առաջնախաղը կայացավ Ստոլերմանի ղեկավարությամբ: Ներկայացումից հետո բոլոր մասնակիցների հետ բեմ հրավիրեցին նաև Գ. Բ ու դ ա դ յ ա ն ի ն, ում հաջողվեց խույս տալ ուշադրությունից և դուրս գալ թատրոնից՝ զայելով հուզմունքն ու վիրավորանքը: Սակայն երկրորդ ներկայացումից սկսած շուրջ 25 տարի «Ալմաստ»-ի դիրիժորը հենց Բուդադանն էր: Նա չէր ձանձրացել ավելի քան 300 անգամ նույն օպերան ղեկավարելուց և, ինչպես ինքն է նշել իր հուշերում, յուրաքանչյուր նոր բեմադրության ժամանակ Սպենդիարյանի հանճարեղ պարտիտուրում գտնում էր կոմպոզիտորի նոր բացահայտվող, ասես թաքուն պահված մտքերը՝ անսահման գեղեցկությամբ և երաժշտական անկեղծությամբ լի:

«Ալմաստ»-ի հետ կապված ևս մի տհաճ միջադեպ էր վիճակված հաղթահարել մաստրոսին՝ 1934 թ. թե 1935 թ. (այդպես է նշում Բուդադանն իր հուշերում): Երևան էր ժամանել Սպենդիարյանի այրին՝ Վարվառա Լեոնիդին: Գալով թատրոն՝ նա զայրույթով դիմել էր Բուդադանին և պահանջել «Ալմաստ»-ի պարտիտուրը, իբրև Վիեննայում հրատարակելու համար: Դա օպերայի ձեռագիր պարտիտուրի կրկնօրինակն էր, որով անցկացվել էր մոսկովյան և ավելի ուշ՝ երևանյան պրեմիերան: Տվյալ պահին դա փաստացիորեն միակ օրինակն էր, որը Հայաստանի Լուսժողովի սեփականությունն էր համարվում: Դիրիժորի քաղաքավարի մերժումն իհարկե, ավելի էր զայրացրել Վարվառային, սակայն Բուդադանին հաջողվում է պարտիտուրը պահել թատրոնում:

1939 թ. Մոսկվայում կայացավ Հայ արվեստի և գրականության տասնօրյակը, որը բացվեց հոկտեմբերի 20-ին «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ: Մինչ այդ, Կոնստանտին Սարաջևն իր տաղանդաշատ սանի

աշխատանքի վերաբերյալ հողված հեղինակեց «Խորհրդային Հայաստան» օրաթերթում. «Դիրիժոր Բուդաղյանը, հանդիսանալով Սպենդիարյանի ստեղծագործության սակավաթիվ գիտակներից մեկը, օպերայի հնչողականության մեջ մարմնավորել է կոմպոզիտորի հեղինակային մտադրությունները: Փայլուն նվագախումբը և երգեցիկ խումբը, բացառիկ վառ կերպով կատարելով իրենց խնդիրը, իրավունք են տալիս հուսալու, որ Մոսկվայում այդ օպերան կգնահատվի ըստ արժանվույն»: Մի շարք գովեստի արժանացած հողվածներ հաջորդեցին արդեն «Ալմաստ»-ի մոսկովյան հաղթարշավին, իսկ հեղինակներն անվանի կոմպոզիտորներ էին, գրողներ, նկարիչներ:

Տասնօրյակից հետո Գ. Բուդաղյանն արժանացավ «Պատվո նշան» շքանշանի և Արվեստի վաստակավոր գործչի կոչման: Հանգիստ առնելով մոսկովյան ձեռքբերումներից հետո՝ կատարողները դիրիժորի գլխավորությամբ գրանցեցին մեկ այլ լուրջ հաջողություն. 1940-ի հունվարի 20-ին «Ալմաստ»-ի բեմադրության 7-րդ տարեդարձի օրը, հանդիսավոր կերպով բացվեց Երևանի օպերային թատրոնի նոր շենք\*:

Բուդաղյան-դիրիժորի կերպարը հառնում է նաև Տաթևիկ Սազանդարյանի հուշերում գրի առնված խոսքերից. «Գեորգի Երվանդովիչը լայն մտահորիզոնի տեր, բազմակողմանի գիտելիքների և բարձր ինտելեկտի տեր մարդ էր: Նա արտակարգ երաժիշտ էր՝ կատարողական ընդարձակ դիապազոնով և նրբին ճաշակով: ... Ալմաստի դերերգը չափազանց բարդ է թե՛ երաժշտական ինտոնացիոն առումով՝ վոկալ տեսիտուրայի հաճախակի և կտրուկ փոփոխություններով, այնպես էլ կերպարի հոգեբանական խորությամբ և մեծ արտահայտչականությամբ: ... Գեորգի Երվանդովիչն ինձ սովորեցնում էր լսել և հասկանալ երաժշտության և պատգաների լեզուն, վոկալ խոսքի ենթատեքստը և ինտոնացիաների հարստությունը, գեղարվեստական ճրճմարտացիության լեզուն: Նա խնամքով էր վերաբերվում իմ անհատական առանձնահատկություններին, ձայնին և չափազանց երիտասարդ տարիքին: Մեր պարապմունքներին մթնոլորտն ընկերական էր...» (3. էջ 47): Հենց դիրիժորի ընտրությամբ էր 22-ամյա արտիստուհին ստանձնել Ալմաստի երաժշտական և հոգեբանական առումով բարդագույն դերերգը: Նույնպիսի գոհունակությամբ էր հիշում համատեղ աշխատանքը

\* Հաջողությունն իսկապես անխուսափելի էր, քանզի մեկտեղվել էին մասնագիտական հզորագույն ուժեր, գլխավոր դերերգերը կատարում էին՝ Տաթևիկ Սազանդարյանը, Պավել Լիսիցյանը, Լև Իսեցկին և Գալուստ Գաբրիելյանը, բեմի ու հերոսների հագուստների ձևավորման հեղինակը Մեծն Սարյանն էր, նվագախմբի կազմում նույնպես առաջնակարգ երաժիշտներ էին: Նկարիչը Բուդաղյանին խնդրեց հատուկ ժամանակ տրամադրել, սկզբից մինչև վերջ նվագել և երգել օպերայի երաժշտությունը՝ ինքն էլ զուգահեռաբար նոթատետրում մատիտով էսքիզներ անելով: Եվ երբ սարյանական դեկորացիաներն ու կոստյումները պատրաստ էին, Գ. Բուդաղյանը հիացմունքով նկատեց, որ դրանք ասես երաժշտություն էին ճառագում և պատկերների տեսքով արտացոլում սպենդիարյանական նվագախմբային հարուստ գունապնակը:

հայկական օպերայի պատմության մեկ այլ պայծառ աստղ՝ Պավել Լիսիցյանը:

«Ալմաստ» օպերայից բացի, Սպենդիարյանն այլ ավարտուն բեմական ստեղծագործություն չուներ: Բուդաղյանը տարիների ընթացքում մշտապես իր աչքի առաջ ունենալով կոմպոզիտորի տարբեր ժանրերի գործերը, նկատել էր, որ նրա հեղինակած պարերն ընդգծված կերպարայնությամբ պահանջում են վիզուալիզացիա, որոշ կամերային գործեր էլ կարծես «սպասում են» նվագախմբային հնչողության: 1943 թ. մայիսին, Սպենդիարյանի մահվան 15-րդ տարելիցին նվիրված համերգը վարելուց հետո, խորաթափանց արվեստագետն օպերայի և բալետի թատրոնի ղեկավարությանը ներկայացրեց առաջարկ՝ կոմպոզիտորի պարային երաժշտության հիմքով ստեղծել բալետային համարներ, որոնք կկատարվեին պատերազմի տարիներին մեծ արդիականություն ունեցող հավաքական համերգներին: Չուգահեռաբար ծնվեց նաև Սպենդիարյանի երաժշտության հիմքով ամբողջական բալետ ստեղծելու համարձակ միտքը: Թատրոնի ղեկավարության հավանությունից հետո և գլխավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանի և գլխավոր բալետմայստեր Լեոնիդ Լավրովսկու շնորհիվ աշխատանքը եռանդուն ընթացք ստացավ: Նախ, անհրաժեշտ էր գտնել համապատասխան սյուժե և, ինչպես հետագայում իր հողվածում նշել էր Գուլակյանը, բալետի բովանդակությունը պետք է համահունչ լիներ Սպենդիարյանի քնարական-արտահայտչական երաժշտությանը, նաև այն պետք է լիներ ազգային և հանդիսատեսին հոգեհարազատ, միաժամանակ առանցքում ունենալով վեհ ու ազդեցիկ սիրո թեմա: Ընտրությունը կանգ առավ «Մասունցի Դավիթ» էպոսի «Դավիթ և Խանդուխտ» գլխի վրա: Գուլակյանը ստեղծեց բալետի լիբրետտոն, Լավրովսկին՝ խորեոգրաֆիկ գործողության պլանը\*:

Աշխատանքն ավելի էր բարդացնում այն փաստը, որ բալետը ոչ թե ավարտուն պարային համարների դիվերտիսմենտ պետք է լիներ, այլ դրամատուրգիական ամբողջականություն, կերպարների դիալոկ երաժշտական բնութագրերով: Բուդաղյանն ընտրեց արդյունավետ ուղի՝ հետևելով «Ալմաստ» օպերայում Սպենդիարյանի կիրառած լայտմոտիվների սկզբունքին: «Բալետի ժանրային առանձնահատկությունը, միաժամանակ սյուժեն, թելադրում էին այդ բանը: Խանդուխտ, Դավիթ, Չմշկիկ-սուլթանի լայտթեմաները եզերում էին բալետի սիրային-լիրիկական ու դրամատիկ տեսարաններով հարուստ միջուկը: Հիմնական գործող անձանց երաժշտական բնութագրերը, դյուրըմբռնելի դարձնելով ներկայացման սյուժեն, օգնում էին բալետի կառուցվածքի ամբողջականությանը: Սպենդիարյանական մեղեդիների ոգուն ամբորեն խարսխված «Խանդուխտ»-ի խորեոգրաֆիան կառուցված էր դասական պարի հիման վրա» (1. էջ 34):

Այդպիսով, ծնվեցին բալետի լայտմոտիվները. առաջին հանդիպման և սիրո լայտմոտիվն ըստ «Այվարդ» ռոմանսի մեղեդու, Չմշկիկի երաժշտական բնու-

\* Աշխատանքի հաջորդ փուլն ավելի պատասխանատու էր և բարդ. պետք էր ամբողջացնել բալետի երաժշտությունը:

թագիրն ըստ Շամիրամի արհայի, որը վերականգնվել էր կոմպոզիտորի անավարտ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» օպերայի ձեռագրերի հիմքով, իսկ «Ղրիմյան Էսքիզներ»-ի 2-րդ շարքի «Պրելյուդ»-ը նոր երաժշտական կերպավորում ստացավ Գուսանի թեմայում, որը հնչում է բալետի նախաբանում և վերջաբանում:

«Խանդութ» բալետի երաժշտության մեջ տեղ գտան հատվածներ Սպենդիարյանի առավել քան 60 երկերից՝ ռոմանսներից, գործիքային մանրանվագներից, սիմֆոնիկ կտավներից: Հայտնի և սիրված մեղեդիներին զուգահեռ, նոր կյանք էին ստացել Սպենդիարյանի մի շարք չիրատարակված և սակավ ծանոթ գործեր: Որոշ հատվածներ Բուդաղյանն ստեղծեց տարբեր թեմաների միավորումից: Ինչպես կոմպոզիցիայի դրամատուրգիական գիծը, այնպես էլ գործիքավորումն իրագործվեցին մեծ վարպետի՝ Սպենդիարյանի ոճով, նրա ոգու, մտածելակերպի և մտեցումների նրբին արտացոլմամբ: Արդյունքում ներկայացումը ստացվեց վառ և տպավորիչ:

1945 թ. գարնանը բալետը գործիքավորված էր և պատրաստ բեմադրության: Բեմադրող բալետմայստերն Իլյա Արբաստովն էր, իսկ նկարիչը Կարո Մինասյանը: «Բալետի բեմադրիչներն ընտրել էին խնդրի լուծման բարդ ուղի՝ դասականը գունազարդել հայկական պարի տարրերով, ավելի ճիշտ, երկուսի միաձուլումից ստացել նոր որակ, որ նման չէր ոչ տիպիկ ազգայինին և ոչ էլ դասականին» (1. էջ 35):

Մեծ պատասխանատվություն և նվիրում դրսևորեցին նաև նվագախմբի երաժիշտները և պարային արտիստները: Չմշկիկի դերակատար, մենապարուհի, հետագայում՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական արտիստուհի Թերեզա Գրիգորյանն իր հուշերում պատմել է Գ. Բուդաղյանի հետ իրենց համատեղ աշխատանքի մասին, թե ինչպես էր միջահասակ և համեստ մանետրոն բեմ բարձրանում փորձերի ընթացքում և իրեն խորհուրդներ տալիս՝ կերպարը ճիշտ մարմնավորելու հարցում: «Խանդութ»-ի պրեմիերան կայացավ 1945 թ. հուլիսի 15-ին: Դեռ չէր ավարտվել Հայրենական Մեծ Պատերազմը և երաժշտությունն ասես բալասան լինելու լարված ու տառապալից իրավիճակում: Մեկ տարվա ընթացքում ներկայացումն 10.000-ից ավելի հանդիսատես ականատես եղավ «Խանդութ»-ի բեմելին, իսկ Բուդաղյանը բալետը շուրջ 100 անգամ ղեկավարելու առիթ ունեցավ:

Այնուամենայնիվ, «Խանդութ»-ը հայկական բալե-

տի պատմության մեջ յուրօրինակ և կարևոր մի էջ բացեց, որն անկասկած նպաստեց ազգային դասական պարի ստեղծմանը: Պատահական չէր նաև, որ 1945 թ. նոյեմբերին, ազգային մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունենալու համար, Հայաստանի կառավարությունը Գևորգ Բուդաղյանին շնորհեց ժողովրդական արտիստի կոչում: Տարիներ անց, 1950-ականներին բալետն առավել տպավորիչ դարձրեցին պարարվեստի սիրված գործիչներ՝ Վանուշ Խանամիրյանն ու Սիլվա Մինասյանը, մարմնավորելով գլխավոր կերպարներին՝ Սասունցի Դավթին և Խանդութին\*:

Կոմպոզիտորի տեքստին վերին աստիճանի հարգալի վերաբերմունք ցույցաբերող Բուդաղյանը փայլուն գիտեր բեմի և նվագախմբի փոխադարձ կապի օրենքները, ճաշակը՝ նրբին էր, երևակայությունը՝ հարուստ: «Նրա համակողմանի գիտելիքները երաժշտության տարբեր բնագավառներում, ավելի նկատելի են դարձրել դիրիժորական ու մանկավարժական գործունեությունը: Նվիրվածությունը արվեստին գնահատվել է ժողովրդի կողմից, բոլոր նրանց, ում ծանոթ է այդ նվիրվածության արժեքը» (1. էջ 61):

Հայկական օպերային թատրոնի հիմնադիրներից և նրա առաջատար դիրիժորներից է Գ. Բուդաղյանը, ցավոք չի կատարել օպերային ձայնագրություններ, ինչը հաջորդ սերունդների համար հասանելի կդարձներ իր դիրիժորական արվեստի փայլուն դրսևորումները:

Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգությունը տարիներ շարունակ հետազոտվող և պրոպագանդվող առանցքային երևույթ է եղել Բուդաղյանի համար: Նա ներթափանցել է մեծ դասականի արվեստի գաղափարական, ոճական և գեղագիտական խորքերը, ընկալել դրա կարևորագույն դերը, որպես հայ երաժշտության զարգացման ուղենիշ: Սպենդիարյանի գործերից շատերը կարիք ունեին խմբագրման: Կոմպոզիտորի արխիվն ուսումնասիրելով՝ Բուդաղյանը պահպանված նվագախմբային ձայների հիմքով վերականգնեց մի շարք պարտիտուրներ, որոնց թվում էին՝ «Պրելյուդը», Մենուետը, Ֆուգան լարային քառյակի համար, Բարկարոլան թավջութակի և նվագախմբի համար, «Արևելյան օրորոցայինը», «Այմաստը»՝ ձայնի և նվագախմբի համար, հրեական թեմաներով Էտյուդը նվագախմբի փոքր կազմի համար և այլն: Նա նախապատրաստեց «Էդելվեյս» մեդոդեկլամացիայի, «Ուկրահնական» սյուիտի, «Այմաստ» օպերայի և այլ ստեղծագործությունների կլավիրները: Իսկ Մոսկվայում Հայկական արվեստի առաջին տասնօրյակի շրջանակներում կազմեց «Այմաստ» օպերայի II դրվագների ժողովածու և դրանք փոխադրեց ձայնի ու դաշնամուրի և միայն դաշնամուրի համար, որը հրատարակվեց Մոսկվայում, երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանի հանգամանալի ներածականով:

\* «Բուդաղյանի արվեստը հայ օպերային թատրոնի տարեգրության լավագույն էջերից է: Ազգային բեմում տարբեր օպերաներ մեկնաբանող դիրիժորը, ունենալով իր աշխարհըմբռնումն արվեստում, կոնկրետ ստեղծագործություններ կատարելիս, առաջնությունը տվել է հայրենասիրական, մարդասիրական ազնիվ գաղափարներին» (1. էջ 61):

Հասունացել էր Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակման միտքը: Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին և հաջորդաբար, Խորհրդային Հայաստանի ժողովմխորհին կից արվեստի գործերի վարչության պետ Անդրանիկ Շահինյանի աջակցությամբ, Հայաստանի Գերագույն սովետի հրամանագրով երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը ծրագրվեց առաջիկա տարիների ընթացքում, 11 հատորով: Խմբագիր նշանակվեց Բուդաղյանը, ով մեծ սիրով ու նվիրումով ստանձնեց այդ աշխատանքը: Շարունակվեցին Սպենդիարյանի արխիվների ուսումնասիրությունները Գրականության և արվեստի թանգարանում, հատորների նախապատրաստական աշխատանքն առավել սերտ կապ ստեղծեց ևս մեկ կազմակերպության՝ Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի հետ: Չնայած պատերազմական իրավիճակին և Հայպետհրատի սահմանափակ պոլիգրաֆիկ հնարավորություններին՝ 1-ին հատորը լույս տեսավ 1943-ին: Հաջորդ հատորները հրատարակվեցին մեծ ընդմիջումներով, վերջինն էլ՝ «Այմաստ» օպերայի պարտիտուրը՝ Բուդաղյանի խմբագրությամբ, լույս տեսավ արդեն նրա մահվանից հետո, 2 գրքով՝ 1984 թ. և 1988 թ.: Այսպիսով, շուրջ 40 տարի մեծ գործիչը, ինչպես ինքն է պատմել, իր մանկավարժական, վարչական և կատարողական գործունեությունից բացի, մնացյալ ժամանակը նվիրեց կոմպոզիտորի անտիպ ձեռագրերն ուսումնասիրելուն, ըստ ժանրերի համակարգելուն, բացթողումները խմբագրելուն, հրատարակված երկերը սկզբնաղբյուրի հետ համեմատելուն և լավագույն տարբերակն ընտրելուն:

Հատորների լույս ընծայման երկար տարիների ընթացքում Գ. Բուդաղյանը հրատարակության պատրաստեց Սպենդիարյանի մի շարք այլ ժողովածուներ և առանձին երկեր, մասնավորապես՝ վոկալ գործեր և Ուկրաինական ժողովրդական երգերը: Սպենդիարյանի երկերը ֆունդամենտալ համակարգված տեսք ստացան բուդաղյանական խմբագրությամբ կազմված հատորներում: Դրանք երկլեզու են՝ հայերեն և ռուսերեն, ունեն բացատրական ներածական և ծանոթագրություններ, որտեղ խմբագիրը որոշակի տեղեկություն է ներկայացնում յուրաքանչյուր հատորում տեղ գտած գործերի մասին, ինչպես նաև հստակ կերպով նշում՝ որ հասվածներն ու տարրերն են իր կողմից ենթարկվել միջամտության: Հայերեն տեքստերի խմբագիրը և վոկալ գործերի մեծ մասի թարգմանիչը Խորհրդային Հայաստանի Արվեստի վաստակավոր գործիչ, լեզվաբանական գիտությունների թեկնածու՝ Տիգրան Հախումյանն է\*:

Սպենդիարյանական հատորները կազմելով՝ Գ. Բուդաղյանը հերթական անգամ իր հարգանքի տուրքն ու անթաքույց հիացմունքն է հայտնել մեծ կոմպոզիտորին: Ներթափանցել Սպենդիարյանի բազմաժանր ստեղծագործության գաղտնարանները, դրանք մատուցել գիտական լեզվով, զուգահեռաբար կատարողական կյանք հաղորդել դրանց. այս մոտեցումը Բուդաղյանի գործունեությունը դարձնում է բացառիկ՝ հայ

մեծ դասականի արվեստի ճանաչման և տարածման գործում: Մշտապես կազմակերպվում էին Սպենդիարյանի գործերից կազմված համերգներ: Հատկանշական են նրա երգերին և ռոմանսներին նվիրված երեկոները, կոմպոզիտորի մահվան 15-րդ տարելիցի առթիվ: 1943 թ., 1-ին հատորի պատրաստմանը զուգընթաց, դրանք առավել քան նպատակահարմար էին՝ սպենդիարյանական քնարերգության լայն ճանաչման համար: Համերգներն անցկացվում էին կոնսերվատորիայի դահլիճում, բուհի՝ Բուդաղյանի դեկավարած կամերային երգեցողության դասարանի ուսանողների մասնակցությամբ: Իր սաներին նվագակցելուց բացի, նա ուսանողների կողմից չհաղթահարված բարդ օրինակները, ինչպիսին էին «Առ Հայաստան» կոնցերտային արիան և «Այնտեղ, այնտեղ, դեպ պատվո դաշտը» հերոսական վոկալ կտավը, նվագում և երգում էր անձամբ: Կատարումները «զարդարեց» Սպենդիարյանի վոկալ ստեղծագործական ժառանգությանը նվիրված հանգա-

\* Այսպես, 1-ին հատորում տեղ են գտել կոմպոզիտորի, մինչ այդ հայտնաբերված բոլոր վոկալ գործերը՝ թվով 40 երգեր, ռոմանսներ և բալլադներ, որոնցից 11-ը լույս է տեսել առաջին անգամ: Սպենդիարյանի ստեղծագործական տարբեր շրջանների վոկալ երկերի ընդգրկումը ժամանակագրական կարգով հատորում ներկայացնում է նրա ոճական զարգացման և կոմպոզիցիոն սկզբունքների փոփոխության ուրույն համայնապատկեր: Ժամանակագրական սկզբունքը վերաբերում է նաև մյուս հատորներին:

2-րդ հատորում տեղ են գտել Սպենդիարյանի վոկալ անսամբլները, խմբերգերը, մեկոդիկլամացիաները, ռուսական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումները:

3-րդ հատորը կազմված է 4 բաժնից՝ դաշնամուրային մանրանվագներ, այդ թվում՝ «Երևանյան էտյուդների» փոխադրումը 4 ձեռքի համար, ջութակի և դաշնամուրի, թավջութակի և դաշնամուրի համար գրված երկեր և գործիքային անսամբլներ:

4-րդ հատորը ներկայացնում է երգերի և ռոմանսների նվագախմբային պարտիտուրներ, ինչպես նաև Բարկարդուան թավջութակի և նվագախմբի համար:

5-րդ հատորում ընգրկված են վոկալ-սիմֆոնիկ գործերի պարտիտուրներ, 6-ում և 7-ում՝ սիմֆոնիկ կտավների պարտիտուրներ, 8-ում՝ «Այմաստ» օպերայի 2 սիմֆոնիկ սյուիտները և «Դավաճանություն» սիմֆոնիկ պատկերը:

9-րդ հատորը ներկայացնում է փոխադրումներ դաշնամուրի 4 ձեռքի համար, կատարված հենց կոմպոզիտորի կողմից, բացի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերից, որի փոխադրման հեղինակը Մաքսիմիլիան Շտայնբերգն է:

10-րդ հատորում առաջին անգամ հրատարակվեց «Այմաստ»-ի կլավիրը: Այն կազմելիս խմբագիրն օգտվել է բոլոր հնարավոր տարբերակներից՝ ձեռագրերից և պատճեններից, որոնք պահպանվում են Գրականության և արվեստի թանգարանում, օպերային թատրոնի գրադարանում և Մարինա Սպենդիարյանի արխիվում: «Այմաստ»-ի կլավիրը դեռևս 1930 թ. կազմել էր կոմպոզիտոր Վասիլի Կալաֆատին: Տվյալ հատորում տեղ է գտել Սպենդիարյանի հավանությանն արժանացած ռուսերեն տեքստը, որն Ակադեմիայի արվեստի ինստիտուտի հանձնարարությամբ թարգմանել է բանաստեղծ Պարույր Միքայելյանը: Կալաֆատի կլավիրն ուներ թերություններ՝ երաժշտական նյութի բարդացում, դաշնամուրային ֆակտուրայի անհարմարություն, որոշ անճշտություններ նուստներում: Նյութը հեղինակային տեքստին մոտեցնելու համար տվյալ կլավիրը կազմել է ինքը՝ Բուդաղյանը:

մանալի կերպարային, ոճական և կառուցվածքային վերլուծությունը, որը զեկույցի ձևով ներկայացրեց ուսումնասիրության հեղինակը՝ Բուդաղյանը:

1951 թ., կոմպոզիտորի ծննդյան 80 ամյակին նվիրված հանդիսավոր նիստին, Բուդաղյանը հանդես եկավ «Ալեքսանդր Աֆանասիչ Սպենդիարովի կյանքը և ստեղծագործությունը» խորագրով բովանդակալի զեկույցով: Սպենդիարյանի արվեստի հարուստ շերտերի բացահայտմանն էին ուղղված նաև մեծ երաժշտի մի շարք հոդվածները զանազան պարբերականներում: Ավելի ուշ, Բուդաղյանն ամբողջացրեց մի ծավալուն և մանրակրկիտ ուսումնասիրություն՝ «Դիտարկումներ Սպենդիարովի կողմից «Ալմաստ» օպերայի գործիքավորման վերաբերյալ» խորագրով («Заметки об инструментовке А. А. Спендиаровым оперы “Алмаст”»): Աշխատանքն իրագործվել է դիրիժորի կյանքի վերջին շրջանում և հանդիսանում է երաժշտական-թատերական այս կտավի շուրջ իր բազմամյա մտորումների հանրագումարը: Այն ընդգրկում է կոմպոզիտորի գործիքավորած 3 գործողությունները՝ կից հազեցած նոտային օրինակներով ամենայն մանրամասնությամբ վերլուծելով նվագախմբային տարրերը, կառուցվածքը, դրամատուրգիական զարգացումը և այդ ամենը՝ դիրիժորի և խորաթափանց հետազոտողի մեկնաբանությամբ:

Բուդաղյանն իր հետազոտական աշխատանքներում անդրադարձել է նաև այլ ակնավոր գործիչների: Նրա խմբագրությամբ հրատարակվել են Ռոմանոս Մելիքյանի «Ձառ-վառ» և «Ջերմիտա» վոկալ շարքերը: Նա նաև սկսել էր նախապատրաստել Ռ. Մելիքյանի երկերի լիակատար ժողովածուն, որը, ցավոք, մնաց անավարտ: Մեծ է Գ. Բուդաղյանի ավանդը «Խորհրդային Հայաստանի երաժշտությունը» ֆունդամենտալ աշխատության պատրաստման գործում: Եվ վերջապես, մեծ և պատմական արժեք են ներկայացնում նրա հուշերը Սպենդիարյանի, Կոնստանտին Սարաջևի, Մոսկվայի հայ երաժիշտների մասին: Մինչև կյանքի վերջին շրջանը նա շարունակել է անխոնջ գործիչ բազմակողմանի աշխատանքը:

Գ. Ե. Բուդաղյանը նաև հասարակական և պետական գործիչ էր, մասնավորապես՝ չորս անգամ ընտրվել է քաղաքային և շրջանային սովետների դեպուտատ: Մահվանից հետո նրա նվիրյալ գործունեությունը շարունակեցին կիներ՝ Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Նինա Սադիյանը, որդին՝ երաժշտագետ, պրոֆեսոր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Բուդաղյանը և դուստրը՝ լեզվաբան Ալմա Բուդաղյանը:

1992 թ. Բուդաղյանի անվամբ կոչվեց Ավանի թիվ 1 երաժշտական, այժմ՝ արվեստի դպրոցը: Երևանի Թումանյան փողոցում կա Գ. Բուդաղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ:

1967-ին բացվեց Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանը: Գ. Ե. Բուդաղյանն իր հուշերում գրում է, որ անձնական ոչ մեծ արխիվից թանգարանին է փոխանցել կոմպոզիտորին ամնչվող որոշ փաստաթղթեր և անձնակազմին ուղղել ողջույնի նամակ: «...Հավատում եմ, որ տուն-թանգարանը կդառնա ոչ միայն հայտնի և ժողովրդի կողմից սիրված կոմպոզիտորի անվան հանրայնացման օջախ, այլ նաև Սպենդիարովի ստեղծագործական ժառանգությանը և հարուստ երաժշտահասարակական գործունեությանն ամնչվող նյութերի հավաքման և հետագա գիտական մշակման կենտրոն» (2. էջ 54): Մեծ արվեստագետի այս բաղձանքն ու պատգամը մշտապես պարտավորեցնող է սպենդիարյանական գողորիկ օջախի համար, միաժամանակ՝ յուրատեսակ ուղեցույց:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Պետրոսյան Մ. Հ., Երեքը հայ դիրիժորներից, Եր., 1976 թ.: Petrosyan M. H., Yereq hay dirizhonerit., Yer., 1976 t.
2. Будагян Г. Е., Со Спендиаровым., Страницы воспоминаний., Ер., 1999. Budagyan G. E., So Spendiaryovym., Stranitzy vospominanij., Yer., 1999.
3. Берко М. А., Геворк Будагян., Ереван., 1989. Berko M. A., Gevork Budagyan., Yer., 1989.
4. /К. С. Сараджев и московский самодеятельный симфонический оркестр его имени., (сост.-ред. Будагян А. Г.), Ер., 2002. /K. S. Saradjev i Moskovskij samod-eystel'nyj simfonicheskij orkestr ego imenii., (sost. i red. Budagyan A. G.), Yer., 2002.
5. Ա. Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-11, (խմբագիր՝ Գ. Ե. Բուդաղյան), Եր., 1943-1988 թթ.: A. Spendiaryani yerkeri liakatar zhoghovatsu, hat. 1-11, (khubagir: G. Budagyan), Yer., 1943-1988 thth.

**Բանալի-քառեր.** Գևորգ Բուդաղյան, Ալեքսանդր Սպենդիարյան, սիմֆոնիկ և օպերային դիրիժոր, հրատարակիչ:

**Ключевые слова:** Геворк Будагян, Александр Спендиарян, симфонический и оперный дирижер, издатель.

**Keywords:** Gevorg Budaghyan, Aleksander Spendiaryan, orchestra conductor, opera conductor, publisher.

# Գ. Բուդաղյանի ծննդյան 120-ամյակին նվիրված

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՀԱՄԲԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍԻ (ծ. 31.10.1984թ., ք. Երևան), երաժշտագետ, լրագրող: 2008թ. ավարտել է Կոմիտասի անվ. ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (սլոն. ֆետր Ս. Բ. Ամատունու մասնագիտական դասարան): 2008-2009 թթ. «Հայրենիք» հեռուստաընկերության «Մեղեդի» հաղորդաշարի շրջանակներում հանդես է եկել՝ որպես օգնական: 2009-2012 թթ. աշխատել է ԵՊԿ հրատարակչությունում՝ որպես «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր: 2009-ից սկսած հեղինակել է երաժշտական և մշակութային թեմաներով մի շարք վերլուծական և տեղեկատվական հոդվածներ, հարցազրույցներ երաժիշտների և մշակութային գործիչների հետ, երաժշտական գրքերի գրախոսականներ: 2015-2017 թթ. աշխատել է «ՎԵՄ» ռադիոկայանում՝ որպես ձայնադարանի ավայնացման օպերատոր, երաժշտական խմբագիր, դասական և ժամանակակից երաժշտությանը վերաբերող բողոսականների տեքստերի հեղինակ: 2018-ից մինչ օրս աշխատում է Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանում՝ որպես գիտաշխատող:

**Сведения об авторе:** ГАМБАРЯН АСМИК САРКИСОВНА (р. 31.10.1984г., Ереван), музыковед, журналист. В 2008 г. окончила музыковедческое отделение ЕГК имени Комитаса (класс профессора С. Б. Амадуни). С 2008 по 2009 являлась ассистентом музыкальной передачи "Meghedi" в телекомпании "Hayrenik". С 2009 по 2012 работала в Издательстве ЕГК как главный редактор газеты "Yerajisht". Начиная с 2009 написала ряд аналитических и информационных статей по темам "музыка" и "культура", интервью с музыкантами и деятелями культуры, обзоры музыкальных книг. С 2015 по 2017 работала в радиокomпании "VEM" как оператор оцифровки фонотеки, музыкальный редактор, автор текстов программ о классической и современной музыке. С 2018 по сей день научный сотрудник Дома-музея А. Спендиаряна.

**Information about the author:** HAMBARYAN HASMIK SARGIS (born 31.10.1984, Yerevan), musicologist, journalist. In 2008 graduated from the department of musicology of the YSC (class of professor S. Amatuni). From 2008 to 2009 was the assistant of the TV program "Meghedi" at the TV company "Hayrenik". From 2009 to 2012 worked at the publishing house of YSC as the editor in chief of the monthly newspaper "Yerajisht". From 2009 starts to write several articles on musical and cultural themes - analytical and informational articles; interviews with musicians and cultural figures; music books reviews. From 2015 to 2017 worked at the radio company "VEM" as an operator of digitization of the music library; music editor; author of the texts of the broadcasting programs about classical and contemporary music. Since 2018 till today works at the house-museum of A. Spendiaryan as a scientific worker.

## **Резюме**

Научный сотрудник Дома-музея А. А. Спендиаряна, музыковед **Асмик Саргисовна Гамбарян**. - **“Геворг Будагян - 120: многогранный путь непревзойденного спендиароведа”**.

В статье автор представляет исторический и аналитический обзор многогранной и плодотворной деятельности Георгия Ервандовича Будагяна – Народного артиста Армянской ССР, дирижера, музыковеда-исследователя и публициста, профессора и, наконец, уникального спендиароведа. Каждая сфера деятельности Г. Е. Будагяна детально изучена отдельно: жизненный путь и становление артиста и ученого, начало деятельности в Москве, а затем – переезд на историческую родину и служение армянской музыке. Разделы статьи - педагогическая, научная и организаторская деятельность Георгия Ервандовича в ЕГК; путь дирижера симфонических концертов; Будагян как оперный дирижер; сценическая история оперы “Алмаст” под руководством Георгия Ервандовича; составление редакции и премьеры балета “Хандут” на основе музыки Спендиаряна; Будагян и Дом-музей А. А. Спендиарова. Особое внимание уделено подготовке к печати полного собрания сочинений Спендиаряна: будучи непревзойденным спендиароведом, эту миссию смог реализовать именно Георгий Ервандович.

## **Summary**

Scientific worker of House- museum after Alexander Spendiaryan, musicologist **Hasmik Sargis Hambaryan**. - **“Gevorg Budaghyan 120: the multiple career of the unsurpassed researcher of Spendiaryan's art”**.

In this article, the author represents historical and analytical review of the universal and prolific activity of Georgy Budaghyan - People's Artist of the Armenian SSR, conductor, musicologist and publicist, professor and a unique researcher of Spendiaryan's art. Each sphere of the activity of G. Budaghyan is learned separately in details: his way of life and of the becoming of the artist and scientist, the beginning of the activity in Moscow, and then his moving to the historical Motherland and serving the Armenian music. The parts of article represent the pedagogical, scientific and organizational activity of G. Budaghyan at the Yerevan State Conservatory; his way of conductor of symphonic concerts; Budaghyan as operatic conductor; history of the staging of the opera "Almast" under the baton of G. Budaghyan; the edition and premiere of the ballet "Khandut" based on the music of Spendiaryan; Budaghyan and the House-museum of A. Spendiaryan. The special attention is paid on Budaghyan's preparation for the publication of Spendiaryan's Complete Works: being the unsurpassed researcher of Spendiaryan's art, he exactly was able to realize this mission.

**НАЗЕНИК  
ГАГИКОВНА САРГСЯН**

*Доктор искусствоведения, ведущий научный сотрудник  
Института искусств Национальной академии наук Республики Армения*

E-mail: nazeniks@gmail.com

**ПРИМА–БАЛЕРИНА**

**(к юбилею народной артистки Армении Эльвиры Мнацаканян)**

“Золотой век” армянского балета, который охватывает период с начала 1960–х до конца 1980–х годов, и исполнительская деятельность народной артистки Армении Эльвиры Мнацаканян – примы–балерины Театра оперы и балета им. Спендиарова неотделимы.

Этот факт еще более усугубляется тем обстоятельством, что, начиная со дня образования балетной труппы Театра им. Спендиарова в начале 1930–х до середины 1960–х годов, положение ведущих солисток занимали русские по происхождению балерины – Народные артистки Арм. ССР Любовь Воинова–Шиканян, Русудан Тавризян (Романова), Людмила Семанова. Правда, у нас были прекрасные ведущие солистки–армянки: народные артистки Арм. ССР Сильва Минасян, Тереза Григорян, Белла (Лоретта) Овнанян, заслуженные артистки Армении Елена Араратова, Анна Марикян, а также Жасмина Бабаханян, Белла Худинян. Каждая из них внесла большой вклад в сценическое искусство армянского балета.

Однако в аспекте разнообразия репертуара, количества ведущих партий, владения мастерством техники классического танца “столичного” уровня Эльвира Мнацаканян стала первой примой–балериной, армянкой по происхождению.

Родители мечтали видеть свою младшую дочь, Эльвиру, пианисткой. Хотя мама, Ася Барсеговна, очень любила театр и с пяти лет Эльвира уже была постоянной зрительницей балетных спектаклей. Это был период, когда на сцене Театра им.Спендиарова блистали Любовь Воинова–Шиканян, Русудан Тавризян, Сергей Саркисов, Георгий Георгианц, Елена Араратова. С 5–6 лет Эльвира уже надевала маленькую пачку и дома “танцевала” все балеты, которые видела в театре. Но родители уже определились и отдали дочь в Музыкальную десятилетку. В те годы Музыкальная десятилетка им.П.И.Чайковского располагалась на углу проспекта Сталина (ныне – Месропа Маштоца) и улицы Амиряна. Десятилетка – на втором этаже здания, а в полуподвальном помещении – Ереванское хореографическое училище. Где–то в конце третьего класса Эльвира сделала свой первый самостоятельный шаг – приняла участие в приемных экзаменах в

Хореографическое училище. И поступила. И таким образом определила свою судьбу. В четвертом классе она еще, правда, пыталась совмещать обучение в обоих учебных заведениях, однако, в конце концов пришлось “определиться”. И Эльвира продолжила обучение в хореографическом училище. “Я победила!” – говорит она сейчас.



*Эльвира Мнацаканян*

Уже на втором году обучения она приняла участие во Второй декаде армянского искусства в Москве, исполнив сольную партию в “Танце снежинок” из балета “Щелкунчик” в постановке С. Саркисяна. Уже тогда ее заметили педагоги Московского хореографического училища и предложили матери Эльвиры (а она всегда сопровождала свою талантливую дочь) перевести девочку в московское училище. Ася Барсеговна не могла даже вообразить, что оставит любимую дочку в интернате при училище. Эльвира на сей раз не победила и вернулась в Ереван. Правда, с первых же лет обучения в Ереванском хореографическом училище Эльвира, безусловно, находилась в центре внимания. Она с благодарностью сейчас вспоминает своих первых педагогов: Римму Хачикян, которая “поставила ее в первую позицию” и Сильву Агароновну Овнанян, у которой училась во II–III классах (по отсчету годов обучения, I класс хореографического училища соответствует IV классу общеобразовательной школы, II класс – V и т.д.). В тот период ведущими педагогами училища были двое. Александра Даниловна Боганькова окончила в начале 30–х г. Ленинградское хореографическое училище и была направлена в Ереван. Она вошла в только что сформированную балетную труппу Театра им. Спендиарова, где танцевала далеко не первые партии. Но главное – она была высококвалифицированным педагогом. Другим ведущим педагогом была Дина Николаевна Гацина, представительница

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շազոյանի՝ 14.2.2020 թ., ընդունվել տպագրության՝ 25.11.2019 թ., ներկայացրել է հեղինակը՝ 2.2.2020 թ.

Московской школы. Благодаря им, к концу 50-х и особенно с начала 60-х годов труппа ереванского театра пополнилась талантливыми танцовщиками, силами которых балет в Армении достиг первой ступени своего расцвета, продолжившегося до конца 80-х годов. С 1961 года весь класс Александры Даниловны за два года до окончания уже был зачислен в кордебалет театра. Правда, Эльвира уже с пятого класса выступала и в кордебалете театра, и с сольными номерами в отчетно-выпускных концертах. Мама, очень сильно опекавшая Эльвиру (она даже устроилась в училище преподавать предмет “Ручной труд”), тщательно собирала все рецензии в периодической печати, в которых писали об одаренной ученице Ереванского хореографического училища и наклеивала их в специальный альбом. Перелистаем этот альбом. Газета “Коммунист” от 4 июля 1961 года. В рецензии на отчетно-выпускной концерт помещена фотография Эльвиры Мнацаканян, подписанная “Танец “Примирение” на музыку Грига исполняет студентка II курса (т.е. перешедшая на второй курс. – Н. С.) Э. Мнацаканян”(1). Жаль, что эта фотография не сохранилась в своем подлиннике и нет возможности опубликовать ее. Эльвира Мнацаканян запечатлена в высоком *attitude*. Корпус плавно и гибко клонится в *port de bras* назад, правая рука перекинута через голову. Уже на этой достаточно ранней фотографии запечатлен настолько поэтический образ Эльвиры, настолько точно выражена одна из главных ее черт – лиричность, пластичность... надо полагать, неверно то мнение, что индивидуальность формируется с годами. На этой фотографии индивидуальность Эльвиры вполне выражена. В этой же статье можно прочесть: “Очень хорошее впечатление оставила студентка II курса Эльвира Мнацаканян (“Умиравший лебедь” Сен-Санса), движения пластичны и пленительны” (1). “Пластичны и пленительны” – более точные эпитеты, характеризующие балерину Мнацаканян, трудно подобрать. В другой газете в рецензии на тот же концерт отмечено: “В памяти запечатлелся “Умиравший лебедь” в исполнении учащейся II курса Эльвиры Мнацаканян” (2). А следом в альбоме – третья рецензия на тот же концерт. И снова: “В хореографических номерах “Умиравший лебедь” (музыка Сен-Санса) и “Примирение” (музыка Грига) выступила студентка II курса Эльвира Мнацаканян. Как видно, выражение драматических состояний души средствами балета является предпочтением учащейся. Для этого у нее достаточно способностей, особенно выразительны (по-армянски, буквально “говорящи”) ее руки” (3). Перевернем еще страницу альбома, и снова: “...Лебедь умирает. Легко, воздушно скользит он по глади воды и поет свою последнюю песню... И белые крылья, бессильно трепещущие, стремятся взлететь. Во взлете умирает лебедь. Грაციозно опустилась голова на крыло, другое ослаблено легонько встрепенулось, и песня смолкла... Круг света на мгновение застыл над лебедем и погас... Затем сцена сразу осветилась, застывший зал взорвался аплодисментами” (4). Это тоже об Эльвире. На следующей странице фотография – Майя Плисецкая поздравляет ар-

мянских танцовщиц. Это рецензия о гастрольях Ереванского театра оперы и балета в Сочи, где был показан балет “Спартак” в постановке Евгения Чанги. И фотография – Майя Плисецкая стоит в окружении армянских танцовщиц, в их числе и Эльвира Мнацаканян. А ведь Эльвира только что перешла на II курс хореографического училища (5). Дальше анонс в рубрике “В мире искусства” в газете “Ерекоян Ереван” (“Вечерний Ереван”) об отчетно-выпускном концерте Ереванского хореографического училища. На фотографии – Эльвира Мнацаканян в па-де-де из балета “Щелкунчик”. Это уже предпоследний класс. Далее, июнь 1962-го, гастроль театра в Баку. “И если уж говорить о юности, то все хореографические номера исполнялись исключительно молодыми танцовщиками. Вот Вилен Галстян с его высоким прыжком, благородной осанкой вызывает восхищение в темпераментном танце с факелами из балета А.Хачатуряна “Гаянэ”. И рядом с ним выступает со своим трудным номером выпускница хореографического училища Эльвира Мнацаканян. “Умиравший лебедь” – дипломная работа одаренной балерины. Строгие экзаменаторы – бакинские зрители, восторженно приняли эту работу Эльвиры, поставив ей высокую оценку своими дружными аплодисментами. Пленяет грацией, изяществом движений Бэла Овнанян, удостоенная звания лауреата VI Всемирного фестиваля молодежи в Москве. Словно огромные фантастические цветы расцвели перед глазами зрителей – балетная труппа театра исполняет поэтическую сцену из балета Спендиарова “Хандут”. Солистами здесь выступают Людмила Семанова, Сильва Минасян, Вануш Ханамиян. С интересом смотрелись хореографическая “Мелодия” (Жасмен Бабаханян, Меружан Саакян и Зарик Мурадян) <...> (6). Мы специально привели довольно большой фрагмент из статьи. Дело в том, что упомянутые в статье балерины и танцовщики – это ведущие танцовщики и балерины (В. Галстян, В. Ханамиян, Л. Семанова, С. Минасян) Театра оперы и балета им. Спендиарова или, по крайней мере, солисты театра. Все, кроме Эльвиры Мнацаканян, которую называют “выпускницей”, тогда как летом 1963 г. Эльвира только перешла в выпускной класс хореографического училища. И вот, наконец, выпускной спектакль. Впервые силами хореографического училища представлен балет “Жизель”. В главной роли – Эльвира Мнацаканян. В роли Альберта – уже ведущий танцовщик театра – Вилен Галстян.

Еще в январе 1962 г. газета “Авангард” пишет: “Очень трудно поставить (силами училища. – Н.С.) большие фрагменты из классических балетов, но училище с большим энтузиазмом работает над полной постановкой балета “Жизель”. Главные роли в балете исполняют ученицы выпускного класса (Жизель – Эльвира Мнацаканян, Мирта – Лариса Митяй)” (7). Заслуженный педагог республики Александра Даниловна Боганькова, подготовившая немало солисток нашего балета, неслучайно выделяла Эльвиру Мнацаканян среди своих учениц. Ведь именно благодаря ей в 1963 году Ереванское хореографическое училище на выпускном спектакле впервые за всю свою историю пока-



*“Шопениана” – Сергей Баранов (Юноша),  
Эльвира Мнацаканян (Сильфида).  
Ереванский государственный театр оперы  
и балета им. Спендиарова*



*Г. Егиазарян  
“Ара прекрасный и  
Шамирам” –  
Ованес Диванян  
(Нинос), Эльвира  
Мнацаканян (Шамирам).  
Ереванский  
государственный театр  
оперы и балета им.  
Спендиарова*

зало балет “Жизель” целиком, а выпускница Мнацаканян исполнила заглавную партию. Партнером ее на том спектакле был молодой ведущий танцовщик театра Вилен Галстян. Однако не только Боганькова считала Эльвиру своей блестящей ученицей. Знаменитая ученица выдающегося педагога А. Я. Вагановой – Наталия Дудинская в 1971 году, возобновляя балет “Лебединое озеро” на сцене Театра им. Спендиарова, уделяла Эльвире особое внимание, давала ей отдельные уроки, а когда в 1972 году в Ленинграде снимался фильм “Класс Дудинской”, пригласила ее на съемки в качестве представительницы своей школы. Занятия с Дудинской, безусловно, передали Мнацаканян традиции Санкт–Петербургской–Ленинградской школы – отточенность техники, отшлифованность па, *bel canto* движений рук, плавность перехода из одного движения в другое.

И вот в апреле балет исполнен. *“Вот из двери выглядывает еще девочка для балетного искусства – Эльвира Мнацаканян. Вначале ее движения нежны, скромны, а в сцене сумасшествия достигают кульминации. Эльвира наделена всеми данными, необходимыми артистке балета – красивая ступня, нежность, богатый внутренний мир – комплекс, не всегда встречающийся. Ее соло, адажио с Альбертом (па–де–де), дуэт во втором акте восторженно были встречены зрителями”* (8). В журнале “Советакан арвест” от 1963 года рецензент также отмечает, что *“Эльвира Мнацаканян преодолела трудности партии, один за другим легко и нежно исполнив танцы. Балерина очень лирична, не скована, хорошо владеет сценическими выразительными средствами. Она имеет все данные стать хорошей балериной”* (9).

Казалось бы, можно примерить роль примы–балерины. Но нет...

Изначально причисленную к категории балерин “лирического плана” Эльвиру Мнацаканян главные балетмейстеры 60–начала 70–х годов Театра им. Спендиарова, видя в ней потенциально ведущую балерину, пытались раскрыть ее в других амплуа. Евге–

ний Чанга включал ее во все “испанские” фрагменты своих постановок. Возможно зрители, видевшие в 1963 году оперу “Господин Минтоев в Париже” А. Айвазяна, были немало удивлены, увидев юную Мнацаканян в паре с ярким танцовщиком характерного плана Виктором Борисовым в “Испанском танце”. Традиции Чанги продолжил сменивший его на посту главного балетмейстера Максим Мартиросян, поручив Эльвире партию куртизанки Эгины в балете “Спартак”.

Дебютировав в партии Жизели в 1966 году, Эльвира Мнацаканян на протяжении тридцати трех лет оставалась ведущей балериной Театра им. Спендиарова. Перечисление всех балетов, в которых Мнацаканян исполнила заглавные партии, равносильно перечислению практически всего балетного репертуара театра с 1966 по 1999 г. А это почти сорок названий.

Творческий портрет Эльвиры Мнацаканян полностью соответствует определению “прима–балерина”. Это и природные данные, как танцевальные, так и актерские, привлекательная внешность, сценическое обаяние, высокий уровень владения техникой классической и современной балетной хореографии, способность выдержать большую репертуарную нагрузку, гибкость восприятия танцевального языка и стилистического “почерка” различных балетмейстеров, готовность к эксперименту и умение точно донести замысел хореографа до зрителя. И конечно же самобытность исполнительской манеры. Эльвира Мнацаканян работала со многими балетмейстерами – уже упомянутыми Е. Чангой, М. Мартиросяном, А. Гарибяном, Ю. Ждановым, М. Мнацаканяном, К. Сергеевым, О. Виноградовым, Н. Рыженко и В. Смирновым–Головановым, Г. Алексидзе, В. Галстяном... Но один хореограф сыграл особую роль в ее творческой биографии. И не только творческой. Можно, конечно, с полной уверенностью утверждать, что если бы в 1973 году, когда балерина уже имела звание заслуженной артистки республики, она не встретила бы балетмейстера Ашота Асатуряна, она все равно свою последую–

щую сценическую жизнь провела бы в статусе ведущей балерины. Но встреча с Асатуряном была судьбоносной. Эльвира стала не только женой балетмейстера, но и его соратницей, его актрисой, его Музой. “Лейли и Меджнун”, “Бессмертие”, “Симфония света”, “Героическая баллада”, “Дафнис и Хлоя”, “Тема с вариациями”, “Ара Прекрасный и Шамирам”, “Орфей”, “Щелкунчик”, “Симфонические танцы”. Десять балетов. Это далеко не все балеты, поставленные Асатуряном, но все, в которых образ героини был создан именно для Эльвиры. И возможно, самая яркая из этих героинь – Шамирам. Эльвиру всегда считали “лиричной”. Она и сама поначалу не очень верила, что справится. “Я сама себе казалась маленькой (по росту), а Шамирам представляла высокой, величественной!” Однако страсть, жестокость, неистовство, властолюбие, безудержное горе – все оказалось передано на самой высокой ноте... И, кажется, это был самый выразительный и запоминающийся образ, созданный в балете “Ара Прекрасный и Шамирам”. А лирика? Лирика только способствовала своеобразию интонирования бурных страстей...

В 1990 году Эльвира Мнацаканян закончила балетмейстерское отделение Санкт–Петербургской консерватории, где обучалась у знаменитого балетмейстера Петра Гусева и Никиты Долгушина. В 1994–1997 г., в то время, как Асатурян занимал пост главного балетмейстера в Украинском академическом театре оперы и балета им. Н. В. Лысенко в Харькове, Мнацаканян была ведущей балериной этого театра, исполняла главные партии в “Жизели”, “Дон Кихоте”, “Лебедином озере”, “Шопениане”, “Щелкунчике” и в последнем балете Ашота Асатуряна “Симфонические танцы” на музыку С. Рахманинова.

Она прекратила танцевать в мае 1999 года после того, как безвременно ушел из жизни ее муж, друг, балетмейстер Ашот Асатурян. Именно прекратила. Она не давала прощальных спектаклей с цветами и почестями.

В 1984 г., окончив Ленинградскую гос. консерваторию по специальности балетмейстер–репетитор (класс Н. Долгушина), она в настоящее время работает педагогом–репетитором балетной труппы Ереванского национального театра оперы и балета, а также преподавателем классического танца Ереванского хореографического колледжа.

В этой маленькой и хрупкой на вид женщине по сей день сохраняются присущие ей изначально энергия и умение добиваться поставленной цели. В 2011 г. преимущественно благодаря ее содействию (как в аспекте предоставления необходимого материала, так и в аспекте финансирования) была издана книга о ее безвременно ушедшем из жизни супруге – Ашоте Асату-

ряне (10). Это пока единственное исследование, посвященное деятелю армянского балета, изданное в Армении.

Сейчас народная артистка Армении Эльвира Мнацаканян передает свой богатый опыт молодежи, преподавая в хореографическом колледже и будучи репетитором в Национальном театре оперы и балета. И в танце ее учениц, выпускниц, танцовщиц, исполняющих партии Жизели, Фригии нет–нет да и узнаешь своеобразную пластику, жест, поворот головы, которые заставляют бывалого завсегдатая театра вспомнить то время, когда зрителя завораживала своей танцевальной кантиленой Эльвира Мнацаканян – наша прима–балерина.

ПРИМЕЧАНИЯ

1. *Вартанян В.*, Искусство юных.. //Коммунист., 4 июля 1961, № 154. Vartanyan V., Iskusstvo unykh., //Kommunist., 4 iyulya 1961, № 154.
2. *Մանուկյան Է.*, Ճանապարհն սկսվում է ծափերով, Եր., //Շոունմիստ, 1961, 14 հուլիսի, - 138: Manukyan E., Dchanaparhn sksvum ej tsaperov, Yer., //Kommunist., 1961, 14 hulis, № 138.
3. *Հակոբջանյան Վ.*, Ուրիշ էր այդ երեկոն, //Ավանգարդ, Եր., 1961, 24 հուլիսի, - 74: Hakobjanyan V., Urish ejr ayd yereko, //Avangard, Yer., 1961, 24 hulis, № 74.
4. *Մանուկյան Է.*, Բաժանված ծափեր, //Երևան, 1962, № 79: Manukyan E., Bazhanvats tsaper, //Yerevan, 1962, № 79.
5. *Հարությունյան Վ.* Գաստրոլային մանրանկարներ. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը Սոչիում, //Երեկոյան Երևան, 1961, 5 օգոստոսի, № 183: Harutyunyan V, Gastrolayin manrankamer. A. Spendiaryani anvan operayi ev baleti tatron' Sochiyum, //Yerekoyan Yerevan, 1961, 5 ogostosi, № 183.
6. Концерты дружбы. К окончанию гастролей театров им. А. Спендиарова в Баку и М. Ахундова в Ереване., //Бакинский рабочий., 1962, 12 июня, № 135. Kontzerty druzhby. K okonchaniyuastrolej teatrov im. A. Spendiarova v Baku i M. Akhundova v Yerevane., //Bakinskij rabochij., 1962, 12 iyunya, № 135.
7. *Փիլիպոսյան Հ.*, Համերգից առաջ, //Ավանգարդ, Եր., 1963, 14 հունվարի, № 9: Piliposyan H., Hamergitz araj, //Avangard, Yer., 1963, 14 hunvari, № 9.
8. *Գրիգորյան Թ.*, Անձանոթ անուններ «Ժիզել» բալետում, //Երևան, Եր., 1963, 14 ապրիլի: Grigoryan Th., Antsanot anunerr "Zhizel" baletum, //Yerevan, Yer., 1963, 14 aprili.
9. *Փիլիպոսյան Հ.*, Ներկայացումն աշակերտական չեր, //Սովետական արվեստ, Եր., 1963 թ.: Piliposyan H., Nerkeyatzumn ashakertakan cher, //Sovetakan arvest, Yer., 1963 th..
10. *Տարցյան Կ.*, Ашот Асатурян – хореограф последней трети XX века., Ер.: Амротз груп., 2011. Sargsyan N., Ashot Asaturyan - khoreograf poslednej treti XX veka., Yer.: Amrotz grup., 2011.

**Բանալի-բառեր.** Էլվիրա Մնացականյան, պրինս-բալերինա, Աշոտ Ասատուրյան. բալետ «Ժիզել». բալետ «Արա Գեղեցիկ և Շամիրամ»:

**Ключевые слова:** Эльвира Мнацаканян, прима-балерина, Ашот Асатурян, балет “Жизель”, балет “Ара Прекрасный и Шамирам”

**Keywords:** Elvira Mnatsakanyan, prima ballerina, Ashot Asaturyan, "Giselle", "Ara the Handsome and Shamiram".

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱԶԵՆԻԿ ԳԱԳԻԿԻ, արվեստագիտության դոկտոր, (ծ. 14.6.1954 թ. Երևան): Ավարտել է Երևանի Պարարվեստի պետական ուսումնարանը, գրադվել սպորտային և զեղարվեստական մարմնամարզությանը, 1975-ին՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանը, 1980 թ. (էքստեռն)՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժինը, 1983 թ.՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան («Երաժշտագիտություն» և «Թատերագիտություն» մասնագիտություններով), 2000-ին՝ Երևանի պետական համալսարանի հոգեբանության բաժինը: 1984-ից աշխատում է Հայաստանի ԳԱԱ արվեստի ինստիտուտում, որպես առաջատար գիտաշխատող: 1987-ին՝ Երևանի զեղարվեստական դաստիարակության հանրապետական կենտրոնում կազմակերպել է Երաժշտության և պլաստիկայի մանկական ստուդիա, որտեղ բեմադրել է մի շարք դասական օպերային և բալետային ներկայացումներ: Աշխատել է՝ 1992-1997 թթ. և 2002-2005 թթ. Մոսկվայի Դիմաբերապիայի ինստիտուտում (հոգեբերապիայի կենտրոն)՝ որպես պարի, այնուհետև՝ հոգեբերապետիկ այլ մեթոդների մասնագետ: Այդ տարիներին մշակել է պարային քերական հատուկ համակարգ: Հեղինակ է՝ հայ բալետին, երաժշտական թատրոնին, նաև հոգեբերապիայի հարցերին նվիրված 70-ից ավելի հոդվածների: 2011 թ. լույս է տեսել նրա «Ашот Асатурян - хореограф последней трети XX века» մենագրությունը, որը նույն փակագրին Հանրապետական մրցույթի «Լավագույն գիրք ժամանակակից մասին» անվանակարգում արժանացել է երկրորդ մրցանակի: Բազմիցս մասնակցել է արվեստի և հոգեբերապիայի հարցերին նվիրված հանրապետական, Ռ-Ֆ-ի և միջազգային գիտաժողովներին: Դասախոսություններով հանդես է եկել Մոսկվայի պետական համալսարանի հոգեբանության բաժնում: 2004-ից ՀՀ Կոմպոզիտորների միության անդամ է:

**Сведения об авторе:** САРГСЯН НАЗЕНИК ГАГИКОВНА (род. 14 июня 1954 г., Ереван), доктор искусствоведения, ведущий научный сотрудник Института искусств Национальной академии наук Республики Армения. Окончила: Ереванское государственное хореографическое училище (1969), Ереванское государственное музыкальное училище им. Р. Меликяна (1975), музыкальный факультет Ереванской государственной консерватории им. Комитаса (1980), аспирантуру Института Искусств Национальной Академии Наук РА по специальностям "Музыкальное искусство" и "Театральное искусство" (1983), факультет психологии Ереванского государственного университета (2000). Работала: в Московском институте маскотерапии (центр психотерапии) в качестве специалиста по танцевальной терапии, а затем и по другим психотерапевтическим методам, разработала особую систему танцевальной терапии (1992-1997 и 2002-2005), с 1984 года работает в Институте искусств НАН РА, где ныне является ведущим научным сотрудником. В 1987 организовала детскую студию "Музыки и пластики" в Республиканском центре эстетического воспитания (Ереван), где осуществила постановку ряда классических оперных и пластических спектаклей. Является автором более 70-ти статей по вопросам армянского балета, музыкального театра и психотерапии. В 2011 г. была опубликована ее монография "Ашот Асатурян - хореограф последней трети XX века", получившая вторую премию в номинации республиканского конкурса "Лучшая книга о современнике"(2011). Неоднократно участвовала в республиканских, российских и международных конференциях, посвященных вопросам искусства и психотерапии, читала лекции на факультете психологии МГУ. Член Союза композиторов Армении (с 2004).

**Information about the author:** SARGSYAN NAZENIK GAGIK (b. 1954 in Yerevan), PhD Doctor of Arts, Lead Researcher at the NAS of the RA. In 1969 she graduated from the Yerevan State Choreography College, in 1975 from Yerevan R. Melikian Music College and in 1980 from YSC, Department of Musicology. In 1983 N. Sargsyan completed postgraduate studies at YSC in Musical Art and Theatrical Art. In 2000 she graduated from the Department of Psychology of YSU. N. Sargsyan has been working at the Moscow Institute of Mask Therapy (psychotherapy) as a dance therapy specialist as well as other psychotherapeutic methods and developed a special dance therapy system (1992-1997 and 2002-2005). Since 1984 she is working at the Institute of Arts of the NAS of the RA as a Leading Researcher. In 1987 she has set up Children's Music and Dance Studio at the Republican Centre for Aesthetic Education and produced several opera and dance performances. N. Sargsyan is the author of more than seventy articles covering Armenian ballet, musical theater and psychotherapy. In 2011 she has published "Ashot Asaturyan. Choreographer of the Last Third of the 20th Century" monograph, which won the second prize in the Republican competition in "The Best Book About the Contemporary" nomination (2011). Her book reviews (9) were published in Yerevan, Moscow, Saratov, Kharkov, and Watertown. N. Sargsyan has repeatedly participated in republican, all-Russian, and international conferences on art and psychology, as well as lectured at the Faculty of Psychology at Moscow State University. Since 2004 she is a member of the Union of Composers of the RA.

**Ամփոփում**

Արվեստագիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԱԻ առաջատար գիտաշխատող **Նազենիկ Գագիկի Սարգսյան.** - «Պրիմա-բալետրինա (Նվիրվում է ՀՀ ժողովրդական արտիստ Էլվիրա Գուրգենի Մնացականյանի հոբելյանին):

Հայկական բալետի «սուկե դարը», որն ընդգրկեց 1960-1980-ականների վերջը և Հայաստանի Ժողովրդական արտիստ Էլվիրա Մնացականյանի դերասանական գործունեությունը՝ որպես Սպենդիարյանի անվ. Օպերայի և բալետի թատրոնի առաջին մենասպորտի, անբաժան են: 1966 թ. Էլվիրա Մնացականյանը 33 տարի անընդմեջ եղել է Սպենդիարյանի անվ. թատրոնի առաջատար պարուհի: Թվարկել այն բոլոր բալետները, որոնցում նա հանդես եկավ որպես գլավոր հերոսուհի, անհնարին է այն համագոր է 1966-1999 թթ. թատրոնի ամբողջ յաղագանկի թվարկմանը: Իսկ դա համարյա 40 անվանում է: Է. Մնացականյանն աշխատել է բազում բալետ-մայստերների հետ, սակայն հանդիպումն Ասատուրյանի հետ բախտորոշ էր. դառնալով բալետմայստերի թե կինը, թե մերձավոր ընկերը, թե մուսան: Տասից ավելի բալետ Աշոտ Ասատուրյանը բեմադրել է ի նկատի ունենալով Մնացականյանի պարային և դերասանական ոճը, ստեղծելով նրա համար բազմապիսի և դրամատիկ կերպարներ: Այժմ Հայաստանի ժողովրդական արտիստ Է. Մնացականյանը դասավանդում է Երևանի պարարվեստի պետական թղեջում, ինչպես նաև Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի պարուսույց-փորձավարն է:

**Summary**

PhD Doctor of Arts, Lead Researcher at the NAS of the RA, **Nazenik Gagik Sargsyan.** - *Prima ballerina (A Dedication to the Anniversary of Elvira Mnatsakanyan, Peoples Artist of Armenia).*

The "Golden Age" of Armenian ballet, spanning the period from the 1960s to the end of the 1980s, was inseparably linked to the creative work of Elvira Mnatsakanyan, the first soloist of the A. Spendiaryan State Opera and Ballet Theater, the People's Artist of Armenia. For thirty-three years, Elvira Mnatsakanyan was the leading ballerina of the Spendiaryan Theater. Would be impossible to list all the ballet performances where she was performing the leading roles. This would mean listing all the performances of the entire repertoire of the theater in 1966-1999, which included around forty titles. Elvira Mnatsakanyan has been working with many choreographers, however, the meeting with Asaturyan proved to be life changing. She became not only the choreographer's wife, but also his closest friend, and his muse. Ashot Asaturyan has created more than ten performances, taking into account Mnatsakanyan's dance and artistic style, with versatile and dramatic characters developed specifically for her. Today, Elvira Mnatsakanyan, the People's Artist of Armenia teaches at the Yerevan State Choreographic College, and is also a ballet master-tutor at the A. Spendiaryan Opera and Ballet Theater.



քանոնն է, հունարենն ձևափոխվել է դարձել՝ դանոն) և նրանց լարելու ձևերին, պարզ է դառնում, որ այս գործիքներից քնարը մետաքսալար է, սանդիորը՝ աղելար և պղնձալար, քանոնն աղելար և այլն. «Զի թե քնարն է, որ ունի զԺ-ն աղին ի լարս մետաքսեայ, եւ թե սանդիորն, որ է խ-աղիս ի թելս պղնձի, եւ թե դանոնն որ է հ-լարի, եւ թե արդ/ան/ոնն, որ է ճ-աղի ի թելս պղնձի...» (լարերի քանակը նշված է տառերով՝ Ա. Կ.): Եվ շարունակելով երաժշտական բազմապիսի գործիքների նկարագրությունը, հստակ զանազանում, մանրամասնում ու տարբերակում է նաև, թե դրանցից որն ունի բամբ ձայն, որը զրնգուն, մյուսը՝ թավ, իսկ հաջորդից՝ վերից վար ու վեր նվագելիս «քաղցրահնչող» ձայն է գալիս (կարելի է ենթադրել, որ *glissando*-ի նվագելածն է նկարագրված). «...-ի միանգամայն յորժամ շարժէ զկրնընդոցն ի վերուստ ի վայր ի վերայ լարից քաղցրահնչող ձայնն նուազարանին, առժամ այն ճանաչէ ի տարորոշ բազմութիւնս աղեսցն՝ թե ո՞րն է սուր, եւ որն է բութ, որն զիլ, եւ որն բամբ, որն սուղ եւ որն երկար, որն թոյլ եւ որն պինդ»։ Ի դեպ, երբ նկարագրության մեջ ասվում է 10... 40 ... 70... լարանի, նշվում է ոչ թե հնչյունների, այլ լարերի քանակը։

Ազգային երաժշտական գործիքների, մասնավորապես քանոնի ծագումը կապված է հեռավոր և մոտավոր Արևելքի Ք. Ծ. ա. II հազարամյակի հետ։ Վերևում արդեն հիշատակվեց, որ ըստ Ն. Կ. Թահմիզյանի, դա ազգային երաժշտական գործիքների գոյության մոտավոր տարեհիշն է համարվում (5. էջ 3, Ավետիսյան Խ. Մ., Առաջաբան [հեղ. Նիկողոս Թահմիզյան])։ Նրա համոզմամբ, V դարում Աստվածաշնչի թարգմանությունից հետո հայտնի դարձած «սաղմոսարան» կամ «տասնադի սաղմոսարան» գործիքները հայոց կյանքում եղել ու հարատևել են մինչև միջին դարերը։ XV - XVI դարերի հայ մանրանկարիչների պատկերած դրվագները ցույց են տալիս, որ ուշ միջնադարում Հայաստանում տարածված են եղել անկոթ բազմալար, լարային կոթավոր նվագարաններ։ Այսինքն, հայ ժողովուրդը դեռ հազարամյակներ առաջ գործիքային արվեստի այս նմուշներն ունեցել ու պահպանել է մինչև ուշ միջնադար, սպա նաև մինչ մեր օրերը։ Հայ մանրանկարիչների պատկերած առաջին դրվագը՝ Գավիթ Մարգարեն է՝ սաղմոսարանը ծնկներին նվագելիս (6. էջ 4ր., նկ. 1) (հայտնի է, որ այս գործիքի մասին հիշատակվում է «Աստվածաշնչում»)։

Երկրորդ նկարում (XVI - XVII դդ. հայ հեղինակի մանրանկարից է) պարզ պատկերված է ազգային տարատեսակ գործիքների տիրապետող մարդկանց խումբ՝ (7. էջ 242) նվագելիս, ինչը նաև նվագախմբի գոյության փաստ է։ Հետաքրքրական է, որ պատկերին ուշադիր նայելիս, զարմանալի դրվագ է ուրվագծվում։ Պարզ երևում է, որ խմբի առաջին շարքում նստած նվագածուն քանոնահարն է։ Այս գործիքն իր արտաքին կառուցվածքով քանոնատիպ է. անկոթ է և բազմալար, նվագելանուն էլ քանոնային է, ինչն ակնառու է ձեռքերի հստակ դրվածքից։ Հաջորդ շարքերում քնարահարն է, քամանչահարն ու փողայինները, որոնց թիկունքում մարդկանց երկու շարք է պատկերված։ Կարելի է են-


թադրել, որ դա էլ երգող խմբի պատկեր է։ Իսկ եթե ավելի հեռուն գնանք մեր եզրակացություններով, դրվագը՝ նվագող-նվագակցող ազգային գործիքների և երգող խմբի համադրություն է պատկերում։

Եթե շարունակենք դարերի հերթականությամբ թվարկել, սպա XVIII դարի Գրիգոր Գապասաքալյանը նկարագրում է սաղմոսարանն ու բազմալար քնարը (8. էջ 176-177)։ XIX դարում Ա. Հիսարյանը ներկայացնում է պոլսահայ հայտնի քանոնահարներ Քանունի Մաքսուտին և Քանունի Համբարձումին, ովքեր իրենք էին պատրաստում իրենց գործիքները (9. էջ 174-179)։ XX դարակգրին Գ. Լևոնյանը գրում է գուսանների և նրանց գործիքներ պատրաստողների մասին. «Հայ քնարի ինչպես ածողները, այնպես էլ շինողները, բացառապես տաճկահայ աշուղ վարպետներ են» (10. էջ 97-105)։ Այս շրջանում Հայաստանում դեռ կային քանոնահար-վարպետներ, ովքեր իրենք էին պատրաստում իրենց գործիքները։ Այդօրինակ վարպետներից էին Հայաստանի Ռադիոյի և հեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլի քանոնահարներ՝ Չավեն Տերմենջյանն ու Նշան Հուպյանը, ովքեր ծագումով Արևմտյան Հայաստանից էին։ Տողերիս հեղինակը հիշում է վարպետներին, որովհետև երաժշտական դպրոցում սովորելիս իմ առաջին քանոնը Նշան Հուպյանի պատրաստածն էր, իսկ երկրորդ գործիքը՝ Չավեն Տերմենջյանի։ Այնուհետև, 1979-ից՝ Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլում աշխատելու տարիներին, առիթներ են ունեցել անձնապես լսել նրանց և նաև Պարի պետական անսամբլի քանոնահար՝ Լևոն Ալանակյանի նվագը։ Ուսումնասիրել են նրանց նվագելանը, կատարման տեխնիկան, ինչպես Արևմտյան Հայաստանից ներգաղթած բոլոր երաժիշտ-քանոնահարներին՝ տարբերվում էր։ Հետագայում տողերիս հեղինակը դարձավ նրանց ժառանգորդը՝ երրորդ սերունդը Ա. Մերանգուլյանի անվան անսամբլում (11. էջ 109)։

Պատմական բարդ ժամանակաշրջանները հայ ժողովրդի կյանքին ու գործունեությանը խոչընդոտելուց բացի, բնականաբար անբարենպաստ են եղել նաև արվեստի ու գրականության համար։ Այդ պատճառով ժամանակ առ ժամանակ ընդհատվել է կապը ժամանակագիրների ու իրական կյանքի իրադարձությունների միջև։ Հայ իրականության մեջ տեղի ունեցող արհավիրքները նպաստել են շատ ու շատ կարևոր ազգային արժեքների կորստին, երբեմն էլ հարցականներ դրել անգամ դրանց գոյության փաստի վրա։

Պատմությունն այն մասին, թե՛ 1915 թվականին Հայաստան աշխարհի երկատվելուց հետո քանոն նվագարանի կենսագրությունն ինչպես դասավորվեց, հետևյալն է. Վանից՝ առաջին քանոն նվագարանն իր հետ Հայաստան է բերել Գարեգին Խանիկյանը։ Եղեռնապորժ հայը 1915 թվականին հաստատվել է նախ Արտաշատ քաղաքում, այնուհետև տեղափոխվել է Երևան։ Քանոնահար և սանթորահար Գարեգին Խանիկյանն սկզբում աշխատել է Վարդան Բունու Արևելյան գործիքների նվագախմբում, այնուհետև Ժողովրդական գործիքների նվագախմբում (գեղարվեստական

# Ժողովրդական գործիքային արվեստ



Գեղարքունիք, Հացառատ,  
XX դարի տապանաքար, նկ. 1



Նվագողների խումբ, նկ. 2




Դավիթ մարգարեն տավիրը  
ծնկների (XVI - XVIIդդ.), նկ. 3




Հայ քանոնահար Արամայում,  
նկ. 4



Գուսան Շահեն, նկ. 6




Քանոն, 52 լար, հնչյունաշար՝ 2 օկտավ, նկ. 7



Քանոն, 72 լար, առանց կաշվե երես, նկ. 8




Ջավեն Տերմենջյան, նկ. 5



Քանոն, 78 լար, հնչյունաշարը՝ մեծ օկտավայի Սոլ-ից  
մինչև 3-րդ օկտավայի մի-ն, նկ. 9



Քաս քանոն, նկ. 11



Քանոն, 81 լար, հնչյունաշարը՝ մեծ օկտավայի Սոլ-ից  
մինչև 3-րդ օկտավայի ֆա-ն, նկ. 10

# Ժողովրդական գործիքային արվեստ

ղեկավար՝ Արամ Մերանգույան) և ապա Ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլում (գեղարվեստական ղեկավար՝ Թաթուլ Ալթունյան):

Այսպիսով, անդրադառնալով ավելի ուշ ժամանակաշրջանին, կարևոր է նշել, որ 1915 թվականի հայտնի իրադարձություններից հետո, երբ հայ ժողովուրդը եղեռնապարտ ստիպվեց ամբողջ աշխարհով, տարանջատվեցին ու կորսվեցին արժեքներ, որոնց պատասխիկները մինչև հիմա ի մի են բերվում: Բնականաբար, այս ամենը չէր կարող չառնչվել գործիքային արվեստի հետ: 1921 թվականին Հայոց աշխարհի մի մասը (Արևելյան Հայաստան) խորհրդայնացվեց, իսկ մյուս մասը (Արևմտյան Հայաստան) մնաց օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Այս տարանջատումն անջրպետ առաջացրեց և վատթարագույնս ազդեց դարերն ի վեր ծաղկում ապրող հայ երաժշտարվեստի, մասնավորապես կատարողական արվեստի վրա: Սակայն արարչագործ հայ ժողովրդի ստեղծագործ մտքի ճախրանքը չդադարեց, քանզի պատմական ցանկացած ծանր ժամանակաշրջանում նա աչքի յույսի պես պահել ու փրկել է իր ազգային արժեքները: Այժմ առկա և օգտագործվող ժողովրդական գործիքների հարուստ տեսականին դրա ցայտուն վկայությունն է:

Իրենց արտաքին տեսքով, ներքին կառուցվածքով, տեմբրային առանձնահատկություններով բազմատեսակ են հայկական ժողովրդական գործիքային արվեստի վառ ու ինքնատիպ նմուշները: Դրանցից է՝ **քանոնը**: Ազգային գործիքների բազմերանգ ընտանիքում այն մշտապես իր ուրույն տեղն է ունեցել և ունի մինչև հիմա: Քանոնը, մենանավագ գործիք լինելուց բացի, իր անփոխարինելի տեղն է հաստատել նվագախմբում՝ հնչել ու յուրատեսակ տեմբրով փայլ տալով խմբային հնչողությանը: Նվագարանի յուրահատկություններից է նաև այն, որ նա նեղաշնակորեն համակցվում է թե՛ ազգային, և թե՛ դասական գործիքների հետ:

Արևելքում սիրված ու տարածված քանոն նվագարանը գործածության մեջ է նաև արաբական աշխարհում, Եգիպտոսում, Հունաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում և այլուր: Յուրաքանչյուր երկրում այն տարատեսակ դրսևորում ունի՝ կապված նստելանքի, կատարողական ձևի և տեխնիկայի, ձեռքերի դրվածքի, ըստ այն և ձախ ձեռքերին տրված տեխնիկական հնարավորությունների, ընդհուպ մինչև հարվածների տարբերության հետ, ինչպես նաև ըստ կառուցվածքային առանձնահատկության, ըստ մանդալների քանակի, որոնք ապահովում են կիսատոների գոյությունը: Հայկական քանոնի դեպքում մեկ նոտան ունի երկու մանդալ և չունի քառատոներ, չնայած տողերիս հեղինակի քանոններից մեկի (հնչյունաշարը՝ մեծ օկտավայի Մուլ-ից երրորդ օկտավայի դո՞) փոքր և առաջին օկտավաների լյա և սի նոտաներին ավելացված են քառատոն մանդալներով, որոնց անհրաժեշտությունն առաջացել է դասական մուղամ նվագելու նպատակով: Արաբական աշխարհում դրանք չորսից տասներկուսն են և երբեմն ավելին, որոնց միջոցով ստանում են քառատոն հնչյուններ: Այս ամենից բացի, նվագարանի ազգային պատկանելության ամենակարևոր գործոնը կա-

տարողի զգացականությունն է և ազգային հատուկ ելևէջների ազնիվ արտաբերումը: Այս իմաստով, գիտելիքից բացի, կատարողից զգուշավորություն և հոգացավորություն է պահանջվում:

Հետաքրքրությունն այնքան շատ է քանոն գործիքի նկատմամբ, որ նրան անդրադառնում են և երաժշտագետները, և քանոնահարները: Սակայն, ավելորդ չեն համարում գործիքին վերաբերող մի շարք նեղ մասնագիտական դիտարկումներ նշել:

Քանոնը մատնանվագ և կամփային գործիք է, բնույթով քնարական և հայ մոնոդիկ ու մեղեդային երաժշտության արտահայտման գեղեցիկ ու հրաշալի միջոց, ինչը ևս ազգային պատկանելության մի տարր է: Այն տալիս է կատարողական բազմապիսի ու նաև մոնոդիկ երգը բազմաձայնի վերածելու և վերարտադրելու լայն հնարավորություններ: Տարատեսակ նվագելանքներից հիմնականը մատնահարվածներն են, որոնք կատարվում են այն և ձախ ձեռքերի ցուցամատների միջոցով:

Նվագելանքը բազմատեսակ է՝ վերից վար հարվածներ (հայկական քանոնի հիմնական ձև), հարվածներ վարից վեր՝ անհրաժեշտության դեպքում (ուղին ու սազին հատուկ ձև է, այդպես նվագում էին Արևմտյան Հայաստանից եկած քանոնահարները, հատուկ է նաև արաբական աշխարհի քանոնին), բազմահնչյուն ալկորդներ երկու ձեռքով, ամբողջ ապլիկատուրայով վերից վար արպեջոներ՝ պարզ և բարդ: Տրեմոլներն (պահված նոտա) ստանում են այն և ձախ ձեռքերի ցուցամատների՝ իրար հաջորդած արագ և առավել մանր հարվածների միջոցով, երբեմն միայն ձախ կամ միայն այն ձեռքի ցուցամատով: Ալկորդներ՝ սկսած երկհնչյուն ինտերվալից մինչև հինգ հնչյունից բաղկացած նոնալկորդ, վեց հնչյունից համահնչյուն, ստեղծագործությունը բացառապես մատներով նվագելու (առանց մեղիատորի) և նվագակցելու միաժամանակյա հնարավորություն, պիցցիկատոներ, լեգատո անցումներ և այլն: Գործիքն ունի տեխնիկական և տեմպային անսահմանափակ արագ նվագելանքի հնարավորություն, մելիզմատիկ ելևէջների և նյուանսների բազմապիսի ու բազմազույն դրսևորումներ և այլն: Ընդհանրապես, քանոն գործիքի հնարավորություններն անընդհատ կատարելագործման և մելիզմների ամենաբարդ ու նոր արտաբերման ձևերի հնարավորություն են ընձեռում: Սակայն այս պարագայում անհրաժեշտ է հայ ազգային երաժշտարվեստի յուրօրինակ սահմանների պահպանումը: Կարևոր են համարում հիշեցնել, որ սա Մեծն Կոմիտասի՝ մեզ այնքան անհրաժեշտ պատվիրաններից է, առանց որի մենք կխաթարենք մեր տեսակի առաջընթացը համաշխարհային երաժշտարվեստի անդաստանում (թեմային անդրադառնալու անհրաժեշտությունը բխում է այսօրինակ երևույթների գոյությունից):

Քանոնն իր տեխնիկական և արտահայտչական ամբողջ պաշարով կարողանում է հանդես գալ որպես մենակատար՝ կատարել մենանվագ ստեղծագործություններ, պիեսներ, նաև միատարր և տարատեսակ դուետներից մինչև անսամբլներ, ընդհուպ մեծակտավ ստեղծագործություններ՝ կոնցերտներ, ռապսոդիաներ, սո-

նատներ և այլն (մինչև անգամ դասական և ջազային երկեր):

Հայկական քանոնն իր ձևով սեղանածն է. աջ կողմից ուղղանկյուն, ձախից՝ եռանկյուն-սուրանկյուն: Փայտյա գեղանն նախաքանդակ երեսի աջ կողմում չորս մասից բաղկացած կաշվե երեսն է, որի վրա դրված նույնպես չորս ոտքից հենակն իր վրա է պահում դեպի ձախ ձգվող լարերը: Նախապես, կաշվե երեսից աջ, քանոնի կողային՝ աջ մասի գաղտնարանում լարերը կապ գցելու միջոցով ամրացվում են և ձգվում դեպի ձախ՝ եռանկյուն-սուրանկյուն մաս, որտեղ համապատասխան նոտաների քանակի անցքեր են արված: Լարերը հասցվում են մինչև այդ անցքերը, հազգվում նախօրոք պատրաստված հատուկ փայտյա ամրակների՝ ականջիկների անցքին, փաթաթվում ու տեղադրվում (յուրաքանչյուր նոտա՝ կողք-կողքի տեղադրված երեք լարերի համադրություն է): Բանալիի միջոցով լարերն ամրացվում, սպա լարվում են ըստ նոտայի համապատասխան բարձրության: Գործիքի փայտյա ականջիկների գլխիկների չափերը պատրաստվում են բանալուն համապատասխան, որով ինչպես ասվեց, լարվում է քանոնը: Հնչյունաձավայն ընդգրկում է փոքր օկտավայի սոլ-ից մինչև երրորդ օկտավայի դո<sup>3</sup>, ռե<sup>3</sup>, մի<sup>3</sup>, ֆա<sup>3</sup> հրնչյունները (ֆա<sup>3</sup>-ով գործիքը միակն է, վարպետ՝ Վալերի Ներկարարյանի սեփականությունն է, տես նկ. 10):

Վերը նշեցինք, որ վաղ անցյալում գործիքային կատարողներն իրենք էին պատրաստում իրենց գործիքները, իսկ այժմ հմուտ վարպետները, համագործակցելով կատարողների հետ, հաջողությամբ իրականացնում են նրանց առաջարկները: Առաջին բաս քանոնի ստեղծման նախաձեռնության հեղինակն է հայտնի երաժիշտ և կոմպոզիտոր Արա Գևորգյանը (տես նկ. 11): Գաղափարն իրագործվեց վարպետ Ալբերտի (Ալբերտ Չաքարյան) հետ միասին, իսկ հեղինակային իրավունքը պատկանում է երկուսին: Քանոններն ունեն հետաքրքիր անձնանուններ 1. Քանոն Ալվարդ, 2. Քանոն Նվարդ, 3. Քանոն Գոհար, 4. Քանոն Ջեմմա, 5. Քանոն Ալիս, ըստ պատվիրողների անունների: Այս գործընթացը շարունակվում է, և հերթական պատրաստված երաժշտական գործիքն Արա Գևորգյանը նվիրում է Հայաստանի տարբեր շրջաններում գործող ժողովրդական գործիքների անասմբլներին (տես՝ այդ մասին Արա Գևորգյանի հոդվածները և զեկույցները գիտաժողովներում):

Երկար տարիների համագործակցությունս քանոնի վարպետ՝ Վալերի Ներկարարյանի (վարպետ՝ Վալեր) հետ տվեց իր պտուղները: Մեր համատեղ հետաքրքիր մտահղացմամբ պատրաստվեց երեք տարբեր գործիք:

Լ. Վան Բեթուվենի «Էլիզեին» ստեղծագործությունը (12. էջ 16) մենամվագ քանոնի համար փոխադրելուց հետո, անհրաժեշտություն առաջացավ քանոնի հնչյունաշարը (որը մեծ օկտավայի Սոլ-ից մինչև երրորդ օկտավայի ռե<sup>3</sup>-ն էր) մեծացնել ևս մեկ նոտայով՝ մինչև երրորդ օկտավայի մի<sup>3</sup>-ն, ինչն իրականացվեց 2009 թ. ապրիլին: Անուհետև, 2019 թվականին որպես նորարարություն, առաջին անգամ պատրաստվեց ևս երկու քանոն: Դրանցից առաջինի առանձնահատկու-

թյունն այն է, որ երեսն ամբողջությամբ փայտից է (կաշվե երեսը բացակայում է), ինչի շնորհիվ մեծացել է նվագամասը (դեկան), իսկ հնչողությունը սանթուր է հիշեցնում (հնչյունաշարը՝ մեծ օկտավայի Սոլ-ից մինչև երրորդ օկտավայի ռե<sup>3</sup>): Երրորդ քանոնն առանձնանում է իր փոքր չափերով, իսկ հնչյունաշարը սովորական քանոնից փոքր է մեկ օկտավով՝ փոքր օկտավայի սոլ-ից մինչև երրորդ օկտավայի դո<sup>3</sup>-ն: Այս երեք քանոններն էլ աչքի են ընկնում իրենց հնչողությամբ և տեմբրային առանձնահատկություններով: Դրանք տողերիս հեղինակի սեփականությունն են և պատրաստվում է ըստ պատվերի (նկ. 1, 2, 3):

Արևմտյան Հայաստանից եկած քանոնահարները քանոնը լարում էին *in C*-ում (հնչում էր՝ *in B*), սակայն կոմպոզիտոր, քանոնահար Խաչատուր Ավետիսյանը գործիքի լարվածքը մեկ տոն բարձրացրեց *in D*, մեր երկրի տեղանքին համապատասխան ճիշտ լուծում համարելով, ինչը հնչողությանը պայծառություն էր հաղորդում:

Հայտնի է, որ քանոնն ընհանրապես նվագում են ցուցամատներին հազգրած մատնոցներով և ցուցամատների ներքևի մասում մատնոցների ներսից տեղադրված մեղիատորներով: Ավանդական մատնոց մեղիատորով նվագելուց բացի, այն յուրահատուկ փափուկ և առավել թավշյա հնչողություն է ստանում առանց մատնոց միղիատորի օգտագործման նվագելու դեպքում: Այդօրինակ հնչողության համար հատուկ մշակվել է «Վարդանի մոր ողբը» միջնադարյան տաղը: Մտահրդագումն ու մշակումը տողերիս հեղինակին է և նվիրված է եղբորը՝ Արցախյան Ազատամարտի հերոս, օդաչու-հրամանատար՝ Հրայր Կիրակոսյանի հիշատակին: Ամբողջ ստեղծագործությունն առանց մատնոց-մեղիատորների միջամտության նվագելու պարագան ցայտուն կերպով արտահայտում է միջնադարյան անաղարտ, անաղմուկ և թափանցիկ երաժշտության ամբողջ հմայքը: Ի դեպ, արդեն հանձնվել է խստապահանջ, բանիմաց և պրոֆեսիոնալ ուկնդրի դատին ու արժանացել բարձր գնահատանքի (Կամերային երաժշտության տուն, «Երաժշտության հնչյունների ներքո» համերգի շրջանակում, 2016 թ.): Քանոն գործիքի հնչողությունն այս կերպ հնարավոր է դառնում տեղափոխել այլ հարթություն՝ դեպի կամերային հնչողություն, ինչը ևս մեկ վառ ասպարուց է նրա լայն հնարավորությունների ու նորածն դրսևորումների: Ստեղծագործության մասին երաժշտագետ Գոհար Շագոյանն իր երաժշտագիտական վերլուծական հոդվածում նշում է. «Արտահայտչականությունն այս տարբերակի կատարողականության շատ ներագոյող էր, քանի որ մեղմ է, չկա լրացուցիչ լարում ունկնդրի համար և մասնագիտական մեծ պատրաստություն է պահանջում երաժիշտ կատարողից՝ տիրապետելու մանուալ այդ տեխնիկային ու նրբերանգների այդօրինակ սպեկտոր ստեղծելու պատասխանատու այդ բեմից», («Երաժիշտ» N 6 (126) 2016 թ.):

Հայաստանում քանոնը նվագում են՝ ձնկներին դրված, նախապես ձախ ոտքը աջ ոտքին գցելով, սականանց դեպքում: Կատարողական գործունեությանս

ամբողջ ընթացքում ես այս ձևն եմ կիրառում, և բացի այն, որ ինձ հարմար է, գեղագիտական տեսանկյունից էլ գեղեցիկ է՝ նվագարանը կարծես միաձուլվում է կատարողի հետ, սակայն ֆիզիկական հնարավորությունների տեսանկյունից միանշանակ չէ բոլորի համար: Տղամարդ գործիքահարները նախընտրում են առանց ոտքը ոտքին զցելու ձևը: Արևելքում ընդհանրապես նվագում են ձկնների կամ հատուկ սեղան-հենարանին դրված: Այդպիսի հենարան էր օգտագործում նաև Գուսան Ծահենը (տե՛ս՝ նկ. 6): Անձամբ սխալ չեմ համարում տարատեսակ նստելաձևերը, ինչը կարող է պայմանավորված լինել մարդու ֆիզիկական հնարավորությունից և հարմարավետությունից: Սակայն կա մեկ կարևոր հանգամանք, այն է՝ հենարանին դրված գործիքն ավելի հնչել է և դա բնական է, որովհետև ձկններին դնելիս որոշ չափով հնչողության կորուստ ենք ունենում: Ինչևէ, այս առումով մասնագետները դեռ կարող են կարգավորել, թե որ ձևն է հարմար իրենց, սակայն փոքրիկների պարագայում այլ է:

Մանկավարժական գործունեությանս հենց սկզբից (1977 թ. Չարենցավան) նկատեցի, որ առաջինից երրորդ դասարանցիները դժվարանում են ոտքը ոտքին զցած նվագել՝ պայմանավորված հասակով, ֆիզիկական տվյալներով, նաև՝ լուրջ խնդիր էր նվագարանը ոտքերի վրա պահելը, շուտ էին հոգնում, շեղվում էր ուշադրությունը: Անկեղծ ասած, այդ պատճառով որոշ երեխաներ նույնիսկ դադարում էին քանոնի դասերին հաճախելուց, ինչը ցանկալի չէ: Չնայած այդ ժամանակ խիստ էր դրված նստելաձևի հարցը, որպես հատուկ ցուցումով նկարված օրինակ, ունեինք Խաչատուր Ավետիսյանի առաջին մեթոդական ձեռնարկի նախաբանում լուսանկարը: Ինքնաշեն փոքրիկ աթոռակը, որն սկսեցի կիրառել աշխատանքային փորձառության ընթացքում, նվագելիս դրվում էր երեխաների ոտքերի տակ, ինչն ապահովում էր հենման հնարավորությունը և կատարողականի ազատությունը՝ ճիշտ նստելն ու ձեռքերի բնականոն շարժման անկաշկանդությունը: Գուցե եղել են այս մեթոդիկական օգտագործողներ անցյալում, այսօր նմանօրինակ մոտեցումներ առկա են: Խնդրահարույց մեթոդիկական արդարացրվել է մեր 30-ամյա մանկավարժական պրակտիկայով, և այժմ շատերն են անարգել օգտվում այդպիսի աթոռակներից և դասարաններում, և՛ բեմերում:

Քանոնահարների\* շարքն ավելանում է սերունդների հետ համընթաց, ինչն ինքնին խոսում է այն մասին, որ Հայաստանը երբևէ քանոնահարների պակաս չի ունեցել, վկան հազարամյակների հեռվից ցայսօր «սպորտող» այսչափ սիրված քանոն գործիքն է:

Շատերին է հմայել գեղահունչ քանոնը, բայց Խա-

չատուր Ավետիսյանի համար այն դարձավ կյանքի ու գործունեության կարևոր խթան: Խաչատուր Ավետիսյանն Արևելյան Հայաստանի (Սովետական Հայաստան) առաջին քանոնահարն էր և քանոնահարների դպրոցի հիմնադիրը, իսկ նրա սանուհին՝ Անժելա Աթաբեկյանն առաջին կին քանոնահարը: Նա ստեղծեց կատարողական նոր ոճ, նոր դպրոց, մինչ այդ գոյություն ունեցող արևմտյան նվագառձից տարբեր՝ սկսած մատնադրումից: Այս է պատճառը, որ Խաչատուր Ավետիսյանի՝ քանոնի համար գրված ստեղծագործությունները, ինչպես ինքն էր ասում Հայկական քանոնի համար են (նկատի ունենալով նվագառձը): Նա համոզված էր, որ իր ստեղծած նվագառձն ամուր հող է, որպեսզի երաժիշտ-քանոնահարը չշեղվի՝ արևելյան օտարամուտ ելևէջներ ներդնելով իր կատարումներում: Ազգային մտածողություն և ճաշակ՝ ահա, թե ինչն էր առաջնայինը նրա համար: Խաչատուր Ավետիսյանը հիմք դրեց քանոն նվագարանի ուսուցման ամբողջ հանրապետությունում: Նա հանդիսանում է ԵՊԿ ժողովրդական երաժշտական գործիքների և երգեցողության բաժնի հիմնադիրներից մեկը՝ լինելով ամբիոնի վարիչը, նաև դասավանդել է 1977-1996 թթ.: Տաղանդավոր ու բազմավաստակ ուսուցչի դասարանում ուսումնառություն են անցել այսօր արդեն ճանաչված ու վաստակաշատ քանոնահարներ՝ Հասմիկ Լեյլոյանը, Ավարդ Միրզոյանը, Անուշ Կիրակոսյանը, Կարինե Հովհաննիսյանը, Ազնիվ Մինասյանը, Անահիտ Վալեսյանը, ովքեր դաստիարակվել են որպես բարձր ճաշակի ու երաժշտական նուրբ զգացողության տեր արտիստներ՝ հայ կատարողական երաժշտարվեստին ազնվորեն ծառայելու նվիրվածությամբ համակված:

Կոմպոզիտոր, քանոնահար, արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր՝ Խաչատուր Ավետիսյանի ներդրումն անզերազանցելի է քանոն գործիքի ոչ միայն տարածման ու կատարողական հնարավորությունների զարգացման, այլև բազմաթիվ բարձրորակ երկերի ստեղծման ասպարեզում: Բազմավաստակ կոմպոզիտորի գրչին են պատկանում՝ երկու կոնցերտ, չորս սոնատ, երկու երաժիշտական խորեոգրաֆիկ պատկեր՝ «Կախարդված ծաղիկներ» և «Չարթոնք», բազմաթիվ կոնցերտային պիեսներ և ժողովրդական երգերի մշակումներ, դասական ստեղծագործությունների փոխադրումներ, նաև դուետներ, տրիոներ, կվարտետներ և այլն: Ընդհանրապես

Կարինե Հասասյան, Փիրուզ Կարապետյան, Մարինե Մելքոնյան, Անահիտ Նանագույան, Հայաստանի Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլ՝ Լիդա Խանիկյան (Գարեգին Խանիկյանի դուստրը), Ջինա Մարգարյան, Թամարա Ունուսյան, Անուշ Կիրակոսյան (ժուռնալիստ), Էլմիրա Կոչյան (դաշնակահար), Ջիվան Միքայելյան, Լուիզա Մեդրակյան, Հասմիկ Լեյլոյան, Ավարդ Միրզոյան, Ծովինար Աթաբեկյան, Մարինե Ասատրյան, Մարիամ Խաչատրյան, Արմինե Խառատյան, Ազնիվ Մինասյան, Ծովինար Հովհաննիսյան, Կարինե Հովհաննիսյան, Անահիտ Վալեսյան, Նունե Դանիելյան, Լիլիթ Խոջայան, Նարինե Մալխասյան, Զարուհի Քալանթարյան, Վերգինե Ալիմյան, Մերի Վարդանյան, Մարիա Բաղդասարյան և այլք:

\* Հայ քանոնահարներ. Սարգիս Գըլճյան (նաև Ուրի Սարգիս), Գարեգին Խանիկյան (սանթուրահար), Արշավիր Ֆերջուլյան (Արա Սևանյան, ԱՄՆ), Մարտին Հովհաննիսյան, Միրան Օրամանյան, Խաչատուր Ավետիսյան, Հայաստանի պարի պետական անսամբլ՝ Լևոն Արևանյան (Չոքոխ), Ա. Մերանգույանի անվան ժողովրդական գործիքների անսամբլ՝ Նշան Հոպյան, Զավեն Տերմենջյան, Անժելա Աթաբեկյան, Ապոլիա Աթաբեկյան, Մելանյա Տադիրյան,

բարձրագույն երաժշտական կրթության (ԵՊԿ), այսօր էլ շատ երաժիշտ-քանոնահարներ ստեղծագործում, փոխադրումներ ու մշակումներ են անում, հարստացնելով քանոնի նվագացանկը:

Պատմական երկար ու դժվարին ճանապարհ անցած հայ ժողովրդի ավանդապաշտության հետ միասին, նրա հարատևման գաղտնիքներից մեկն էլ հոգևոր հարստության պահպանումն է եղել: Դրա վառ օրինակներից են անհիշելի ժամանակներից դարեդար և սերընդեսերունդ փոխանցված ու մեզ հասած ազգային գործիքները: Հենց գործիքային երաժշտարվեստի մշակների նվիրվածությամբ և կատարողական բարձր մակարդակով, նոր ճանապարհներ, տեխնիկական նոր ձևեր ու մեթոդներ մշակվեցին, որոնք էլ նպաստեցին Հայոց աշխարհի գործիքային երաժշտարվեստի, մասնավորապես Քանոնի բազմադարյա երթին:

Հայկական քանոնը շարունակում է իր հաղթարշավը: Նրա հետ միասին հազարամյակների հեռվից եկող ժողովրդական գործիքների գոյության փաստն արդեն հարատևության գրավական է, իսկ նրանց հնչյունների թրթիռները, բալասանի նման, հոգի են բուժում, արթուն պահում ազգի միտքն ու առաջնորդում դեպի ինքնություն և հավերժություն:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Փավստոս Բյուզանդ, Պատմություն Հայոց, Վենետիկ, 1914 թ.: Pavstos Byzand, Patmutiwn Hayotz, Venetik, 1914 th.
2. Նոր բառգիրք Հակագեան լեզուի, հաս. Բ, Վենետիկ, 1837 թ.: Nor bargirg Haykazean lezui, hat. B, Venetik, 1837 th.
3. Հովհաննես Երզնկացի, Հաւարումն քերականի մեկնութեան, Մատենադարան, ձեռ. հ. 2329: Hovhannes Erznkatz, Hawaqumñ qerakani meknuthean, Matenadaran, dzher. h. 2329.

4. Հակոբ Ղրիմեցի, Մեկնութիւն տօմարի, Մատենադարան ձեռ. հ. 2011: Hakob Ghrimetzi, Meknuthiwn tomari, Matenadaran, dzher. h. 2011.
5. Ավետիսյան Խ. Մ., Քանոնի ձեռնարկ, նուսային ժողովածու, Առաջաբան՝ հեղ. Նիկողոս Թահմիզյան, Եր., Հայաստան, 1968 թ.: Avetisyan Kh. M., Qanoni Dzhernark, notayin zhoghovatsu, Arajaban: hegh. Nikoghos Thahmizyan, Yer., Hayastan, 1968 th.
6. նկ. 1, Մատենադարան, ձեռ. հ. 7090: nk. 1, Matenadaran, Dzher. h. 7090.
7. նկ. 2., Մատենադարան, ձեռ. հ. 5472, (5գ): nk. 2, Matenadaran, dzher. h. 5472.
8. Գապասաքալեան Գ., Գրքոյկ, որ կոչի նուագարան, Կ. Պոլիս, 1794 թ.: Gapasaqalean G., Grqoyk, vor kochvi nuagaran, K. Polis, 1794 th.
9. Հիսարեան Ա., Պատմութիւն հայ ձանագրութեան և կենսագրութիւնը երաժիշտ ազգայնոց, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 174-176: Hisarlean A., Patmuthyun hay dzhaynagruthean ev kensagrutuhiwnq yerazhisht azgaynotz, K.Polis, 1914 th., ejj 174-176:
10. Լևոնյան Գ., Հայ աշուղներ, //Ազգագրական հանդես, 10-րդ տարի, 13-րդ գիրք, 1906 թ.: Levonyan G., Hay ashughner, //Azgagrakan handes, 10-rd tari, 13-rd girq, 1906 th.
11. Հայկական համառոտ Հանրագիտարան, 3-րդ հատոր (4 հատորյակ), Եր., Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխ. խմբագրություն, 1999 թ.: Haykakan hamarot hanragitaran, 3-rd hator (4 hatoryak), Yer.: Haykakan khorhrdayin hanragitarani glkh. khmbagruthean, 1999 th.
12. /Անմար գոհարներ -2, նուսային ժողովածու, Եր., Լուսաբեր, 2010 թ.: Anmar goharner -2, notayin zhoghovatsu, Yer., Lusaber, 2010 th.

**Բանալի-բառեր.** Քնարատիպ գործիքներ, քանոն նվագողներ, քնարահարք, գործիքահար, նվագածու, Նիկողոս Թահմիզյան, Խաչատուր Ավետիսյան, Արևելյան գործիքների նվագախումբ:

**Ключевые слова:** инструменты, исполнители на каноне, инструменталисты, Никогос Тагмизян, Хачатур Аветисян, Ансамбль Восточных инструментов.

**Keywords:** lyres, qanun players, lyrist, instrument, performer musician, Nikogos Tahmizian, Khachatur Avetisyan, Eastern Instruments Ensemble.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆՈՒԸ ՄԵՍՐՈՊԻ [ծ. 14.12.1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, ՀՀ): Ավարտել է՝ ԵՊԿ-ի ժողովրդական գործիքների բաժինը՝ քանոն մասնագիտացմամբ (1990 թ., պրոֆ.՝ Խ. Ավետիսյանի դասարանը), 1993-ին՝ ասպիրանտուրան, «Գալիք» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Մենակատար քանոնահար, ժուռնալիստ ԵՊԿ դասախոս, ժուռնալիստների միության անդամ (2020): Որպես քանոնահարուհի աշխատել է՝ 1979–1986 թթ. Հայաստանի Թ. Ալթունյանի անվ. Երգի-պարի պետ. անսամբլում, 1986–1987 թթ. Հայաստանի Գուսանական պետ. անսամբլում, 1991–1992 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ռադիոհեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլում: 1994–1997 թթ. ղեկավարել է Երևանի Հատուկ զննի ժողովրդական գործիքների անսամբլը և եղել է քանոնահարը: Գասավանդել է՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Չերժինսկու անվ. սովխոզի երաժշտական դպրոցում, 1990–2009 թթ. Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 2009-ից մինչև այժմ Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցում՝ ժողովրդական գործիքների բաժնի վարիչ, վարում է քանոնի դասարանը և ղեկավարում ժողգործիքների անսամբլը: 2019-ից մինչև այժմ Ա. Բարաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջում՝ դասավանդում է մանկավարժական պրակտիկա: Հեղինակ է՝ քանոնի 4 ուսումնական ձեռնարկի՝ «Անմար գոհարներ» (2 հատ., Եր., 2005 թ. և 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), գիտական և հրապարակախոսական հոդվածների՝ «Նրան էլ են փորձում յուրացնել», //Երաժշտական Հայաստան, ամսագիր, 1-3 (44-45) 2013 թ., «Արմինե Պողոսյան. կոչումով մանկավարժը», //Երաժիշտ ամսաթերթ, N 4, 2013 թ., «...Իսկ բարեկամությունը շարունակվում է», //Հայաստան, 13-20.12.2012 թ., «Երջանկությունը թևեր է տալիս, հայրենասիրությունն արժանապատվության զգացում», //Երաժիշտ, ամսաթերթ N 1 (122) 2016 թ.: Ունի հոդվածներ նաև «Հայ զինվոր», ՀՀ ՊՆ,

«Մարտիկ» Արցախի Հանրապետության պաշտոնաթերթերում, Բեյրութի (Լիբանան) «Խօսնակ» ամսաթերթում, հրատարակություններ ունի նաև ԱՄՆ-ում սիդոսթահայ մամուլում: //«Նոր օր», //«Մոլորակ» և այլ: 2000-ին «World music awards» միջազգային մրցանակարաշխութայն (ԱՄՆ) մրցանակակիր է:

**Сведения об авторе:** КИРАКОСЯН АНУШ МЕСРОПОВНА (род. 14 декабря 1957, г. Алаверди, Лорийский р-н, РА), солистка—канонистка, журналист, педагог ЕГК, член Союз журналистов Аемени(2020). Автор четырех учебников для канона: “Анмар гоарнер”, ч. 1 (2005), часть 2 (2010); “Переложения для канона”, 3-я книга (2010); “Концертные пьесы для канона Хачатура Нерсисяна” (2010). Автор ряда статей, печатается в газетах “Еражишт”, “Ай зинвор”, “Мартик”, в журналах “Музыкальная Армения”; “Хоснак”, Бейрут (Ливан). Работала: с 1979 по 1983 в музыкальной школе Дзержинского совхоза Армавирского р-на; с 1980 по 1986 - в Гос.ансамбле песни и танца Армении им. Т. Алтуняна; Работала в Ансамбле народных инструментов им. А. Мерангуляна Гостелерадио Армении (1993-2001), канонистка и руководитель Ансамбля народных инструментов Ереванского особого полка (1994-1997). Преподавала: в Госконсерватории им. Комитаса (1990-2009); зав.отделением народных инструментов, педагог по классу канона в ДМШ им. К. Сараджяна (с 2009 по сей день), ведет педагогическую практику в Муз.-пед. колледже им.А.Бабаджаняна (с 2019 по сей день); с 1986 по 1987 - в Гос. гусанском ансамбле; с 1990 по 1991 - в Гос. ансамбле танца Армении; с 1993 по 2001 - в Гос. ансамбле народных инструментов Радио и Телевидения РА им. А. Мерангуляна; с 1990 по 2009 - в Госконсерватории им. Комитаса.

**Information about the author:** KIRAKOSYAN ANUSH MESROP (was born on 14 December 1957 in Armenia, Alaverdi). A soloist kanon player, as well as a lecturer of music at YSC Anoush Kirakosyan is an author of four books including "Eternal diamonds 1" (2005), "Eternal diamonds 2"(2010), "Works for kanon" (2010) and "Khachatur Nersisyan's concert plays for kanon" (2010). She also wrote a number of articles in "Avangard", // "Musical Armenia" jurnal, "Yerazhisht" newspaper, // "Armenia" newspaper, 13-20 December 2012, "Happiness gives wings, Yerazhshtakan Hayastan journal and many more. "Armenian soldier" Lebanese (Beirut) "Speaker" magazine. In different time periods she worked in different places among which were: 1979-1983 The musical school of the city Hoktemberian, 1980-1986 Tatul Altunyan Armenian state song & dance ensemble, 1986-1987 Armenian State Ensemble Minstrel Folk Songs of Armenia, 1990-1991 Armenian State Dance Ensemble, In 1993-2001 has been working at Public Radio Aram Merangulyan Ensemble of Folk Instruments. In 1994-1997 she was qanun player and the Director of the Ensemble of Folk Instruments of the Yerevan Special Regiment. In 1990-2009 was a pedagogue at the YSC, and since 2009 is qanun teacher and the Head of the Department of Folk Instruments at K. Saradjian Music School. Since 2019 she is teaching Pedagogical Practice at the A. Babajanyan Music College. 1990-2009 Yerevan State Conservatory after Komitas.

## **Րեզյւմե**

Канонистка-солистка, преподаватель, журналист **Ануш Месроповна Киракосян.** - “Армянские струнно-щипковые музыкальные инструменты. Канон”.

Данная статья посвящена обзору армянских народных струнно-щипковых музыкальных инструментов, Особое место отведено яркому представителю этой группы канону. В ней в хронологическом порядке описываются ключевые моменты создания национальной школы канона, особенности развития и распространения этого инструмента. Также приводятся данные о западных и восточных исполнителях, начиная с XIX века по сей день.

## **Summary**

Pedagogue at YSC after Komitas, soloist, kanon player **Anoush Mesrop Kirakosyan** - “Armenian traditional lyre-like musical instruments, lyre players. Kanon”.-

This article is about an Armenian traditional stringed musical instrument called Kanon. The article provides some details about the foundation of the initial school of Kanon, its development and spread in the chronological order. The article also speaks about the western and eastern Kanon players of 19th century all the way until now.



уподобить форме многотемных вариаций, где в качестве тем выступают сквозные линии творчества композитора – академическая и джаз, – обогащенные разумным применением современных композиторских техник, национальных мотивов. Попеременно варьируясь, изменяясь, обновляясь, “темы” имеют общие интонационные истоки и мотивные связи, способствующие их слиянию на определенных этапах. Другая “визуализация” стиля Орбеляна вызывает ассоциацию с композицией собственного, организованного по принципу параллельного монтажа разных сюжетных линий жизни.

Вопрос творческого самоопределения – один из наиболее интересных в судьбе Орбеляна, стал важной составляющей, явившись следствием исторического контекста жизни композитора, а также особенностей личности и творческой позиции. В восприятии собственного творческого тяготения к двум жанрам, ключевую роль сыграла приверженность композитора к основам национального музыкального профессионализма и классико–романтической эры, с одной стороны и к новой коммерческой массовой культуре – с другой. Это эстетический разрыв между академической, элитарной музыкальной традицией и музыкальной индустрией.

Таким образом, базовая в вопросе самоидентификации дилемма “новое–чужое” в данном случае может быть конкретизирована в оппозициях “старого и нового”, “высокого и низкого” в искусстве и необходимости персонального выбора, особый смысл и сложность которого обусловлены в первую очередь поиском баланса в идентификационной паре “личное–социальное”. Проблема “высокого” и “низкого” (в частности, серьезной и легкой музыки) актуализировалась для Орбеляна лишь в связи со сложившимися в обществе и профессиональной среде критериями и стереотипами. Иными словами, изначально данная дилемма для композитора не существовала вовсе: “пробы пера” в легком жанре были обусловлены интересом прежде всего к новому, незнакомому стилю музыки с особой гармонической логикой и ритмической организацией.

В обзоре музыкального наследия К. Орбеляна прежде всего обращает на себя внимание творческая продуктивность и универсальность композитора, а также его приверженность к традиционной жанровой системе, выработанной в ходе становления армянского музыкального профессионализма. За свою творческую жизнь композитор оставил обширное и разнообразное в жанровом отношении музыкальное наследие, указывающее на то, что К. Орбелян был композитором–миниатюристом.

Наиболее многочисленны произведения инструментальных и камерно–вокальных жанров (1. С. 281). После создания балета “Бессмертие” (1969) в творчестве композитора стало преобладать число произведений для эстрадной сцены и кино.

Изначально работу в легком жанре молодой К. Орбелян рассматривал лишь как возможность получить материально устойчивое положение. Следует, од-

Пастух проснулся и успел срезать последний стебель:

*Вдруг слышит: кто–то тихонько плачет...  
тихо песенку напевает...  
это ветерка дуновенье в трубчатом стебле  
создало пенье...*

*Проделал он дырочки там, где надо  
Зажимать их для музыкального лада.  
С тех пор незапамятных и поныне  
Играют абхазы на ачарпане...*

(1; О том, как у нартов появились свирель и песня).

### **Врачевальные песни**

Применение музыки и танца в лечебных целях известно многим народам. Широко применялись они и абхазами. И сегодня не редкость лечение, например, психических расстройств игрой на народных инструментах, пением, танцами. Широкое распространение “Песен ранения” объясняется утилитарными функциями – ведь во время ранений в военных походах или горной охоте самым удобным – подручным, а иногда единственным лекарством становилась музыка. Тогда, соратники, друзья садились вокруг раненного и лечили его пением. Часто больной, забыв о своей боли, присоединялся к музыкальным лекарям.

Традиция подобного врачевания судя по всему возникла давно. Есть упоминание о ней и в “Нартском эпосе”:

*Страдал Кыатуан. От недуга совсем ослабел он.  
Слова повторял он, которые пел он...  
“Уа, рарира, райда, раща!”*

*Вполголоса братья ему подпевали тогда,  
они полагали,  
Что песня от боли спасает, от вреда,  
от горькой печали,  
И вторили брату, желая развеять болезнь:*

*“Уа, рарира, райда, раща”!  
С тех пор среди нартов рожденная песнь  
в народе жива.*

*Поэтому нет у абхаза ни песни, ни сказа,  
В которых не слышатся эти слова:*

*“Уа, рарира, райда, раща”! (7.С. 63).*

У абхазов много “Песен ранения”. Не известно, какая из них связана именно с нартами, но в эпосе есть сведения о другой популярной и в наши дни песне – “Азар”.

### **Поминальная песня “Азар”**

Вот история рождения песни “Азар”. В совместные походы для “добывания славы” Нарты и Айргь брали с собой сестер – Гунду и Ханию. “Но в бою женщины участвовали лишь в крайних случаях”, чаще “находились у походных очагов”. Воспользовавшись моментом, некто Хуаша Бырзыкь решил похитить Ханию, ко-

торая отказывалась выйти за него замуж. Он решил, что имея друзей и такого коня, как Зар, “все понимающего, как человек”, ему все под силу.

Но женщины дали достойный отпор. *“Победив своих врагов, свободно вздохнули и сложили на радость песню о стреноженном Заре. А на свирели играл нарт Къатуан, посланный сюда нартами и айргь. Эту песню поют в Апсны и по сей день. Называется она “Азар” (1; Победенные женщинами). К песне “Азар” мы еще вернемся, а сейчас еще об одном музыкальном эпизоде.*

**“Несравненная невестка нартов” (1)**

Главный герой “Нартского эпоса” – Сасрыква решил похитить сестру айргов. Встретившийся в пути старик предупредил: *“У девушки, к которой ты стремишься, семеро братьев, и все они злые и могучие. Они берегут ее пуще глаз своих. Погляди, сколько от важных пало в ужасных поединках!”.*

Старик рассказал о том, что его сын прошел все необходимые испытания, но все равно Ханя отвергла его. И теперь он “покаялся своими глазами увидеть жениха”, который ей понравится.

Добравшись до жилища Хании, располагавшейся на неприступной горе Сасрыква увидел, что:

*На костяном балконе седьмого яруса сидел юноша и играл на апхярце.*

*Он едва касался струн своими смычками и*

*тихо напевал печальную песню:*

*Она не стареет, не молодеет...*

*Но кто же сердцем ее владеет?..*

*Послушал Сасрыква песню и пошел дальше.*

*Отворил дверь в спальню – и застыл,*

*ослепленный красотою спящей девушки”.*

Проснувшаяся красавица согласилась следовать за славным Сасрыквой.

*“Семь дней и семь ночей продолжался пир. Семь дней и семь ночей пелись песни и танцевались танцы”* на свадьбе Сасрыквы и Хании.

Здесь мы будто читаем описание современной многолюдной абхазской свадьбы, во время которой исполняются, помимо собственно свадебных песен и танцев, охотничьи, трудовые, бытовые, даже песни ранения, пронизанные героическим духом.

Последнее упоминание о песне мы находим в заключительной главе эпоса – “Гибель Сасрыквы” (1). На глазах у нашего героя любимая сестра Гунда вместе со своим женихом и его конем превращается в камень. В великом отчаянии Сасрыква возвращается домой. Он въезжает в село, а там *“Ни песен, ни смеха не слышно...”*.

На такой грустной ноте завершается “музыка” в эпосе.

Пролистав “музыкальные” страницы “Нартского эпоса”, мы убеждаемся, что музыка с древних времен была неотъемлемой частью жизнедеятельности человека. Здесь мы узнали о рождении музыки и ее применении в жизни людей. Ценность “Нартского эпоса” в том, что он является неиссякаемым источником фундаментальных положений мировоззрения и музыкальной культуры абхазов.

В заключении вернемся к поминальной песне “Азар”, которую принято считать атрибутом поминального обряда, а именно скачек, устраивавшихся во время поминок по умершему мужчине, где душевное расслабление не допускается. Поэтому песня о коне “Азар” носит скорее героический, нежели траурный характер.

Песня состоит из двух контрастных разделов: импровизационный экспрессивный запев солиста и эпически величавый трехголосный мужской хоровой припев.

Как и многие песни, “Азар” поется со словами–рефренами. Пение с непереводаемыми словами–рефренами или минимальным вербальным текстом естественным образом придает главенствующую роль в песне ее мелодии.

Итак, напомним что согласно нартскому эпосу, создателями песни “Азар” являются героические женщины Гунда и Ханя.

**ПРИМЕЧАНИЯ**

1. Приключения нарта Сасрыквы и его девяти братьев., Сухуми: Алашара., 1988 г. – 260с. [http://apsnyteka.org/file/Priklyucheniya\\_narta\\_Sasrykvy\\_i\\_ego\\_99\\_bratjev.pdf](http://apsnyteka.org/file/Priklyucheniya_narta_Sasrykvy_i_ego_99_bratjev.pdf)
2. *Абаев В.И.*, Осетинский язык и фольклор., М. – Л., I. 1949. – 601 с. *Абаев В. И.*, *Osetinskij yazyk i fol'klor.*, М.-Л., I. 1949. - 601 .
3. Абхазы с “черного континента”: эфиопская родословная одной семьи. <http://sputnik-abkhazia.ru/Abkhazia/20170216/1020373329/abxazy-s-chnernogo-kontinenta-efiopskaya-rodoslovnaya-odnoj-semi.html> Abkhazy s “chernogo kontinenta”: e’fiopskaya rodoslovnaya odnoj sem’i. <http://sputnik-abkhazia.ru/Abkhazia/....>
4. *Ковач К. В.*, 101 абхазская песня., Сухум, 1929. – 68 с. *Kovach. K. V.*, 101 abkhazskaya pesnya., Sukhum., 1929. - 68 s.
5. *Алобадзе В. В.*, *Кортюга И. Е.*, Абхазские песни., М., 1957. – 348 с. *Akhobadze V.V.*, *Kortyuga I. E.*, Abkhazskie pesni., М., 1957. -348 s.
6. *Инал-ипа Ш. Д.*, Памятники абхазского фольклора., Сухуми, 1977. – 199 с. *Inal-ipa Sh. D.*, *Pamyatniki abkhazskogo fol’klo-ra.*, Sukhumi, 1977. - 199 s.
7. Приключения нарта Сасрыквы и его девяти братьев: Абхазский народный эпос., М., 1962. – 288 с. *Priklyucheniya narta Sasrykvy i ego devyanosto devyat’ bratev.*, Abkhazskij narodnyj e’pos., М., 1962. - 288 s.

**Բաճախ-բաճիկ.** Արխազական հարսանիք, «Նարտական էպոս», արխազների երաժշտական մշակույթը, ռեֆրեն-բաճիկ, սոլո-խորհրդային երգեր:

**Ключевые слова:** абхазская свадьба, “Нартский эпос”, музыкальная культура абхазов, слова-рефрены, сольно-хоровая песня.

**Keywords:** Abkhazian wedding, “The Nart Saga”, the musical culture of the Abkhazians, refrain-words, solo-choral songs.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՉԱՄԲԱ ՆՈԴԱՐ ՎԻԿՏՈՐԻ (Աբխազիա, ՌԴ): Արվեստագիտության թեկնածու, Փարիզի «Արարատ» Գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս (Ֆրանսիա), Արվեստի համալիր հետազոտությունների կենտրոնի առաջատար հետազոտող (Սարատով, ՌԴ): ԱՀ ժողովրդական արտիստ, երաժշտագետ, կոմպոզիտոր, դիրիժոր: Ավարտել է Չայկովսկու անվան ՄՊԿ (երգչախմբային դիրիժոր պրոֆ. Վ. Բ. Կրասնոշչեկով, օպերային և սիմֆոնիկ դիրիժոր՝ Ս. Ֆ. Էրմլեր), վերապատրաստվել է Գ. Ռիլինգի (Գերմանիա) մոտ: Կոմպոզիցիա սովորել է Զ. Ա. Չեմելյանի և Լ. Վ. Չեպելյանի (Աբխազիա), Ս. Ն. Սիմանսկու (Սարատով), Ա. Ս. Լեմանի (Մոսկվա) դասարաններում: Գիտական հրատարակչությունների հեղինակ է: Հիմնական գործեր. «Հիստա» բալետներ (պրեմիերա 2010, Կորեայի Հանրապետության ազգային թատրոն, Սեուլ); Pinocchio (պրեմիերա 2018, Սերբիայի ազգային թատրոն): Հեղինակ է սիմֆոնիկ, վոկալ-կամերային-սիմֆոնիկ ստեղծագործությունների... կամերային գործերի՝ «Տասյի-ա» օրատորիան, արխազական ժողովրդական երգեր ևն: Աշխատել է Աբխազիայի պետական երգչախմբում՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Կորեայի ֆիլիարմոնիկ նվագախմբում՝ գլխավոր դիրիժոր, Գաեդուի Կարոլիկ համալսարանում (Հարավային Կորեա) դիրիժոր, նվագախմբային բաժնի պրոֆեսոր, Սեուլի Սան Մեյնգ համալսարանում (Հարավային Կորեա) դիրիժոր, պրոֆեսոր Նվագախմբային ֆակուլտետում, Սամսոն Չանբայի անվ. Աբխազիայի պետական դրամատիկական թատրոնի գլխավոր տնօրեն: Նա ելույթ է ունեցել խմբերի հետ. Աբխազիայի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Բախ-կոլեգիումի նվագախումբ, Կորեայի ֆիլիարմոնիկ նվագախումբ, Կորեայի սիմֆոնիա, Փրայս ֆիլիարմոնիկ նվագախումբ, Սեուլի ազգային նվագախումբ, Աբխազիայի պետական երգչախումբ, Գահինգեր Կանտորեյ, Կորեայի ազգային երգչախումբ, Սեուլի Ստորադպրոցային երգչախումբ և այլն: Համերգներով եղել է Աբխազիա, ՌԴ, Հվ-ային Կորեա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն:

Сведения об авторе: ЧАНБА НОДАР ВИКТОРОВИЧ (Абхазия, Россия) - кандидат искусствоведения, член-корреспондент Парижской международной академии наук "Арагат" (Франция), ведущий научный сотрудник Центра комплексных художественных исследований (г.Саратов, Россия), Народный артист Республики Абхазия, музыкальный исследователь, композитор, дирижер. Окончил Московскую государственную консерваторию имени П.И.Чайковского (хоровое дирижирование - проф. В. И. Краснощеков, оперно-симфоническое дирижирование - М.Ф.Эрмлер), стажировался у Г. Риллинга (Германия). По композиции занимался у К.А.Ченгелия и Л.В.Чепелянского (Абхазия), М.Н.Симанского (Саратов), А.С. Лемана (Москва). Автор ряда научных публикаций: Три ипостаси героического в музыкальном фольклоре абхазов (песенная трилогия: "Озбак", "Песня скалы", "Песня раненый") //Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. - 2013. № 9, Ч. II. С. 205-213; О нартекских песнях //Апсны аказара (Абхазия), № 3. - Сухум, 1983. С. 10-11; Современные тенденции в обработке народных песен для академического хора //Хоровое исполнительство. Сборник трудов 182 /РАМ им. Гнесиных. - М., 2011. С. 57-70; Героическая хоровая песня абхазов: Монография. - Сухум: Государственное издательство Республики Абхазия, 2014. 130 с. и др. Основные сочинения: балеты "Иисус" (преьера 2010, Национальный театр Республики Корея, Сеул); "Пиноккио" (преьера 2018, Сербский национальный театр); симфоническая поэма "Доротея"; симфоническая картина "Воспоминания"; "Поэма" для виолончели, сопрано, тенора, хора и органа; оратория "Исаия"; обработки абхазских народных песен, сочинения для фортепиано и др. инструментов. Исполнительская деятельность: Государственная хоровая капелла Абхазии - художественный руководитель и главный дирижер, Korean Philharmonic Orchestra - главный дирижер, Католический университет г. Тэгу (Южная Корея) - дирижер, профессор оркестрового факультета, Сеульский университет Сан-мен (Южная Корея) - дирижер, профессор оркестрового факультета, в настоящее время - генеральный директор Абхазского государственного драматического театра имени Самсона Чанба. Выступал с коллективами - Государственный симфонический оркестр Абхазии, Bach-Collegium Orchestra, Korean Philharmonic Orchestra, Korean Symphony, Prime Philharmonic Orchestra, Seoul National Orchestra, Государственная хоровая капелла Абхазии, Gahinger Kantorei, National Chorus of Korea, Seoul Metropolitan Chorus и др. Оперные постановки - "Евгений Онегин", "Любовный напиток". Концерты: Абхазия, Россия, Южная Корея, Германия, Франция и др.

Information about the author: CHANBA NODAR VIKTOROVICH (Abkhazia, Russia) - Ph.D. in Art History, Corresponding Member of the Paris International Academy of Sciences "Ararat", Leading Researcher at the Center for Comprehensive Art Research (Saratov). People's Artist of the Republic of Abkhazia, musical researcher, composer, conductor (speaks Abkhazian, Russian, English and French). He graduated from the Moscow Tchaikovsky State Conservatory (choral conducting - Prof. V. I. Krasnoshchikov, opera and symphonic conducting - M. F. Ermiler), trained by G. Rilling (Germany). In composition, he studied with K. A. Chengelia and L. V. Chepelyansky (Abkhazia), M. N. Simansky (Saratov), A. S. Lehman (Moscow). Scientific publications: - Features of the heroic songs of the Abkhazians //Theater, painting, film, music. - M., 2011, № 2, p. 170-192. - Three hypostases of the heroic in the musical folklore of the Abkhaz (song trilogy: "Ozbak", "Song of the Rock", "Song of the Wounded") //Historical, philosophical, political and legal sciences, cultural studies and art history. - 2013. № 9, Part II. p. 205-213. - Musical-poetic model of the Abkhaz heroic song and its kinship with the music of other peoples of the Caucasus //Historical, philosophical, political and legal sciences, cultural studies and art criticism. - 2013. № 11 (37): in 2 hours. Part I. p. 177-186. The antiquity and the youth of Abkhaz music. Musical life. - M., 1982. №12. p. 9-10. - About Nart songs //Apsny akazara (Art of Abkhazia), № 3. - Sukhum, 1983. p. 10-11. - Current trends in the arrangement of folk songs for the academic choir //Choral performance. Collection of works 182 /RAM them. Gnesinykh. - M., 2011. p. 57-70. - The heroic choral song of the Abkhaz: Monograph. - Sukhum: State Publishing House of the Republic of Abkhazia, 2014. 130 p. and etc. Major compositions: ballet "Jesus" (premiere 2010, National Theater of the Republic of Korea, Seoul); ballet "Pinocchio" (premiere 2018, Serbian National Theater); symphonic poems, symphonic picture "Memoirs"; "Poem" for cello, soprano, tenor, choir and organ; oratorio "Isaiah"; arrangements of Abkhazian folk songs; compositions for piano and other instruments. Performing activities: State Choir of Abkhazia - Artistic director and Principal conductor; Korean Philharmonic Orchestra - Chief conductor; Daegu Catholic University (South Korea) - Conductor, professor of the orchestra department; Seoul University of Sang-Myong (South Korea) - Conductor, professor of the orchestral faculty; at present - The General Director of the Abkhaz State Drama Theater named after Samson Chanba. Performed with: State Symphony Orchestra of Abkhazia; Bach-Collegium Orchestra; Korean Philharmonic Orchestra; Korean Symphony; Prime Philharmonic Orchestra; State Choir of Abkhazia; Gahinger Kantorei (Germany); National Chorus of South Korea; Seoul Metropolitan Chorus, etc. Opera performances: "Eugene Onegin" (Art's Centre, Seoul, South Korea), "L'elisir d'amore" (Sang-Myong (Seoul, South Korea).

Ամփոփում

Արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, Փարիզի «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս, Արվեստի համալիր հետազոտությունների կենտրոնի առաջատար հետազոտող (Սարատով, Ռուսաստան), Չանբա Նոդար Վիկտորի. - «Նարտ Էպոսը. որպես արխազական երաժշտական մշակույթի աղբյուր»:  
Ընթերցելով «Նարտ Էպոս»-ի «երաժշտական» էջերը՝ հանդգնում ես, որ հնագույն ժամանակներից երաժշտությունը եղել է մարդկային կյանքի բաղկացուցիչ մասը: Մենք ուսումնասիրում ենք երաժշտության ժամանագրությունը և դրա անկախությունը մարդկանց կյանքում: «Նարտ Էպոսի» արժեքը արխազ ժողովրդի փիլիսոփայության և երաժշտական մշակույթի հիմնարար սկզբունքների անսպաս աղբյուրն է: Հողվածում վերլուծվում է «Ազար» հուշերգը, որը հիմնականում համարվում է հուշ-արարողություն, որը կատարվել է, մասնավորապես, մահացած տղամարդու հոգեհանգստի ընթացքում: Այն Ազար անունով ձիու մասին երգն ավելի շատ հերոսական էպիկական է, քան ողբերգական սգո կերպար: Այն բաղկացած է երկու հակադիր մասերից. այն սկսվում է խպրովիզացիոն բնույթի արտահայտիչ մենակատարությամբ, որին հաջորդում է էպիկական և երեք մասից բաղկացած արական երգչախմբի կատարումը: Նաև ճշևեր, որ ըստ «Նարտ Էպոսի»՝ «Ազարը» ստեղծվել է երկու հերոս կանանց՝ Գունդայի և Խանդայի կողմից:

Summary

PhD Candidate, Professor, Corresponding member Academic of the International Academy of Sciences "Ararat" of Paris, Leading Researcher at the Center for Comprehensive Art Research (Saratov, Russia), Chanba Nodar Victor. - "The Nart Saga as the Source of the Abkhaz Musical Culture".  
Reading through the "musical" pages of the "Nart Saga", one is convinced that since ancient times music has been an integral part of human life. We learn about the genesis of music and its presence in people's lives. The true value of the "Nart Saga" is that it is an inexhaustible source of the fundamental principles of the philosophy and musical culture of the Abkhaz people. In conclusion, I suggest we return to "Azar" memorial song, generally regarded as an attribute of the memorial ceremony, performed, in particular, during the races held as the commemoration of the deceased man, where mental relaxation was not allowed. Therefore, the song about the horse named Azar is more of a heroic than a mourning character. The song consists of two contrasting parts: it starts with the expressive solo introduction of improvisational character followed by epic and stately three-part male choral chorus. Like many songs, "Azar" is sung with refrain words. Untranslatable refrains or minimal text component of the song naturally gives the melody a leading role. Also, I would like to mention, that according to Nart Saga "Azar" was created by two heroic women - Gunda and Khandia.



ապրում: Սակայն որբանոցի ամերիկացի ղեկավարների/և բարձր դասարանցիների միջև ծագած միջադեպից հետո, ղեկավարությունն ուլտիմատում ներկայացրեց սովետական իշխանություններին՝ ավագ խմբի տղաները պետք է հեռանան որբանոցից: Երաժշտախմբի 7-8 պատանի պետք է անօթևան մնայինք: Նվագախումբը ցրվելու առջև էր կանգնած: Այս անգամ էլ մանետրոն որբուկներին օգնության ձեռք մեկնեց: Նա Հայաստանի հրաձգային առաջին գնդի կապելմայստերն էր: Պարզվում է, այդ գնդի փողային նվագախումբը զորացրման պատճառով կազմալուծվել էր, և պետք է նոր նվագախումբ հավաքեին: Այստեղ էր, որ մանետրոն ասաց. «Տղերք, հնարավորություն կա ամբողջ խմբով որպես կամավոր անդամագրվել Հրաձգային առաջին գնդին: Եթե համաձայն էք, ձեր կազմից երեք ներկայացուցիչ ընտրեք, գնդի հրամանատարության հետ բանակցելու համար, նրանք համաձայն են հանդիպել»:

Երեք տղաների թվում ես էլ ընտրվեցի, հասակով ամենակարճը, դե ես ընդամենը 16 տարեկան էի:

Մեզ ընդունեց զորամասի քաղղեկ Մուսայելյանը (Ալեքսյոյի Մայիսյան ապստամբության հերոս Մուսայելյանի եղբայրը): Տղաներն ամոթխած լսում էին, ես էլ համարձակություն ստանալով, առաջացա և մեր կյանքի, իրավիճակի մասին ամեն ինչ պատմեցի: Խոսքիս ավարտին խնդրեցի, որ զորամասի կազմի մեջ մտնեմք, և մեր ուսումնառությունը շարունակենք:

Գնդի հրամանատարը, գեղեցիկ արտաքինով, բարձրահասակ մի տղամարդ (կարծեմ Խուդաբաշև ազգանունով), քաղղեկի հետ խոսեց, ծիծաղեցին, ի վերջո համաձայնության եկանք, և որբանոցի փողային նվագախումբն ամբողջ կազմով տեղափոխվեց Հայկական հրաձգային առաջին զորագունդ: 1923 թվականին էր»: (2.)

*Ջավեն Վարդանյանը 1923-1927թթ. որպես փողային նվագախմբի երաժիշտ ծառայել է Կարմիր բանակում, Երևանի, Լենինականի և Վանաձորի զորամասերում:*

*Ձինվորական նվագախմբի կյանքն ու առօրյան կապված է քայլարշավների, շքերթների, մրցույթների, զբոսայգիներում և զանազան միջոցառումներին նվագով մասնակցելու, զինվորական այլազան միջոցառումներին աշխույժ գործունեությամբ, որոնց չորս տարի շարունակ ծառայել է Ջ. Վարդանյանն իր սիրելի մանետրո Վ. Ա. Շպեյտլինգի ղեկավարությամբ: Մեծ գերմանացին աջակցեց՝ հույսեր ներշնչող, շնորհայի կլառնետահարին Երևանի պետական կոնսերվատորիային կից տեխնիկում ընդունվելուն: Փողային գործիքների մեծ պակասի պատճառով, ընդունվելու առաջին իսկ օրից երիտասարդին ընդգրկեցին սիմֆոնիկ նվագախմբի կազմ, որտեղ նվագում էր՝ կլառնետահարների խմբի կոնցերտմայստեր, իր սիրելի ուսուցչի Ստեփան Մովսեսի Դովզանի և 2-րդ կլառնետահար Վարդան Վարդանյանի հետ: Հետագայում, Լենինգրադի կոնսերվատորիայի սան Ջ. Վարդանյանը, ամառային արձակուրդներին հայրենի քաղաք վերադառնալով, սիրով էր մասնակցում նվագախմբի աշխատանքներին ու հաներգներին:*

*1927-1929-ին սովորել է Երևանի երաժշտական տեխնիկումում Ստեփան Մովսեսի Դովզանի կլառնետի դասարանում, 1929-1931թթ.՝ Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիային կից բանֆակում, ապա նույն կոնսերվատորիայի կլառնետի՝ Ա. Վ. Բերեզինի և երաժշտության պատմատեսական՝ Ռ. Ի. Գրուբերի դասարաններում: Կոնսերվատորիան ավարտել է 1936-ին: Մինչև կոնսերվատորիան ավատելը, 1935-ին, Ջավեն Վարդանյանը որպես Հայաստանի ներկայացուցիչ մասնակցելով Լենինգրադում կայացած փողային գործիքների երաժիշտ կատարողների Համամիութենական 2-րդ մրցույթին, արժանանալով 3-րդ մրցանակի: Մրցույթից հետո Հայաստանը ներկայացնող Ջավեն Վարդանյանի հետ Լենինգրադի «Красная газета»-ի թղթակցի հարցազրույցը՝ «Սովետական երաժշտական մշակույթի հաղթանակը» վերտառությամբ, որը ներկայացնում ենք թարգմանաբար.*

*«Ընկ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ (Հայաստան) պարզևատրվել է III մրցանակով*

Մեծացել եմ առանց ծնողների, անտուն էի և իմ դաստիարակը կոմսոմոլն է եղել:

Իմ երաժշտական կրթությունն սկսվել է որբանոցում, ուր և ապրում էի: Այնտեղ էլ սկսեցի նվագել փողային նվագախմբում:

1927-ին ընդունվեցի Էրիվանի կոնսերվատորիան: Երկու տարի անց կոմսոմոլի ԿԿ-ն ինձ գործուղեց Լենինգրադ ուսումնառության: Լենինգրադի կոնսերվատորիան ինձ շատ բան է տվել:

Բառեր չեմ գտնում մրցույթից ստացած տպավորություններս արտահայտելու: Մրցույթում ներկայացված էր Միության երաժշտական ամբողջ սերուցքը, ինչպես կատարողների, այնպես էլ հանձնախմբի կազմը: Դա սովետական երաժշտական մշակույթի հաղթանակն էր: Այս մրցույթը ցույց տվեց, որ մենք ոչ միայն կարող ենք լավ նվագել, այլև լայնորեն և խորը տիրապետել բուրժուազիայի մշակույթի ավանդներին: Իսկ եթե նայեմք աճող սերնդին, ապա, ազնվորեն ասած, նույնիսկ դժվար է պատկերացնել, թե ինչ է լինելու հինգ տարի հետո: Ոչ մի երկիր չի կարող երազել մեզան հսկայական աճի մասին:»

*1933 թ. մինչև 1948 թ. Ջ. Վ. Վարդանյանը եղել է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոցենտ, միաժամանակ՝ 1937-1938 թթ. ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արվեստի գործերի վարչության երաժշտական բաժնի վարիչ, իսկ 1938-1941 թթ. Հայֆիլհարմոնիայի տնօրեն, 1940-1942 թթ. ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության արվեստի գործերի վարչության պետի տեղակալ, 1942-1947 թթ. վարչության պետ, ապա ՀԿԿ Կենտկոմի արվեստի վարչության պետ և 1949 թ. ԽՍՀԿ Կենտկոմի ապարատի աշխատակից, իսկ 1956-ից՝ Խորհրդային Միության Կուլտուրայի մինիստրության երաժշտական ուսումնական հաստատությունների վարչության պետ:*

*Արվեստի վաստակավոր գործիչ Ա. Ա. Բարսամյանը*

վերհիշում է.

«Երբ 1937-ին Ջ.Վարդանյանը Լենինգրադի կոնսերվատորիայի համակուրսեցի Կոնստանտին Եփրեմի Մելիք-Վրթանեսյանի և ռեկտոր Սամսոն Գասպարի Գասպարյանի հետ մեր կոնսերվատորիայում հիմնադրեցին երաժշտագիտական ամբիոնը, դաշնակահարներից ես առաջին դիմորդն էի»:

Ամբիոնի ստեղծումը Հայաստանի երաժշտական կյանքում մեծ իրադարձություն էր, անշուշտ:

Հայաստանի Կոմունիստական կուսակցության ԿԿ Առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանը Ջավեն Վարդանյանին վստահորեն առաջադրում է կազմակերպչական-ստեղծագործական աշխատանքներ և եռանդուն թիկունք կանգնում նրա բոլոր նախաձեռնություններին:

Ջ. Վարդանյանը վարչակուսակցական աշխատանքին զուգակցել է կատարողական արվեստը և մանկավարժությունը, դասավանդել Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, միաժամանակ աշխատելով օպերային թատրոնի նվագախմբում: 1939-ին Մոսկվայում կայացած Հայ արվեստի և գրականության առաջին տասնօրյակին կազմակերպիչն էր, իսկ որպես մենակատար կլամենտահար՝ տասնօրյակի եզրափակիչ համերգի 2-րդ բաժնում Կոմիտասի անվան լարային քառյակի նվագակցությամբ կատարել է Կոմիտաս Վարդապետի «Կարավիկը» (կլամենտի և քառյակի փոխադրումը Ջ. Վարդանյանի) և Թունիկ Հովհաննիսյանի կլամենտի համար գրված «Պոեմ»ը: Տասնօրյակի ավարտից հետո հայկական արվեստի և մշակույթի մի շարք գործիչների հետ արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր արտիստի կոչման:

Եթե միայն նշենք Մոսկվայում Հայկական մշակույթի տան հիմնադրման և գոյության փաստը, որը նրա ջանքերի արգասիքն էր, ապա՝ 1958-ից Մոսկվայում Պ. Ի. Չայկովսկու անվան միջազգային մրցույթի պարբերաբար անցկացումը, ինչպես նաև առաջին անգամ ԱՄՆ կայացած Խորհրդային Միության արվեստագետների մեծ հաջողությամբ անցած համերգը: XX դ. խոշոր միջոցառումներից մեկը, ապա պարզ կդառնան նրա հասարակական երաժշտական գործունեության շրջանակները: Նրա որդին հայտնի դիրիժոր Ռուբեն Վարդանյանն է (ՀՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի նախկին գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր), ով երկար տարիներ Առլինգթոնի (ԱՄՆ) սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորն էր (մահկանացուն կնքել է 2008 թ-ին):

Ջավեն Վարդանյանը, փողային գործիքների Համափորձենական առաջին մրցույթի (1935թ.) դափնեկիր է դարձել այնպիսի հայտնի երաժիշտների հետ, ինչպիսիք էին՝ Ա. Վոլոդինը, Վ. Գենալերը, Դ. Ռայտերը, Ա. Շտարկը:

Ջ. Վարդանյանի գրչին են պատկանում ինքնակենսագրությունը և հուշերը՝ «Կյանքի հուշեր», «Մենայտություն մայրիկի հետ» և «Գրիգոր Արտեմի Հարությունյան»:

Առաջին երկուսն անկեղծ գրչով, ազնիվ ու անհույս զգացումով գրված էսսեներ են, հուզիչ ու կենսախինդ

պատմություններ, ծանր ու դժվարին մանկության և հեղինակի ստեղծագործական ուղու ծանր ու անելանելի վերջին օրերի մասին:

Անկասկած, մեծ հարգանքի ու երախտիքի անչափ հետաքրքրական խոսք է Գրիգոր Արտեմի Հարությունյանին նվիրված հուշերը, որտեղ հեղինակը հստակ որոշակիությամբ պետական անվանի այրուն բնութագրում է որպես ազգային և ժողովրդական գործիչ, տաղանդավոր ղեկավարի, մեծ հայրենասերի, ուշադիր ու սրտակից, նրբանկատ անձնավորության, այդ ամենը հաստատելով Հայաստանի մշակույթային ու տնտեսական կյանքի կառուցման ասպարեզում նրա կատարած Մեծ աշխատանքի ցայտուն ու վառ օրինակներով:

«Գրիգոր Արտեմի Հարությունյանը կարողացավ ապացուցել, որ նա տիրապետում է հմուտ ղեկավարին անհրաժեշտ բոլոր հատկանիշներին և ունակ է գլխավորելու հանրապետության կուսակցական կյանքը: Նրան հաջողվեց աստիճանաբար կարգավորել ԿԿ Բյուրոյի, Մինիստրների Սովետի, հանրապետության կարևոր այլ վարչությունների ու կազմակերպությունների աշխատանքը: Բազմաթիվ արժանի մարդիկ ընդգրկվեցին եռանդուն, գործուն աշխատանքում: Ընտրվում էին տնտեսական և հասարակական քաղաքական բոլոր բնագավառներում բեկում ստեղծելու ունակ կադրեր: Այդ ամենը բոլորն էին նկատում»:

Նույնպիսի եռանդուն մարդկանցից էր պետական ու երաժշտահասարակական, գործիչ, անվանի երաժշտագետ ու կլամենտահար, գիտակ ու շիտակ մանկավարժ Ջավեն Ղևոնդի Վարդանյանը:

Ռ-Դ Արվեստի վաստակավոր գործիչ Ստանիսլավ Ալեքսանդրի Լուժինի հուշագրությունից. «... հատկապես առանձնանում էր Վարդանյան անձնավորությունը, որպես նվագախմբի հմուտ դիրիժոր, մի գլուխ բարձր էր բոլորից: Ջավեն Ղևոնդի Վարդանյանը պարզ ու բարի էր: Նրան հարգում, քաջվում, շատերն էլ սիրում էին: Չեմ հիշում մի դեպք, որ ցանկացած բաժնի որևէ աշխատակից նրա մասին բացասական արտահայտվեր: Մականունով չէին կոչում, այլ սիրալիր և կարճ՝ Ջավեն էին անվանում: Նա ղեկավարներից միակն էր, ում Ե. Ա. Ֆուրցևայի ամեն երկուշաբթի խորհրդակցությունների ժամանակ դիտողություն չէր արվում: Նրան են պատկանում բազմաթիվ կարևորագույն նշանակության միջազգային, համամիութենական ու համազգային միջոցառումների նախաձեռնման, կազմակերպման ու անցկացման հիմնական մտահղացումները: Նրա ղեկավարած վարչությունը պետք է քաջատեղյակ լիներ երկրի 36 օպերային թատրոնների, 78 օպերետային և երաժշտական թատրոնների, 78 ֆիլիալային հարմոնիաների ու համերգային կազմակերպությունների, 100 ավելի գեղարվեստական ինքնագործ խմբերի, ԽՍՀՄ մշակույթային ձեռնարկությունների ու համապատասխան նախարարությունների ամեն մի շարժում, յուրաքանչյուր ելույթ, տարբեր կարգի ու բարդության հարցերի լուծում, մի խոսքով՝ «ձեռքը միշտ զարկերակին» էր: Այդ արտաքուստ հանգիստ ու զուսպ մարդը պաշտոնական, բայց ջերմ հարաբերություններ էր հաստատում բոլորի՝ թե՛ մարդկանց, թե՛ մինիստրություններ»:

# Ե Պ Կ երախտավորները

րի ու նրանց վարչությունների, և թե՛ ամենաբարձր կառավարական ու մշակութային ատյանների գործիչների հետ»:

Հավելենք, որ Ջավեն Վարդանյանի նախածնունդով եղածը են կազմակերպել տարբեր մակարդակների մրցույթներ ու փառատոներ՝ օպերային, օպերետային ժանրերի, ընդհուպ մինչև Չայկովսկու անվ. Միջազգային (դաշնակահարների, ջութակահարների, թավջութակահարների, մեներգիչների) մրցույթը, որն անմիջապես դասվեց միջազգային ամենահեղինակավոր միջոցառումների շարքին:

Մարդկային, ընկերական ջերմ հարաբերություններ ուներ Տ. Ն. Խրեննիկովի, Գ. Գ. Շոստակովիչի, Ա. Ի. Խաչատրյանի, Գ. Բ. Կաբալևսկու, Գ. Վ. Սվիրիդովի, նաև հայ անվանի գործիչների ու Հայաստանի կառավարության անդամների հետ, ովքեր մշտապես նամակագրական կամ հեռախոսային կապի մեջ էին ամենատարբեր բարդության խնդիրների լուծման և օգնության առիթով:

Բազմակողմանիորեն օժտված արվեստագետ Ջավեն Վարդանյանը նաև ստեղծագործել է՝ գրել է Ա. Բարանի (Անդրանիկ Բարայանց) «Արծվաբերդ» և «Բաղդասար աղբար» օպերաների լիբրետոները (Գուրգեն Բորյանի համահեղինակությամբ), ստեղծագործություններ կլանենտի համար:

Բեղմնավոր էր և նրա մանկավարժական գործունե-

ությունը (1940-ից՝ ԵՊԿ դոցենտ): Նրա ուսանողներից են արվեստագիտության թեկնածուներ, երաժշտագետներ՝ Սեդա Գրիգորյանը, Հեղինե Քաջախյանը, Մարիա Տոնյանը, Թերեզա Արազյանը, Մարգարիտ Հարությունյանը, Ռոբերտ Աթայանը, Աննա Բարսամյանը, Գևորգ Գյոդակյանը, Նամի Գեուրկովա-Միկոյանը, Քնարիկ Գրիգորյանը, Իզաբելլա Յոլյանը, Մաթևոս Մուրադյանը, կլամենտահարներ՝ Վրոյր Ազարյանը, Մկրտիչ Թուրակյանը, Լևոն Մուրաֆյանը, Գեղամ Ֆլյուրյանը, Գուրգեն Նալբանդյանը: Այս անհատականություններն անխափր, Հայաստանի Հանրապետության երաժշտագիտության և կատարողական արվեստի առաջատարներ են եղել:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Биографический словарь музыкантов-исполнителей на духовых инструментах., (Сост. С. Болотин), М.-Л., 1965, -140. Biograficheskij slovar muzykantov-ispolnitelej na dukhovyx instrumentakh., (Sost. S. Bolotin), М.-Л., 1965., - 140
2. Բուրադյան Ա. Գ., Ջավեն Վարդանյան, (ոռու. լեզվով), Եր., Կոմկո, 2013 թ.: Budaghyan A. G., Zaven Vardanyan, (rus. lezvov), Yer., Krunk, 2013 th.
3. //Красная газета., Ленинград, 4 марта, 1935. //Krasnaya gazeta., Leningrad, 4 marta, 1935.

**Բանալի-քաղեր.** Ջավեն Ղևոնդի Վարդանյան, երաժշտագետ, մանկավարժ, ԵՊԿ դոցենտ:

**Ключевые слова:** Завен Гевондович Варданян, музыковед, педагог, доцент ЕПК.

**Keywords:** Zaven Ghevond Vardanyan, musicologist, pedagogue, Dosent YSC.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԹՈՎԱՄԱՅԱՆ ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԻԿԻ (ծ. 17.12.1937 - 30.12.2017 թթ., Երևան), 1958 թ. ավարտել է Ռ.Սեյիբյանի անվ. երաժշտական ուսումնարանի փողային բաժնի շեփորի դասարանը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Կարապետյանի ղեկավարությամբ: 1958-1962 թթ. Մեղրիի երաժշտական դպրոցում երաժշտական տեսական առարկաներ է դասավանդել: 1967 թ. ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի փողային բաժնի շեփորի դասարանը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Խաչատրյանի ղեկավարությամբ: 1962-1968 թթ. աշխատել է շեփորահար՝ Երևանի «Նաիրի»-ն կինոթատրոնի ջազ նվագախմբում: 1962-1968 թթ. Երևանի N 32 և N 73 միջնակարգ դպրոցներում դասավանդել է երաժշտություն, գեղագիտություն և ղեկավարել երգչախումբ: 1964-1968թթ. աշխատել է շեփորահար՝ Երևանի քաղաքապետարանի «Երևան» փողային նվագախմբում, մասնակցել է շուրջ 100 համերգի: 1967-1977 թթ. աշխատել է շեփորահար՝ ՀՍՄՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի սիմֆոնիկ նվագախմբում, որի կազմում բազմաթիվ ձայնագրություններ է կատարել և մասնակցել ավելի քան 200 համերգի: 1978-1989 թթ. դասավանդել է «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա»՝ Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: 1977-2006 թթ. աշխատել է Հայաստանի ազգային ռադիոյի Երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության երաժշտական մեկնաբան, ավագ խմբագիր: Հեղինակել է ավելի քան 4000 ռադիո ծրագիր, ինչպես նաև 120 ռադիո ծրագիր Մոսկվայի «Օստանկինո» և 250 ռադիո ծրագիր ՎԷՄ ռադիոկայանների համար: 2005 թ. Վ. Թովմասյանն արժանացել է Հայաստանի Ազգային ռադիոյի «Ոսկե գրիչ» հատուկ մրցանակին: 1992-ից դասավանդել է «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա» ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության, տեսության և մանկավարժության ամբիոնում: 2000-2017 աշխատել է «Երաժշտական Հայաստան» գիտատեսական, քննադատական-հրապարակախոսական երաժշտական ամսագրի պատասխանատու քարտուղար: 2004-2017 աշխատել է «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, «Երաժիշտ» ամսաթերթի և ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդական աշխատությունների ժողովածուի խմբագիր: Գոցենտ 2004 թ.: 2011 թ. Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտում Թ. պաշտպանել է «Նվագախմբային փողային գործիքները և նրանց կատարողականությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը և ստացել Արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Թ. հեղինակ է՝ «Կյանքի ուրվագիծ. Միքայել Խաչատրյան» գրքի, Եր., ԵՊԿ հրատ., 2004 թ., «Փողային և հարվածային գործիքներ» գիրք, 2011 թ.: Թ. ատենախոսությունների և գիտական բազմաթիվ գրախոսականների հեղինակ է, հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Նրա հեղինակած գիտական, վերլուծական, քննադատական և հրապարակախոսական ավելի քան 1000 հոդված է տպագրվել «Սովետական Հայաստան», «Սովետական Արվեստ», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Գեղարվեստ», «Ուրբաթ», «Եթերում է Երևանը», «Եթեր», «TV-Channel», «Ալիք», «Արարատ», «Երաժիշտ», «Ձրուցակից», «Երաժշտական Հայաստան», «Музыкальная Академия» (Մոսկվա), «Գրականութեան եւ Արվեստներում» և «Շիրակ» (Հայեպ), պարբերականներում և ամսագրերում: Թ. 1981-ից՝ ՀՀ ժողովրդական, 1960-ից՝ Հայաստանի Թատերական գործիչների միությունների անդամ է:

**Сведения об авторе:** **ТОВМАСЯН ВАЛЕНТИН ХАЧИКОВИЧ** (род. 17.12.1937 - 30.12.2017). Окончил духовое отделение (труба) Государственного музыкального училища им. Р. Меликяна (класс Засл. артиста Арм.ССР А. М. Карапетяна). Преподавал специальность и теоретические предметы в музыкальной школе Мегри. С 1958 по 1962 гг. - Ереванская государственная консерватория (класс Заслуженного артиста Арм. ССР М. В. Хачатряна, 1967). 1962 - 1968 - трубач джаз-оркестра к/т "Наири" (Ереван). 1962-1968 - преподаватель истории музыки, эстетики и дирижер хора в общеобразовательных школах Еревана (N32, N73). 1964-1968 работал в духовом оркестре "Ереван" мэрии Еревана, выступал более, чем в 100 концертах. 1967-1977 работал в симфоническом оркестре Государственного комитета по телевидению и радиовещанию Армении, участвуя во многочисленных записях и выступал в более чем 200 концертах. 1978-1989 - лектор "Истории исполнительского искусства духовых инструментов" и "Методики обучения игре на духовых инструментах" в Армянском государственном педагогическом институте им. Х. Абовяна. 1977-2006 - критик, рецензент и старший редактор главной редакции музыкальных передач Армянской национальной радиокomпании, автор более чем 4000 радиoproграмм, автор 120 радиопередач для радиостанции "Останкино" (Москва) и 250 - для радио "Вэм" (Ереван). За работу в национальной радиокomпании присужден Специальный приз "Золотое перо" (2005). С 1992 года - лектор "Истории исполнительского искусства духовых и ударных инструментов" и "Методики игры на духовых инструментах" в ЕГК им. Комитаса на кафедре истории, теории исполнительства и педагогики. С 2000 года - Ответственный секретарь журнала "Музыкальная Армения", 2004-2012 - зав. отдела публикаций "Издательства ЕГК", редактор газеты "Еражшт", "Сборника учебно-методических статей". Автор книг: "Контур жизни. Микаел Хачатрян" (2004), "Медные, деревянные духовые и ударные инструменты" (2011). 2004 - доцент ЕГК им. Комитаса, 2011 - кандидат искусствоведения ("Оркестровые духовые инструменты и их исполнительство в Армении"). Автор более 1000 научных, аналитических, критических статей и рецензий в изданиях: "Советское искусство", "Советакан Айастан", "Ерекоюн Ереван", "Авангард", "Голос Родины", "Пятница", "Ерекоюн Ереван", "ТВ-канал", "Арарат", "Музыкант", "Собеседник", "Еражшткан Айастан" и "Музыкальная Академия" (Россия), Grakanutean Arvestneroo, "Ширак" (Сирия), принимал участие в национальных и международных научных конференциях.

**Information about the author:** **TOVMASSIAN VALENTINE KHACHIK** (was born in 17.12.1937 - 30.12.2017, Yerevan, Armenia). He graduated from the 1958 trumpet class of Renowned Artist of Armenia Ashot Karapetian at the Brass section of Melikian State Musical College. He taught the trumpet and theoretical subjects at Meghri School of Music 1958-1962. He graduated from the Brass section at Yerevan Komitas State Conservatory. He was in the trumpet class of Honoured Artist of Armenia Michael Khachatryan (1967). In 1962-1968 Trumpet player at the Jazz Orchestra of Nairi Cinema, Yerevan. In 1962-1968 he was a teacher of music and aesthetics, and Choir Conductor at Yerevan secondary schools N32 and N73. 1964-1968 Trumpet player at the Yerevan Brass Band of Yerevan Municipality, performing in over 100 concerts. In 1967-1977 Trumpet player with the Symphonic Orchestra of the Armenian State Committee for Television and Radio, making numerous recordings and performing in over 200 concerts. In 1978-1989 he was a Lecturer on "History of Wind Instruments Performing Art" and "Methodology of Wind Instruments Performing Art" at the Armenian State Pedagogical Institute. 1977-2006 he was an Observer, reviewer and senior editor at the Armenian National Radio Company's Music Department, authoring more than 4,000 radio programs. He also made 120 radio programs for Moscow's Ostankino Radio and 250, for VEM Radio Company in Yerevan. For his work, the National Radio Company awarded him the "Golden Pen" Special Prize (2005). Since 1992 - Lecturer of "History of Wind Instruments Performing Art" and "Methodology of Wind Instruments Performing Art" at the Yerevan Komitas State Conservatory's Department of History, Theory and Pedagogy of Performing Arts. Since 2000 - Executive Secretary of the Musical Armenia Journal. Since 2004 - Head of Publishing Department of the Yerevan State Conservatory, Editor of the Musician newspaper and the Conservatory's collection of educational and methodological articles. 2004 Published his first book called "Contour of Life. Michael Khachatryan". In 2004 Awarded the title of Associate Professor at the Yerevan Komitas State Conservatory. In 2011 Awarded the degree of Doctor of Arts by the Institute of Art of the National Academy of Sciences of Armenia, for doctoral thesis on "Orchestral Brass Instruments and Performance in Armenia". In 2011 Published his second book called "Brass and Wind Instruments". T. has written numerous scientific reviews and participated in national and international scientific conferences. He has published over 1000 scientific, analytical, critical articles and reviews in "Sovetakan Hayastan", "Soviet Art", "Yerekoyan Yerevan", "Avant-garde", "Hayreniqi Dzayn", "Fine Art", "Friday", "Yeterum e Yerevane", "Yeter", "TV-Channel", "Channel", "Ararat", "Musician", "Sobesednik", "Yerazhshtakan" "Hayastan", "Muzikalnaya Academia" (Russia), "Grakanutean yev Arvestner", "Shirak" (Syria) and other periodicals. T. has been a Member of the Journalists Union of Armenia since 1981 and the Armenia Theatre Workers Union since 1960.

## Резюме

Доцент ЕГК, кандидат искусствоведения **Товмасян Валентин Хачикович**. - "Завен Гевондович Варданыан".

Статья посвящена жизни и, прежде всего, деятельности Завена Варданыяна (1908-2008) – знаменитого армянского кларнетиста, музыковеда-теоретика, педагога, государственного и музыкально-общественного деятеля, лауреата Первой премии Всесоюзного конкурса музыкантов-исполнителей (1935), доцента Ереванской консерватории, Заслуженного артиста Арм. ССР (1940).

## Summary

Docent at YSC, Ph. D. in Arts **Tovmasyan Valentin Khachatryan**. - "Zaven Ghevond Vardanyan".

The article is devoted to the life and, above all, to the activities of Zaven Vardanyan (1908-2008), prominent Armenian clarinetist, musicologist and theorist, pedagogue, state and public figure, First Prize winner at the All-Union Competition of Music Performers (1935), Docent at the Yerevan State Conservatory, Honored Artist of Armenian SSR (1940).

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ  
ՓԻՏԷՃԵԱՆ (1935-2019 թթ.)

Երաժշտագետ, Նի-Եորթ (ԱՄՆ)  
Երանանի Կոմիտասի անուան պետական  
կոնսերվատորիայի պատուոյ փրոֆեսոր

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՇՄԻՉԵԱՆԻ «ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՆ» ԳԻՐՔԸ

Սկիզբը տե՛ս  
«Երաժշտական Հայաստան» ամսագրի  
1 (56) 2019 համարում

**Տ**ակաին պատիժը չգործադրուած, քահանայական ձեռնադրութեան նախօրեակին, Սայեաթ-Նովա անգամ մը ես ետ ընդունուելու յոյսով, բողոքելով թագաւորին կ'ըսէ.

«Եկ մի՛ վիթ-ի. իմ արունըս թ-ասերով,  
Թանգ առած իմ քու ահագին ծախսերով,  
Դուն ինձ պահիր ատլասով ու թ-ասերով...  
Սիվ կաբայում սքըվորութ-իւն չիմ ուզում»:

1759-ի վերջաւորութեան, քահանայ ձեռնադրուելէ յետոյ, որպէս Տէր Ստեփանոս կ'երթայ Պարսկաստանի Էնզելի նուահանգստային շրջանը քահանայագործելու: Սակայն, 1766ին Վրաստանի Զաքարայայի շրջանի հայաբնակ Կախօ աւանին մէջ գրչագրած՝ ձեռագիրէն կ'իմանանք, որ Վրաստան վերադարձած է. թէ՛ կերբ, չենք գիտեր:

Սայեաթ-Նովայի ընտանիքի մասին բնաւ տեղեկութիւն չկայ: Միայն յայտնի է, որ կինը՝ Մարմար մահացած է 1768ին, ետին ձգելով չորս անչափահաս զաւակներ՝ Օհան, Մելիքսէթ, Սառա եւ Մարիամ:

Մարմարի մահէն յետոյ, Տէր Ստեփանոս կը քաշուի Հաղբատի վանքը ու արեղայ դառնալով կը մնայ քսան հինգ տարի:

Այս շրջանին, վրացի Ի. Խելաշուիլի կրօնատորը Էջմիածնէն վերադարձին, երբ Հաղբատի վանքը կ'այցելէ, Սայեաթ-Նովա արեղան իր խուցը կը հրատիրէ զինք. միասին կը նախաճաշեն ու յարմար պահի մը, պատէն կախուած սազը ձեռք առնելով, ի զարմանս վրացի կրօնատորին կը կատարէ իր վերջին խաղերէն «Իմ խիղճ գըլուխ, քիզիդ էս ինչ պատահեց», ուր կը հանդիպինք հետեւեալ տողերուն.

«Թագաւորաց կամքով մէջլիս կանչուողիս,  
Թաւաղներուց միճըրուող ու յարգուողիս,  
Կարմիր կաբան արք ու փառքով հաքնողիս,  
Աբիդայի սիւ քուրճը բաժին էլա.

.....  
Յետոյ՝  
«Բրինձ էի, գարի դառնալն ինչի՛ն էր,  
Եիս աղանի, նուր լոր դառնալն ինչի՛ս էր.  
Ասէք, կրունատուր դառնալն ինչի՛ն էր.  
.....»

Ապշահար Խելաշուիլի չէր ալ հասկցած թէ՛ ինչո՞ւ Սայեաթ-Նովա Աստուծոյ փառք չի տար իր ներկայ վիճակին համար. այլ՝ կարօտով կը յիշէ մեղաւոր աշխարհի հետ ունեցած իր նախկին կապերը:

Վրացի կրօնատորը կ'ըսէ. - «Քանի որ աշխարհից հեռացաք, նուագելուց ու խաղերից ես ձեռք պիտի քաշէիք», «որ ականայ ուղղակի դպած կ'ըլլայ երգչի վիճակը սրտի ամենախոր վերքին» Կ'ըսէ Թահմիզեան:

Մեծ աշուղի կեանքին մնացեալ տարիները լռութեամբ կ'անցնին Հաղբատի վանքին մէջ:

ԺԹ դարուն, Սայեաթ-Նովայի մասին շարք մը առասպելատիպ գրոյցներ կը շրջին Թիֆլիսի մէջ, որոնց մասին իմանալու համար կը թելադրեմ, որ ուղղակի Թահմիզեանի գրքէն քաղէք զանոնք:

1795-ի աշնան սկիզբները Ադա-Մահմէդ Խան Ղաջար (1742-1797) Անդրկովկաս կ'արշաւէ պարսկական գերիշխանութիւնը վերականգնելու նպատակով: Գրաւելէ յետոյ Երեւանը, կ'արշաւէ Թիֆլիս: Սայեաթ-Նովա այս տագնապեցնող լուրը առնելով կը փութայ Թիֆլիս ու ապահովութեան համար իր զաւակները կ'ուղարկէ Մոզդուկ (հիւսիսային Կովկաս, որ այդ շրջանին Ռուսաստանի ապահովութիւնը կը վայելէր):

Ադա-Մահմէդ Խանի հեծելազորքը կը մտնէ Թիֆլիս: Կը սկսի կողոպտուն ու կոտորածք: Սայեաթ-Նովա հայերու հետ կ'ապաստանի բերդի տակի Ս. Գէորգ եկեղեցոյ մէջ: Երբ վայրագ զօրքերը կը հասնին եկեղեցի, ներս կը մտնեն, կը տեսնեն Սայեաթ-Նովան որ կ'աղօթէ. վրան կը յարձակին եւ կը պահանջեն որ դուրս գայ եկեղեցիէն եւ կրօնափոխ ըլլայ: Երբ Սայեաթ-Նովա կտրականապէս կը մերժէ, տեղն ու տեղը կը սպաննեն զինք 1795 Սեպտեմբերին:

Սայեաթ-Նովա հոգին կ'աւանդէ ըսելով. -  
«Չրիմանամ քիլիսադան, դոնմանամ Իսադան»,  
այսինքն՝ եկեղեցիէն չեմ ելլեր, Յիսուսը չեմ ուրանար:  
Եւ վերջապէս, Թահմիզեան այս սքանչելի գլուխը կը վերջացնէ հետեւեալ պարբերութեամբ, զայն կապելու համար յաջորդ գլուխին:

Սակայն, մինչեւ վերջ հասկնալու համար Սայեաթ-Նովայի արուեստի ու գործունէութեան յարաբերութիւնը կեանքին, անհրաժեշտ է ծանօթանալ նրա գեղագիտական հաստատմքին, որն ունի նաեւ ինքնուրոյն ճանաչողական նշանակութիւն, ներկայացնելով արուեստի մասին հայկական փիլիսոփայական մտքի միջնադար-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորութեամբ՝ Ալիև Աշոտի Փահլևանյանի ընդունմով է տպագրութեան 30.01.2020 թ. ներկայացրել է հեղինակը՝ 30.08.2017 թ.

րեան շրջանի վերին ու նոր ժամանակների սկիզբը:

**ԳԼՈՒԽ 5. ԳԵՂԱԳԷՏԸ**

Մեծ աշուղի Սայեաթ-Նովայի խաղերուն մէջ թաքնուած տուներէն, տարբեր բնոյթի խորիմաստ աստիճաններէն, այլաբանական ու պատկերաւոր արտայայտութիւններէն երեւան հանելով բանաստեղծ-երգիչին արուեստի ու իրականութեան հնարամիտ համաձուլումով հայեացքներու կոտ ամբողջութիւնը, դասաւորումը՝ «գիտակցուած համակարգ»ը, Թահմիզեան կը ներկայացնէ Սայեաթ-Նովան որպէս գեղագէտ արուեստագէտ:

Նախքան ներկայացնելը Սայեաթ-Նովայի գեղագիտական խոհերուն արգասիքը եղող այդ համակարգը, ան նկատել կու տայ ընթերցողին թէ՛ այդ համակարգի բաղադրիչ տարրերը յստակօրէն առնուած են հայկական միջնադարեան երաժշտագիտական հարցերու աւանդական շրջանակներէն, եւ սկսած նոր ժամանակներու յատուկ դրութիւններուն ձեւատրումն ու տարածումը:

Ապա, երաժշտագիտական հարցերու առընչութեամբ կը յիշէ երեք հեղինակներ՝ Թամպուրի Յարութիւն, Խաչատուր Էրզրումեցի եւ Գրիգոր Գապասազալեան, տալով անոնց երաժշտապատմական եւ գեղագիտական հայեացքները:

Այս բոլորէն յետոյ հեղինակը օրինակներով եւ բացատրութիւններով կու տայ Սայեաթ-Նովայի գեղագիտական գաղափարներուն համակարգը? Ես պիտի բաւարարուիմ նշելով միայն համակարգին մտքերը.-

- Աշուղին բնատուր ձիւրքը:
- Արուեստագէտին յատուկ ուսումն ու կրթութիւնը:
- Արուեստներն ու քերթողութիւնը հովանաւորող մեծ սուրբը, Փիրը՝ Մշոյ Սուլթան Ս. Կարապետը:
- Աշուղը որպէս սիրոյ երգիչ եւ իմաստութեան բաշխիչ:
- Երգը որպէս գեղեցիկի, գեղեցկութեան, գեղագիտութեան եւ բարոյագիտութեան գործօն:
- Գիտակցութիւնը բարիի եւ չարի գոյութեանց:
- Հակադիր երեւոյթներու շարքը:
- Աշուղական արուեստին կոչումը:
- Աշուղի առաքելութեան սիրոյն գոհաբերումը:
- Մարդկայինի ու համամարդկայինի ստորոգելիները շաղկապվող, անփոխարինելիօրէն անհրաժեշտ, մշտական օղակը՝ ազգայինի հարցը՝ ազգասիրութիւնը:

Թահմիզեան դիտել կու տայ, որ քննադատներ հարց ըրած են Սայեաթ-Նովայի լեզուի եւ ուղղագրութեան մակարդակը: Ուղղագրական սխալներն ու վրիպումները կ'ըսէ հեղինակը, հետեւանք են անոր աղքատ ծնողքի զաւակ ըլլալուն սչատճառաւ կանոնաւոր ու ամբողջական դպրոցական ուսում չստանալուն: Իսկ ինք ըլլալով Թիֆլիսահայ իր խաղերը գրած է այնպէս, ինչպէս լսած, արտասանած եւ խօսած է Թիֆլիսահայ բարբառը. աւելին, իր օրերուն տակաւին այդ բարբառը ոչ ուղղագրական կանոններու եւ ոչ ալ քերականական այլ երեսներու վրայ ուսումնասիրուած էր: Եւ Թահմիզեան այս կապակցութեամբ հետեւեալը ըսելով կը վերջացնէ սոյն գլուխը.-

«Չնայած դրան, հանճարեղ բանաստեղծ-երաժիշտն ընդհանուր առմամբ այնքան տաղանդաւոր կերպով, վարպետօրէն, գեղագէտի մօտեցումով, սիրով ու հմտութեամբ է կիրառել այն, որ Ախվերդեանի հրատարակած «Գուսանք»-ից յետոյ (1852 թ.), յիշեալ բարբառը կարող էր եւ արեւելահայ աշխարհաբարի հիմքը հանդիսացած լինել, եթէ ուշանար Խ. Աբովեանի «Վէրք Հասաստանի» դարակազմիկ վէպի լոյս աշխարհ գալը (1858 թ.)»:

**ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԱՍՏԵՂԾԸ**

Այս գլուխով կը ծանօթանանք հանճարեղ աշուղի գրական գործերու բնոյթին ու էութեանը:

Թահմիզեան ցոյց կու տայ թէ ինչպէս Սայեաթ-Նովա ձեւերու, գոյներու, երանգներու, ելեւէջներու, յանգերու եւ կշռոյթներու կիրարկումներով իր ստեղծագործական վարպետութիւնը հասցուցած է կատարելութեան շնորհիւ յարատեւ եւ տքնաջան աշխատանքի, գիշերներ լուսցնող երկունքի, ապրումներով լեցուն երկար պահերու, հակառակ իր յանկարծաբանի անգուզական տաղանդին:

Աշուղին, բանաստեղծ-երաժիշտին ստեղծագործութիւնը ընթանալով միաժամանակ երկու գետիներու վրայ՝ գրական ու երաժշտական, կարեւորութիւնը ատելի դրականին կը տրուի, զայն ընդունելով որպէս ստեղծագործութեան հիմքը: Հետեւաբար, Սայեաթ-Նովայի ստեղծագործութիւնը քննելու ժամանակ պէտք է ծանօթանալ անոր որպէս բանաստեղծի, կ'ըսէ Թահմիզեան: Սակայն, տրուած ըլլալով որ ըստ բաւականին բանասիրական-գրականագիտական ուսումնասիրութիւններ կատարուած են այս գետն ի վրայ, ան անտեղի համարելով վկայակոչումներն ու կրկնութիւնները կատարուած աշխատանքներու արդիւնքներուն, անհրաժեշտ կը գտնէ սակայն, «Սայեաթ-Նովայի ոտանաւորները զննել, դեռեւս ոչ այնքան յստակ գիտակցուած մէկ հիմնահարցի դիտանկիւնից. այն է, հանճարեղ բանաստեղծի խորապէս քրիստոնէական աշխարհընկալումն ու բարոյականութիւնը...»:

Սայեաթ-Նովայի բանաստեղծութիւններէն մասնա-յատուկ տողեր, տուներ նշելով ցայտուն կերպով երեւան կը հանէ անոր փիլիսոփայական խորհրդածութիւնները զինք շրջապատող աշխարհին, մարդոց, անոնց ընթանումներուն, չարին ու բարիին, կրօնքին, քրիստոնէական իր հայեացքին ու հաւատքին, երկնայինին՝ բացարձակին հասնելու իր ճիգին՝ պայքարին, եւ վերջապէս ու մանաւանդ իր «ցիղ»ին՝ ազգին՝ ընտանիքին մասին:

**ԳԼՈՒԽ 7. ԵՐԱԺԻՇՏԸ**

Այս գլուխը էջ 117-174, արդարօրէն կը կազմէ ամենամեծ բաժինը, ուր հեղինակը մէկ բառ. «երաժիշտը» խորագրով, ընթերցողին մտասելեռումը կը հրաւիրէ Սայեաթ-Նովայի արուեստին, այս անգամ երաժշտական բաղադրիչին վրայ:

Սոյն գլուխն իր ընդգրկած նիւթի հարստութեան ու այլազանութեան պատճառաւ մասերու բաժնելով պիտի ներկայացնեն զայն:

# Նվիրվում է Նիկողոս Թահմիզյանին

Ուրեմն, այս գլուխը բաժնած եմ հետեւեալ մասերուն.-

Ա) Սայեաթ-Նովայի խաղերուն հեղինակային պատկանելիութեան, հարազատութեան եւ վատերականութեան հարցերը — ստուգում ու եզրայանգում:

Բ) Սայեաթ-նովագիտութեան երաժշտական յեղաշրջման ուղիները:

Գ) Խաղերու մեղեդիներուն եւ հայերէն բանաստեղծութիւններուն զուգորդութեամբ գրական բնագրի բովանդակութեան եւ մեղեդիի յուզական բնոյթի համաձայնութեան երեսոյթին քննութիւնը:

Դ) Խաղերու ձեւակառուցման մէջ երաժշտական բաղադրիչի յատկացումը կարեւոր դերը:

Ե) Սայեաթ-Նովայի երաժշտական անհատական ոճը:

## Ա. ՄԱՍ

Թահմիզեան այս մասով Սայեաթ-Նովայի հայերէն բանաստեղծութիւններու նախ բանատր աւանդութեամբ, իսկ աւելի ուշ, գրի առնուած եւ քանիցս հրատարակուած 30 մեղեդիական հեղինակային պատկանելիութեան հարցի լուծման համար կը դիմէ սայեաթ-նովագիտութեան մէջ ամենահեղինակաւոր անձերու գործերուն, ինչպէս նաեւ անձերուն:

Մեծ աշուղին հրապարակէն հեռանալէն ու մահէն յետոյ երգերէն մաս մը մոռացութեան մատնուած է, ուրիշ մաս մըն ներծծուած ժողովրդա-գուսանական տարբեր խաղերու մէջ, իսկ մաս մըն ալ պահուած է ժողովրդի ծոցին մէջ, ինչպէս նաեւ կովկասահայ աշուղներու եւ մտատրական շրջանակներու մէջ:

«Գ. Ախվերդեանի կատարած մեծագործութիւնը կարեւոր նշանակութիւն ունենաւ Սայեաթ-Նովայի խաղերի եղանակների վերջիշման ու յարատեւման տեսակետից» կ'ըսէ Թահմիզեան:

Ղ. Աղայեանի բերած ծառայութիւնը, այս տեսակետէն մեծ է եղած: Անոր յիշողութիւնը իր ընտանեկան շրջապատի մէջ 1860-ական թուականներէն ի վեր երգուեր են Սայեաթ-Նովայի խաղերը: Իսկ աւելի ուշ, իր տան տարեցներէն գրի է առեր «Է» եւ «ՂԳ» խաղերը:

Յովհաննէս Թումանեան, ինք առանձին ճաշակով եւ ոգևորութեամբ կ'երգէ եղեր Սայեաթ-Նովայի խաղերը: Ան մեծ ձիգեր թափած է Սայեաթ-Նովայի խաղերը վերագտնելու եւ վերստին ժողովրդականացնելու համար: Թիֆլիս եղած ժամանակ «Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան» հետ անդրկովկասեան աշուղներու մրցումներ կը կազմակերպէ, ուր տարբեր շրջաններու յայտնի աշուղներուն առիթ կը տրուի վերակոչելու հին խաղերը:

Այս շարժումը արձագանք գտնելով Թիֆլիսի եւ Երեւանի հայութեան մէջ ծերունիներուն վերջիշումներով կ'ընդլայնուին Սայեաթ-Նովայի խաղերու եղանակներու հաւաքումի ու ձայնագրումի հնարարութիւնները:

Այս գետնի վրայ երաժշտագէտ Մ. Աղայեան եւ երգիչ Շարա Տալեան, համաձայն Թահմիզեանի, կը դառնան ամենավատերական հաւաքողներն ու գրանցողները մեծ աշուղի խաղերուն:

Ապա, կը տեսնենք, թէ ինչպէս երկար տարիներու

հետապնդումներէ եւ տենդոտ աշխատանքներէ յետոյ, 1946-ին Մ. Աղայեան եւ Շարա Տալեան լոյս կ'ընծայեն սայեաթ-նովեան 22 խաղերու երգ-եղանակներէ բաղկացած պատկառելի ժողովածու մը: Սակայն գործը հոս կանգ չառնէր: 17 տարի ետք 1963-ին, որ յոբելիական տարի էր, կը վերահրատարակուի յիշեալ ժողովածուն, այս անգամ հարստացած հինգ նոր խաղերու երգ-եղանակներով, ընդամենը 27 խաղերով:

Այստեղ, փակագիծ մը բանալով, կ'ուզեմ ըսել հետեւեալը, որ ընթերցողը հետաքրքրական պիտի գտնէ, թէ ինչպէս խորհրդային վարչակարգի տակ վախով գիտական աշխատանքները յառաջ կը տարուէին: Իրաւ բանասէրը, գիտութեան սիրոյն, որոշ վտանգ դիմագրաւելով կ'արտայայտէր իր միտքը եւ կ'ըսէր ճշմարտութիւնը: Ասիկա հերոսութիւն էր: Եւ, որովհետեւ Շարա Տալեան Սայեաթ-Նովայի «Դուն էն գլխէն» խաղը 1913-ին Թիֆլիսի մէջ Նիկոլ Աղբալեանէն ստրված էր, եւ տրուած ըլլալով որ Ն. Աղբալեան առաջին անկախ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամ էր եւ կրթական նախարար, ինչպէս նաեւ դաշնակցական, երբ 1969-ին Թահմիզեան «Սովետական Հայաստան» ամսագրին մէջ «Շարա Տալեան եւ հայ երգը» անունով յօդուածը կը ստորագրէր, որուն մէջ յիշուած էր Աղբալեանի անունը, տեսէք թէ Թահմիզեան ինչ կը գրէ այս մասին իր ծանօթագրութեան վերջաւորութեան.- «Թէ ես, եւ թէ մանուսանդ ամսագրիս յարգարժան խմբագրապետ Ս. Բայանդուրը մի քանի անհանգիստ օրեր ապրեցինք, այդ թուականին Ն. Աղբալեանի անունը հրապարակելու առթիւ, սակայն, բարեբախտաբար ամէն ինչ կարծես խաղաղ անցաւ»:

Թահմիզեան կ'ըսէ.- «Ընդամենը 27 անուն երգ-եղանակ, իսկ եթէ հաշուի առնենք Դ եւ Է խաղերի եղանակների «ծանր» տարբերակները եւս, ապա 29 մեղեդի»:

Մրանց մենք աւելացնում ենք մէկ միաւոր էլ «Դուն էն գլխէն» խաղի, Սպ. Մելիքեանի ձայնագրած «չափաւոր» ընթացքի տարբերակը, որով եղանակների ընդհանուր թուաքանակը հասնում է 30-ի»:

## Բ. ՄԱՍ

Տեսական երաժշտագիտութեան մէջ Սայեաթ-Նովայի խաղերու վերլուծման բաւական աշխատանքներ կատարուած են: Անոնցմէ առաջին գիտնականը Գ. Ախվերդեան ատենին շեշտած է թէ Սայեաթ-Նովայէտք է տիրապետած ըլլար «Պարսից մայր ու երկրորդական եղանակներին», եւ Թահմիզեան կ'աւելցնէ ըսելով.- «չիմանալով անշուշտ, որ ինչպէս պարսկական, այնպէս էլ արաբական ու տաճկական ձայնեղանակներն իրենց նմանակներն ունեն հայկականներում եւ հակառակը: Ու այստեղ կը մէջբերէ ոչ միայն Կովկասի Վարդապետի հայկական ուր-ձայնի եւ պարսկական, արաբական ու տաճկական եղանակներու համեմատական տախտակը, այլ զայն կ'ամբողջացնէ տալով ուր դարձուածք ձայներն ու անոնց նմանակները եւս: Ահա տախտակները.

- |     |              |             |
|-----|--------------|-------------|
| ԱՁ. | Առաջին ձայն  | = Հէֆտիլեահ |
| ԱԿ. | Առաջին կողմ  | = Սիկեահ    |
| ԲՁ. | Երկրորդ ձայն | = Հիսէլինի  |

- ԲԿ. Ասագ կողմն = Աճեմ
- ԳՁ. Երրորդ ձայն = Հիճագ
- ԳԿ. Վառ ձայն = Սապահ
- ԴՁ. Չորրորդ ձայն = Նեվ կամ Բավահան
- ԴԿ. Վերջ ձայն = Իուշար
- ԱՁ. դարձումաձք = Նեշարուր, Նեշարուրէք
- ԱԿ. դարձումաձք = Բուսէլիք
- ԲՁ. դարձումաձք = Շէհնագ
- ԲԿ. դարձումաձք = Ֆերահ, Ֆէզա, Աջէմ-աղրան
- ԳՁ. դարձումաձք = Էլիջ, Բուզգալ
- ԳԿ. դարձումաձք = Բէսթէնիզեար
- ԴՁ. դարձումաձք = Սէդեսահ-հիզգամ
- ԴԿ. դարձումաձք = Ռասա

Թահմիզեան այս տեսակետներով կու գայ ապա ապացոցանելու այն կարեւոր կէտը թէ՛ արդէն ԺԸ-րդ դար ու հայ երաժիշտները իրենց գիտական պաշարին մէջ ունէին այն բոլորը, որոնք յատուկ էին մերձարեւելեան երաժշտարուեստին: Եւ կու տայ հետեւեալ խիստ շահեկան բացատրականը.- «Եւ մասնատրապէս ձայնեղանակների (modes) կիրառութեան դէպքում հարցը բնաւ էլ այն չէ, թէ մի հայ, պարսիկ կամ թուրք երաժիշտ ինչպիսի անուանակոչութեան ձայնեղանակի հիման վրայ է երգում, այլ այն՝ թէ նա գործնականում ինչպէ՞ս է իրացնում այդ ձայնեղանակի արտայայտչական հնարատրութիւնները: Քանի որ նրանցից իւրաքանչիւրը դա անում է համաձայն իր ազգի, անմիջական շրջապատի ու տուեալ ժամանակի աւանդոյթներին, այլեւ իր անհատական ճաշակին»:

Գ. Այսպէստեանէ յետոյ Գ. Լեւոնեան կը խօսի այս հարցերու մասին: Թահմիզեան դիտել կու տայ, որ Գ. Լեւոնեան երաժիշտ չլլալով, պահանջուած ծանօթութիւնը չունենալով միջնադարեան հայ երաժշտագիտական տեսութեանց, Սայեաթ-Նովայի հայերէն խաղերու քննութեան կապակցութեամբ «պարսկական ձայնեղանակներու» հարցը առանել եւս կը սրէ: Եւ, հիմնուելով

վրացական աղբիւրի եւ յատկապէս այն պարագային վրայ, թէ երբ Հերակլ Բ. թագաւորի առջեւ կու գայ Սայեաթ-Նովա, պարսկական ձայնեղանակներուն վրացերէն բառեր յարմարեցնելով կ'երգէ, հեղինակը կ'աւելցնէ թէ այս պարագան կը պատկանի Սայեաթ-Նովայի վրացերէնով երգած խաղերուն, որոնցմէ ոչ մէկուն եղանակը յայտնաբերուած է տակաւին. ուստի ինչպէ՞ս կարելի կ'ըլլա համեմատել խօսքերը եղանակներուն հետ ու եզրակացութիւններու յանգիլ:

Գ. Լեւոնեան նոյնիսկ քայլ մը աւելի առաջ երթալով գանազան ուրուագիծերով ցոյց տուած է, թէ Սայեաթ-Նովայի հայերէն խաղերուն խօսքի երաժշտականութիւնը եւս ձեռք բերուած է պարսից դասական բանաստեղծներու գործածած շեշտադրութեան կիրառման միջոցով:

Թահմիզեան Ժ-րդ խաղին ձայնագրութիւնը բերելով կ'ապացուցանէ, որ նոյնպէս չէ ինչպէս Գ. Լեւոնեան կ'ըսէր. «Այդ խաղը բոլորովին տարբեր շեշտադրութիւններով ցոյց տուաւ մեր ժողովրդական երգերու եւ տաղային նմուշներու միջեւ նկատուող ընդհանրութիւնները»:

Ապա առնելով օրինակները, Թահմիզեան իւրաքանչիւրի մասին կու տայ շատ արժեքաւոր երաժշտութեան վերլուծական բացատրութիւններ:

Ապա, տալէ յետոյ Ա. Քոչարեանի կարգ մը շահեկան դիտումները, խաղերու կշռոյթի, ձեւի, շեշտադրութեան, ուժականութեան, կրկնակի, պարբերոյթի մասին, կ'անցնի խօսելու մեղեդիական «նուագաչափի» եւ «մուղամ»-ներու մասին, եւ բացատրականներ տալէ յետեւ կը շեշտէ, որ 1946-50-ական տարիներուն մեր արդի երաժշտագիտութեան մէջ, Սայեաթ-Նովայի հայերէն խաղերու եղանակներու ուսումնասիրութեան գծով կատարուող աշխատանքները կը դրուին լուրջ հիմքերու վրայ եւ կու տան շոշափելի արդիւնքներ:

**Քանայի-քաներ.** Սայեաթ-Նովա Ստեփանոս, Աննա, Թիֆլիս, աշուղական դպրոց, Նիկողոս Թահմիզեան, կեանքը և գործունեությունը, քահանայ, երգեր:

**Ключевые слова:** Саят-Нова, Степанос, Анна, Тифлис, ашугская школа, Никогос Тагмизян, жизнь и творчество, пастор, песни.

**Keywords:** : Sayat Nova, Stepanos, Anna, Tiflis, Ashug school, Nikoghos Tagmizyan, life and work, priest, king, songs.

**Տեղեկություններ հեղինակի մասին տե՛ս՝** //Երաժշտական Հալիստան, 1 (56) 2019, էջ 87:

**Сведения об авторе:** см. // Музыкальная Армения, 1 (56) 2019, С. 87.

**Information about the author:** // Go to Musical Armenia, 1 (56) 2019, P. 88.

## **Резюме**

Музыковед, почетный профессор ЕГК им. Комитаса **Григор Петросович Питеджян (Нью-Йорк, США)**. - «*Книга Никогоса Тагмизяна «Саят-Нова»*».

Автор - известный медиовед и знаток армянской церковной музыки - с любовью и досконально изучая книгу доктора искусствования, профессора ЕГК Никогоса Тагмизяна «Саят-Нова», по главам исследует и анализирует капитальный труд. Одновременно представляет и армянское гусано-ашугское искусство, вершиной которого до сих пор остается великий певец любви и прекрасной профессиональной народной музыки Саят-Нова. Оглавление книги Питеджян распределил по главам, данная статья состоит из 4-х глав (продолжение следует в следующем номере журнала). Автор представляет описательный метод анализа, в то же время характеризуя труд значительными выводами и оценивая как высокий вклад в армянское музыковедение.

## **Summary**

Musicologist, Honorary Professor of YSC **Grigor Petros Pitedjian (New York, USA)**. - «*Book of Nikoghos Tahmizian "Sayat Nova"*».

The author is a well-known medievalist and expert of Armenian church music with love and thorough studies the book of PhD Doctor of Art, Professor of YSC Nikoghos Tahmizian "Sayat Nova", explores and analyzes major work in chapters. At the same time author presents Armenian Gusan-Ashug art at the top of which still remains the great singer of love and beautiful professional folk music Sayat Nova. All titles of contents in the book were distributed by Pitedjian into chapters and this article consists of 4 chapters in the journal and the continuation follows in the next issue. The author presents a descriptive method of analysis while also assessing significant conclusions characterizing the work as a high contribution to Armenian musicology.

ԱՐԱՔՍՅԱ ԱՐՏԱՎԱԶԳԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Խմբավար ՀՊՄՀ  
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս  
E-mail: araks45@yahoo.com

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԽՄԲԱՎԱՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ  
ԽՄԲԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

**Խ**մբավարական արվեստը, որպես կատարողական արվեստի ինքնուրույն ճյուղ, ձևավորվել է դեռևս XIX դարում, թեպետ արմատները մեզ տանում են ավելի վաղ շրջան, երբ հին հունական թատրոնում երգչախմբի ղեկավարը (կորիֆեյը) ղեկավարում էր երգչախումբը՝ ոտքի հարվածով ընդգծելով ռիթմը: Հին Հունաստանում, դրա հետ մեկտեղ, արդեն լայն տարածում էր ստացել ձեռքերի, մատների, գլխի, մարմնի և այլ միջոցներով պայմանական շարժումների յուրահատուկ համակարգը՝ խելյոնոմիան (հուն. xeir – ձեռք, nomos – օրենք, կարգ), որի օգնությամբ խմբավարը, դիրիժորը (ֆր.՝ diriger – ուղղություն տալ, ղեկավարել) ցույց էր տալիս կատարողներին երաժշտության տեմպը, ռիթմը, մետրը, հնչյունի հարաբերական բարձրությունը, ինչպես նաև վերարտադրում էր մեղեդու ուրվագիծը՝ շարժումը դեպի վեր և դեպի վար: Երաժիշտների ղեկավարման հնագույն այս համակարգը գոյություն ուներ դեռ այն ժամանակ, երբ բացակայում էր հնչյունի բացարձակ բարձրության և տևողության գրառման կայուն կարգը: Արդեն XVII դարում երաժիշտներին կարող էր ղեկավարել խմբի մասնակիցներից մեկը, հաճախ՝ ջութակահարը, ով տակտը հաշվում էր՝ հարվածելով աղեղը ջութակին: XVII և XVIII դարերում խմբավարի պարտականությունները փոխանցվում են կլավեսինահարին կամ երգեհոնահարին, ով ուղղորդում էր խմբի կատարումն իր նվագով, բայց կարող էր ցուցումներ տալ աչքերով, մանուալ տեխնիկայով, գլխի շարժումով կամ էլ անգամ ոտքի ռիթմական հարվածներով, ինչպես դա անում էր օրինակ՝ Յ. Ս. Բախը:

XVIII դարավերջում վոկալ-գործիքային բարդ ստեղծագործությունների կատարման ժամանակ լայն տարածում է գտնում երկակի կամ եռակի խմբավարման ձևը: Օպերայում, օրինակ կլավեսինահարը ղեկավարում է երգիչներին, ջութակահար-կոնցերտմաստերը՝ նվագախումբը, իսկ երրորդ ղեկավարը կարող էր լինել առաջին թավջութակահարը կամ էլ երգչախմբի ղեկավարը (խորամայտները): Խմբավարների թիվը երբեմն կարող էր հասնել մինչև հինգի:

XVIII դարի վերջին, դիրիժորն ազատվում է նվագախմբում նվագելու պարտականությունից և ստանձ-

նում միայն երաժշտախումբը ղեկավարելու պարտականությունը: XIX դարի սկզբին, երբ խմբավարի ձեռքին հայտնվում է դիրիժորական փայտիկը (իտ.՝ bacchetta – փայտիկ, դիրիժորական փայտիկ), տակտի մասերի, մետրական առավել ճշգրիտ նշումների հնարավորություն է ստեղծվում, որն իրականացվում է ձեռքերի կորագիծ շարժումը կիրառելու շնորհիվ: Խմբավարության երկրաչափական մետրական սխեմաների առաջին քայլերը ևս նշմարվում են այդ ժամանակ, և հենց այդ սխեմաների ու ձեռքերի կորագիծ շարժման համակցման շնորհիվ, խմբավարությունը ձեռք է բերել ժամանակակից խմբավարման ձևի նախատիպը:

Նվագախմբի և երգչախմբի ղեկավարման արվեստում հեղափոխության իրականացումը պատկանում է Ռիխարդ Վագներին, ով հրաժարվում է դեմքով դեպի հանդիսատեսը խմբավարելու ձևից, շրջվում դեպի նվագախումբն ու երգչախումբը՝ երաժիշտների հետ լիարժեք և ամբողջական շփում սպաստելու նպատակով, ինչն իրապես պատմական շրջադարձ էր դիրիժորական արվեստում: Վագներն իրականացնում է նաև այդ և ձախ ձեռքերի գործառնությունների բաժանումը՝ այդ ձեռքը, դիրիժորական փայտիկով հանդերձ, հատկացնելով երաժշտական ստեղծագործության տեմպի և ռիթմի ցուցադրումը, իսկ ձախ ձեռքով նշելով երաժշտական գործիքների մուտքը:

Խմբավարություն սովորել, նշանակում է կատարելապես լսել երաժշտությունը ներքին լսողությամբ և վերարտադրել այն սեփական մեկնաբանմամբ՝ փորձելով լիարժեք ներկայացնել կոմպոզիտորի ստեղծագործության բուն գաղափարը: Խմբավարական արվեստը երաժշտական կատարողական արվեստի կարևոր մասն է, որում ավելի խորը և մասշտաբային է դրսևորվում նրա էությունը: Խմբավարական արվեստի բուն իմաստը երաժշտական ստեղծագործության խմբավարի մեկնաբանումն է: Նրա գործունեությունը շատ հետաքրքիր է, հրապուրիչ, ինչպես նաև բարդ և պատասխանատու, քանզի հանրահայտ խորհրդային դիրիժոր Ա. Պ. Իվանով-Ռադկևիչի կարծիքով. «Դիրիժորը պատասխանատու է ունկնդրի առջև ոչ միայն իր, այլև կատարողների մի ամբողջ խմբի համար, որի ղեկավարն է հանդիսանում: Բացի այդ, նա պատասխանատու է նաև նույն

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Դավիթ Գարսևանի Ղազարյան՝ 14.9.2020 թ. և ընդունվել տպագրության՝ 25.11.2020 թ., ներկայացրել է հեղինակը՝ 3.9.2020 թ.

այդ խմբի առջև. դիրիժորի խնդիրն այն է, որ ցույց տա երաժիշտներից յուրաքանչյուրին, թե ինչպես պետք է նա հնչի, որպեսզի ընդհանուր կատարումն առավել ամբողջական բացահայտի կոմպոզիտորի ստեղծագործական մտահղացումը» (6. էջ 10): *Տետևաբար խմբավարը պետք է զգա և ընկալի կատարողական խումբը՝ որպես միասնական, միաձույլ, բազմազայն և բազմահունչ գործիք՝ կազմված անհատական մտածելակերպ ունեցող, ստեղծագործող և նրբազգաց երաժիշտներից:*

Ահա թե ինչպես է բնութագրում դիրիժորի գործունեությունը հանրահայտ ֆրանսիացի դիրիժոր, կոմպոզիտոր Տեկտոր Բեռլիոզը՝ ասելով. «Դիրիժորը պետք է տեսնի և լսի, պետք է տիրապետի արագ հակազդմանը (ռեակցիային) և լինի վճռական, իմանա կոմպոզիցիայի արվեստը, երաժշտական գործիքի բնույթը և հնարավորությունները, կարողանա ընթերցել պարտիտուրը և, բացի այդ, տիրապետի առանձնահատուկ տաղանդի... և այլև, գրեթե բացահայտմանը չենթարկվող օժտվածությանը, առանց որի չի կարող ստեղծվել անտեսանելի կապ իր և իր կողմից ղեկավարվողների միջև: Իսկ եթե նա զուրկ է իր զգացումները նրանց փոխանցելու կարողությունից, ապա ամբողջովին զրկվում է ղեկավարող ներգործության իշխանությունից, որն է տեսակի ազդեցությունից: Այդ դեպքում նա արդեն գլխավոր չէ, ղեկավար չէ, այլ սովորական տակաղ հարվածող» (6. էջ 9):

Խմբերգային արվեստի ձևավորման արմատներն սկզբնավորվել են դեռևս մարդու գեղարվեստական և գեղագիտական դաստիարակության ակունքներից, երբ այն մի կողմից զարգանում և լայն տարածում էր ստանում որպես երաժշտական կատարողական արվեստի արտահայտման, պրոֆեսիոնալ կատարման, մեկնաբանման ձևերից մեկը, մյուս կողմից հանդիսանում էր մարդկանց հավաքական խմբերի հույզերի, զգացումների և ապրումների արտահայտման բազմաբնույթ ձև: Դրանով էլ պայմանավորված է խմբերգային երգեցողության մեծ ներուժը:

Մեծ է երգեցողության դերը մարդու կյանքում: Այն ուղեկցում է նրան ամենուրեք. թե ուրախության, թե տխրության պահերին: Մարդիկ երգել են միշտ՝ աշխատելիս, երեխային քնեցնելիս, պանդխտության մեջ զանվելիս, տարբեր ծեսերի ժամանակ և այլն: Այն միշտ ոգեշնչել է, մղել խիզախումների՝ լինի դա անհատական, թե՛ խմբակային:

Երգեցողությունը (վոկալ կատարումը) կարող է լինել ինչպես մեներգեցողություն (սոլո), այնպես էլ՝ անսամբլային (վոկալ եռյակ, քառյակ, կվինտետ և այլն) և երգչախմբային (ըստ Պ. Չեսնոկովի՝ երեք, և ավելի մարդկանց առկայություն, որոնք կատարում են նույն երգաբաժինը), որոնցում կարևորվում են երգչական շնչառությունը, հնչյունարտաբերումը և առոգանությունը: Առանց այս հիմնական ունակությունների, կատարումը գեղարվեստական չի կարող լինել ոչ մեներգեցողության մեջ, ոչ անսամբլում, ոչ էլ երգչախմբում: Իսկ երգչախմբային կատարման համար կարևոր պայման են դառնում նաև լարվածքը (երաժշտական ձայնաշարում առկա հնչյունների հարաբերակցությունն ըստ բարձրության) (2. էջ 64), և անսամբլը (նշանակում է մի-

ասին, միաձույլ կատարում), որոնք էլ հանդիսանում են խմբերգային երգեցողության հիմքը: Երգչախումբը երգիչներից բաղկացած միասնական կատարողական խումբ է, որն իրեն հատուկ միջոցներով բացահայտում է երաժշտական ստեղծագործության ներքին էությունն ու իմաստը՝ դրսևորելով մարդկային ապրումները, խոհերը, հույզերն ու զգացումները: Երգչախմբի մասնակիցներն ստանում են ոչ միայն գեղագիտական հանույք, այլև ձեռք են բերում երաժշտական այն բոլոր անհրաժեշտ գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որոնք հատուկ են խմբերգային երգեցողությանը, բնականաբար ուղղորդվելով երգչախմբի ղեկավարի՝ խմբավարի կողմից: Խմբավարի համար առաջնային դեր են կատարում տաղանդը և արտիստիկ օժտվածությունը, որոնց բաղկացուցիչ մասն են կազմում զարգացած երաժշտական լսողությունը, հիշողությունը, վառ երևակայությունը, մտքի թռիչքը, գեղագիտական բարձր ճաշակը, խառնվածքը, դիմախաղը, ինչպես նաև ձեռքերի բնատուր ճկունությունը: Խմբավարը գտնվում է հատուկ պայմաններում, որովհետև նրա գործիքը երգչախումբն է, իսկ արտահայտչամիջոցները՝ մանուալ տեխնիկան և ակտիվ դիմախաղը՝ համեմելով այն սեփական գեղարվեստական մտահղացմամբ:

XX դարի հանրահայտ դիրիժոր Ստոկոլվսկին ասում է. «Դիրիժորը պետք է լիովին ընկալի երաժշտության զգացմունքային բովանդակությունը... Հանձարեղ երաժշտական յուրաքանչյուր ստեղծագործություն ունի տրամադրություններ ներշնչող ուժ, ոչ մի ընդհանրություն չունեցող առօրյայի հետ: Դիրիժորը որքան ազդեցիկ կարողանա արթնացնել ունկնդրի մոտ այդ խոր, նուրբ և անորսալի ապրումները, այդքան մեծ է հավանականությունը, որ նա կհանդիսանա կոմպոզիտորի ստեղծագործության արժանի մեկնաբանողը» (6. էջ 12):

Երաժշտական կերպարը դրսևորելու, ստեղծագործության գաղափարն արտահայտելու համար խմբավարին օգնում է անհատական մոտեցումը: Խմբավարի գործունեությունը բազմաֆունկցիոնալ է: Նա և՛ մանկավարժ է, և՛ հոգեբան, և՛ Բարտիստ, և՛ կատարման ռեժիսոր, ինչպես նաև իր ղեկավարած խմբի դաստիարակը: Այստեղ կարևոր դեր են կատարում խմբավարի ոչ միայն երաժշտական և մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, այլև երաժշտի անհատականությունը: Ահա թե ինչպես է նկարագրում խմբավարին ֆրանսիացի հանրահայտ դիրիժոր Շ. Մյունշը. «Ձեր մտքերը, ձեր աշխարհընկալումը պետք է բխեն ձեզանից այնպիսի ուժով, որ կպարտադրեն նվազախմբին, ձեզ հետ միաժամանակ, վերապրել նույն ցանկություններն ու կրքերը, որպեսզի երաժիշտները չկարողանան չարտահայտել այն իրենց կատարման ընթացքում: Դուք պետք է փոխարինեք նրանց ձեր իսկ կամքով»: (6. էջ 8)

Ինչպես խմբավարի, այնպես էլ երգչախմբի երգիչների երաժշտական դաստիարակությունն իրականացվում է գործնական աշխատանքում: Որակյալ գործիքն անհրաժեշտ պայման է բարձրակարգ երաժշտի կա-

# Խ մ ք ա վ ա ր ա կ ան ա ր վ ե ս տ

յացման գործում: Ո՛չ խմբավարը, ո՛չ էլ անհատ կատարողը (դաշնակահար, ջութակահար և այլն) չի կարող կայանալ վատորակ գործիքով աշխատելով: Անհրաժեշտ է, որ խմբավարն ունենա երգչախմբում երգելու բավականաչափ ունակություններ, որպեսզի հստակ գիտակցի, թե ինչ պահանջներ է նա դնում երգչախմբի յուրաքանչյուր երգչի առջև, քանզի հնարավոր չէ սովորեցնել կամ պահանջել երգիչներից մի բան, որին չի տիրապետում խմբավարն ինքը: Խմբավարը շատ սահմանափակ է փորձերի մեջ ժամանակի առումով: Ուստի նա փորձերը պետք է անցկացնի նախապես մանրակրկիտ մշակված ծրագրով և պատկերացում ունենա, թե ինչպիսին պետք է լինի փորձերի ընթացքը՝ տվյալ ստեղծագործության գրագետ, իմաստալից և գեղարվեստական կատարումն ապահովելու համար: Բնչ խոսք, աշխատելաճը պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ (սիրողական) երգչախմբերի հետ տարբեր է, բայց հստակ է այն, որ երկու դեպքում էլ մոտեցումը նույնն է.

1. կարգապահություն,
2. մանկավարժորեն և հոգեբանորեն ճիշտ մոտեցում երգչախմբի յուրաքանչյուր արտիստ հանդեպ,
3. ճիշտ ընտրված ծրագիր՝ երգչախմբի կատարողական հնարավորություններին համապատասխան,
4. պատասխանատվության բարձր գիտակցում ինչպես խմբավարի, այնպես էլ երգիչների կողմից և այլն:

Խմբերգային երգեցողության մեջ կարևորվում են ոչ միայն խմբավարի, այլև երգչախմբի անդամներից յուրաքանչյուրի երաժշտական ընդունակությունները, գրագիտությունը, երաժշտությունն զգալու, վերապրելու և վերարտադրելու կարողությունը:

Յուրաքանչյուր խմբավար ունի իր ձեռագիրը, որին գումարվում է մանրակրկիտ աշխատանքի մի ամբողջ համակարգ: Այդ համակարգն իր մեջ ներառում է այն ամեն անհրաժեշտը, որը դառնում է կայացած խմբավարի և բարձրակարգ երգչախմբի արդյունավետ գործունեության հաջողության գրավականը: Լավ երաժիշտը, լինի խմբավար, կոմպոզիտոր կամ անհատ կատարող,

առաջին հերթին իր գործի պատասխանատու, անխոնջ մշակն է՝ անվերապահորեն նվիրված իր որդեգրած սկզբունքներին: Սա է այն հավատամքը, որը պետք է լինի խմբավարի գործունեության հիմնաքարը, մշտապես ձգտելով կատարելության հասնել խմբավարի բարդ և պատասխանատու գործում: Գերմանացի հանրահայտ դիրիժոր Օսկար Ֆրիդի խոսքերը հիրավի այս ամենի վառ ապացույցն են. «Պետք է ծնվել սրտով, որն ընդունակ է ընկալել ամենամուրբ երաժշտական տպավորությունները, պետք է դաստիարակել միտքը, որն ընդունակ է վերածելու այդ տպավորությունները գաղափարների, և պետք է ունենալ ամուր ձեռք, որպեսզի փոխանցի այդ գաղափարներն իր կոլեկտիվին»: (6. էջ 9)

## Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. //Երաժշտական Հայաստան., 1-2 (40-41) 2011 թ., Եր., ԵՊԿ հրատարակչություն: //Yerazhshtakan Hayastan., 1-2 (40-41) 2011 th., Yer.: EPK hratarakchuthyun.
2. Մելիք-Վրթանեսյան Կ. Ե., Տոնյան Մ. Ա., Երաժշտական բացատրական բառարան, Եր., Խորհրդային գրող., 1989 թ.: Mrelig-Vrdanesyan K. Y. Tonyan M. A., Yerazhshtakan batzatrakan bar'aran., Yer., Khohrdayin grogh., 1989 th.
3. Շեկունց Ա. Ա., Երգչախմբային արվեստ, Եր., Սովետական գրող, 1981 թ.: Shekuntz A. Yergchakhmbayin arvest, Yer., Sovetakan grogh, 1981 th.
4. Мусин И. А., О воспитании дирижера., Л.: Музыка., 1987. Musin I. A., O vospitaniy dirizhora., L.: Muzyka., 1987.
5. Чесноков П. Г., Хор и управление им., М.: Госмузизд., 1961. Chesnakov P. G., Khor i upravleniya im., M.: Gosmuzid., 1961.
6. Безбородова Л. А., Дирижирование., М.: Просвещение., 1990. Bezborodova L. A., Dirizhirovanie., M.: Prosvesshchenie., 1990.

**Բանալի-բառեր.** Խմբավարական արվեստ, անսամբլ, դիրիժոր, երգչախումբ, երաժիշտ:

**Ключевые слова:** дирижерское искусство, ансамбль, дирижер, хор, музыкант.

**Keywords:** Conducting Art, ensemble, conductor, choir, musician.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՐԱՔՍՅԱ ԱՐՏԱՎԱԶԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ծ. 26.11.1964 թ., ք. Երևան): Խմբավար ՀՊՄՀ Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս: Ավարտել է՝ 1984-ին Ն. Օստրովսկու անվան մանկավարժական ուսումնարանը, 1992-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Աշխատել է՝ 2001-2004 թթ. «Յոլեր» կանանց երգչախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և խմբավար, 1994-2002 թթ. Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ երգչախմբում, երգչուհի: Դասավանդել է՝ 1984-1997թթ. թիվ 99 միջնակարգ դպրոցում, երաժշտության ուսուցիչ, 1992 - 2004 թթ. ՀՊՄՀ և 2012-ից մինչ օրս ՀՊՄՀ Խմբավարության դասախոս: Աշխատել է՝ 2004-2012 թթ. Թեհրանի հայ մշակութային «Արարատ» կազմակերպություն, «Արարատ» երգչախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և խմբավար: Հայ երգչախմբային դիրիժորների ասոցիացիայի անդամ է: Հեղինակ է՝ գիտական և ուսումնամեթոդական հոդվածների և ձեռնարկի: «Խմբերգային Պարտիտուրի Ընթերցում», Եր., ԵՊԿ հրատարակչություն, 2020 թ., «Խմբավար - Խմբավարության առանձնահատկությունները», //Երաժշտական Հայաստան 1-2 (40-41) 2011թ., «Էդուարդ Մելիսի Էրակյան Արվեստագետ-Մանկավարժի դիմանկարը, Եր., Ջանգալ, 2018 թ.: Պարզևատրվել է՝ ՀՀ և Իրանի իսլամական հանրապետության կողմից միջազգային փառատոն-մրցույթի դափնեկրի, տարբերմախարությունների կողմից մրցանակների, պատվոգրերի և հավաստագրերի:

**Сведения об авторе:** АРАКСИ АРТАВАЗДОВНА ХАЧАТРЯН (17 ноября 1960), хормейстер. Окончила: школу # 11, 138, 155 (1978); Педагогический колледж имени Островского (1984); Ереванскую государственную консерваторию имени Комитаса (1992). Работала: учителем музыки в средней школе #99 (1984-1997); певицей в Армянском государственном филармоническом хоре (1994 - 2002); преподавателем дирижирования в АГПУ имени Х. Абовяна (1992 - 2004); основатель, художественный руководитель и дирижер женского хора "Цолер" (2001 - 2004); основатель, художественный руководитель и дирижер смешанного хора «Арарат» в армянской культурной организации "Арарат" (2004 - 2012, Тегеран); с 2012 - по настоящее время преподаватель курса хоровое дирижирование и хоровой класс (бакалавриат) АГПУ имени Х. Абовяна. Автор статей: "Дирижерское искусство Суть деятельности дирижера", //Музыкальная Армения 2011; "Портрет художника-педагога Эдуарда Мехаковича Элбакяна", //Зангак., 2018; Чтение хоровых партитур., учебно-Методическое пособие ., Ер.: Издательство ЕГК., 2020. Удостоена дипломов и почетных наград (Тегеран , Ереван).

**Information about the author:** ARAKSIA ARTAVAZD KHACHATRYAN Chair Lecturer, pedagogy of music, 1987 - 1992 Yerevan State Conservatory after Komitas, 1981 - 1984 Pedagogical college after Ostrovsky,, 1968 - 1978. N. 11, N. 138, N 155 school. 2012 - present ASPU after Kh. Abovyan, lecturer of choral conducting, 2004 - 2012 Armenian cultural organization "Ararat" in Tehran, the founder of the Mixed Choir "Ararat", artistic director and conductor. 2001 - 2004 The founder of the women's choir "Tsoler", artistic director and conductor. 1994 - 2002 Armenian State Philharmonic Choir, singer. 1992 - 2004. ASPU after Kh. Abovyan, lecturer of choral conducting. 1984 -1997, music teacher in school N. 99. 2013 Certificate, to chorus "Ararat" (artistic director, Araksya Khachatryan) for participation in the pan-Armenian music festival "Komitas Vardapet". 2012. Certificate to chorus "Ararat" from Tehran (artistic director, Araksya Khachatryan) for participation in the pan-Armenian festival "My Armenia". 2008 Certificate to chorus "Ararat" (artistic director, Araksya Khachatryan) for participating in the "One Nation, One Culture" festival. 2003 Certificate of Merit dedicated to the 80th anniversary of the ASPU after Kh. Abovyan, for the many years of honest scientific and educational activities. 2003 Certificate of Merit for the preparation of students from diaspora , as part of the festival with scientific, cultural and sport events; er of the Armenian Choir Association. She received several diplomas and certificates.

## **Резюме**

Дирижер, преподаватель Армпедуниверситета им. Х. Абовяна **Аракси Артаваздовна Хачатрян**. - "Дирижерское искусство. Сущность деятельности дирижера".

В статье дается короткий экскурс в историю становления дирижерского искусства. Здесь же говорится о сущности деятельности дирижера, умении руководить хором, умении передать образ хорового произведения и художественно-идейный замысел композитора.

## **Summary**

Conductor and lecturer at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (ASPU) **Araksia Artavazd Khachatryan**. - "Conducting Art. The essence of the conductor's activity".

In her article is doing a short excursion on the formation of conducting art. The article is about the essence of the conductor's activities, the ability to lead a choir, the ability to convey the image of a choral work and the artistic and ideological intention of the composer.

ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ  
ՀԱԿՈՒՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու,  
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս  
E-mail: armine1981hakobyan@gmail.com

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ  
ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ մոնոդիկ երաժշտության տարբեր ճյուղերի ստեղծագործությունների հավաքման, գրառման գործընթացն սկիզբ է առել XIX դարի երկրորդ կեսից, սակայն դրանց քանակական տվյալներն ու ժանրային ընդգրկումները զգալիորեն տարբերվում են միմյանցից: Քիչ գրառված երգերի շարքում են նաև միջնադարյան գուսանական երգերը (1. էջ 9): Գուսանական արվեստը բանաստեղծական տեքստի պահպանման առումով գտնվում է բավականին բարվոք վիճակում, քանի որ բազմաթիվ աղբյուրներից մեկ են հասել գուսանական արվեստի խոսքային նմուշներ: Սա պայմանավորված է այն բանով, որ ժողովրդական երգերի խոսքերն սկսել են հավաքվել ավելի վաղ՝ 1870-ական թվականներից և հավաքվել են հենց տեղում, ի տարբերություն եղանակների, որոնց հավաքումն սկսվել է XIX դ. 90-ական թթ. գաղթած կամ գաղթող գյուղացիներից (2. էջ 29): Մեզ հասած գուսանական երաժշտությունն այս առումով անմխիթար վիճակում է: Հին գուսանական երգերի մեղեդիներից գրեթե ոչինչ չի պահպանվել: Միայն XII-XIII դդ. գուսանական երգերից շատերը հասել են մինչև մեր օրերը: Մատենադարանում պահպանվող գուսանական երգերի խազավոր գրառումներն առայժմ չեն վերծանված՝ դրանց ընթերցման բանալին կորսված լինելու պատճառով (1. էջ 9):

Այս հանգամանքները խոչընդոտ են հանդիսանում գուսանական արվեստի հետքերը գտնելու ճանապարհին: Եղած նյութերն էլ, որոնք ենթադրաբար պատկանում են գուսանական արվեստին, խառնված են հայ մոնոդիայի մյուս ճյուղերին՝ ներկայանալով որպես ժողովրդական (ֆոլկլոր), աշուղական, տաղային արվեստի նմուշներ և այլն: Այս խառնաշփոթը հստակեցնելու համար հարկ է նշված ճյուղերից առանձնացնել և հիմնավորել այն երգերը, որոնք կարող են պատկանել գուսանական արվեստին, կամ լինել նրա՝ ժամանակի մեջ փոխակերպված արձագանքը:

Իհարկե, չափազանց դժվար խնդիր է, փորձել բացահայտել գուսանական երաժշտական արվեստի լեզվաճանաչական առանձնահատկությունները, հատկապես, երբ ոչ մի փաստացի տվյալ չունենք այդ արվեստի երաժշտական բաղկացուցիչի մասին: Սա պայմանավորված է նախ այն իրողությամբ, որ միջնադարյան ժողովրդապրոֆեսիոնալ երգերը հորինվել և տարածվել

են բանավոր ավանդամբ՝ թերևս նաև գրաճանաչության և երաժշտական գրառման ձևերի չիմացության պատճառով: Միջնադարում գրագետ հոգևորականության կողմից գրառվում էին հոգևոր երգարվեստի նմուշները, իսկ գուսանական երգարվեստին ուշադրություն չէին դարձնում՝ դիվային համարելով:

Մասնագետների կարծիքով (Ք. Ս. Քուշնարյան, Ռ. Ա. Աթայան. Ն. Կ. Թահմիզյան, Ա. Կ. Քոչարյան), իբրև միջնադարյան գուսանական արվեստի նմուշներ (3. էջ 51), դիտարկվում են Կոմիտասի գրառած «Ակնա շարի» երգերը, որոնք իրենց մեջ պահպանել են տվյալ ժամանակի գուսանական քնարերգության բնորոշ հատկանիշները (1. էջ 169):

«Ակնա շարի» վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք վերաբերում են պրոֆեսիոնալ երաժշտությանը և դուրս են ֆոլկլորային մտածողությունից: Դրանք պատկանում են միջնադարյան երաժիշտ-բանաստեղծ-նվագածուների՝ գուսանների ստեղծագործական ժառանգությանը:

Այդ երգերն, առաջին հերթին աչքի են ընկնում մի շարք ընդհանուր առանձնահատկություններով, որոնք բնորոշ չեն գեղջկական պարզ երգերին. դա զարգացած, բարդ կառույցն է, մեղեդային մտածողության զարգացման տրամաբանությունը, ձայնակարգային ուրույն հենքը, բանաստեղծական լեզուն և այլն: Քանի որ գուսանական երաժշտությունը, աշխարհիկ երգարվեստին բնորոշ իր առանձնահատկություններով հանդերձ, ավելի լայն լսարանի համար է, ուստի գուսանական արվեստին բնորոշ են նաև վառ զգացմունքայնության դրսևորումները՝ սիրային տենչանքներ, երջանկության, տառապանքների սպրումներ և այլն. հետևաբար այս ամենը պիտի արտահայտվեր նաև երաժշտության մեջ: Ուրեմն բնական է, որ գուսանական երգարվեստի մեջ պիտի լայնորեն կիրառվեին այն միջոցները, որոնք խթան կհանդիսանային վերը նշված սպրումներն ավելի տպավորիչ վերարտադրելու համար: Դրանք իրենց դրսևորումներն են գտել նաև ձայնակարգերի մեջ, որտեղ հանդիպում են հուզական տարբեր երանգներ ունեցող ձայնակարգերի համադրությանը՝ առատ շեղումներով, մոդուլյացիաներով, նաև լայնորեն կիրառվող զարդանախշերը և զարդոյորուն մեղեդիական դարձվածքները: Իհարկե, ձայնակարգային առումով բոլոր երգերն էլ հարուստ են

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝ 19.9.2020 թ. և ընթերցվել է գիտաժողովում, ընդունվել տպագրության՝ 1.9.2020 թ., ներկայացրել է հեղինակը՝ 25.8.2020 թ.

և օժտված ոչ միայն առատ զարդանախշերով, այլ տերա-  
ցիաներով, այլև մեծացրած և փոքրացրած ինտերվալ-  
ներով, լի շեղումներով և մոդուլյացիաներով (զարտու-  
դություններով), որոնք ձայնակարգին հաղորդում են ու-  
րույն հմայք, հարուստ և գունեղ երանգներ:

Ակնա երգերը ձայնակարգային առումով առանձնա-  
պես հետաքրքրական են: Շարի երկու անտունիները  
կազմված են ձայնակարգային մոդուլյացիոն սկզբ-  
ունքով:

Այս երգերն իրենց ծավալման ընթացքում կարծես  
մոդուլյացիայի են ենթարկվում՝ ստանալով տարբեր  
ձայնակարգային գունավորումներ: Հետաքրքրական են  
այն երգերը, որոնք օժտված են նույն տոնայնական ան-  
ցումներով՝ b էոլական – g էոլական:

Ալլ. Մանր. Largo assai [tempo rubato]

Դա՛ւ յար, հա՛ յար, աղ - վոր մի ծար - վու - թե  
Դա՛ւ յար, հա՛ յար, կըտ - ռիճ մի ա - նոր սի

են, լուն,

հա յար, կըս զը տեր նաց

է հ զը լուն ռիս խո վը սը

g էոլ

Ք. Քուշնարյանը նշում է, որ «Ակնա շարում» կան  
երգեր, որտեղ ելևէջը երկար պտտվում է ձայնակարգի  
միևնոր մեղիանտայի ոլորտում և դիմում է հիմնաձայնին  
միայն ավարտի պահին: Արդյունքում ստեղծվում է ձայ-  
նակարգի յուրօրինակ հարաբերակցություն, որը  
բնութագրական է XVIII-XIX դարերի աշուղական շատ  
երգերին (1. էջ 171):

Ստորև բերվող օրինաում «Անտունին» իջեցված  
հինգերորդ աստիճանով, կվարտային հենակետով  
դորիական ձայնակարգում է ծավալվում:

Հարկ է նշել, որ դորիական ձայնակարգը գեղջկա-  
կան երաժշտության մեջ համեմատաբար սակավ հան-  
դիպող ձայնակարգ է (4. էջ 41), սակայն որոշ ազգա-  
գրական գոտիներում ունի երաժշտաբարբառային նշա-  
նակություն: Ինչպես նշում է Ա. Փախլանյանը, այս ձայ-  
նակարգը լայն տարածում ունի Վասպուրական-Մոկս-  
Շատախ գոտու երգաստեղծության մեջ (5. էջ 118-119):  
Ավելացնենք նաև, որ այս ձայնակարգը տարածված է  
եղել Ակնում և բնորոշ է այդ շրջանի ժողովրդական  
երգերին:

Նշենք մի կարևոր հանգամանք, որը ևս բնորոշ չէ ժո-  
ղովրդական երգարվեստին: Խոսքը իջեցված հինգե-  
րորդ աստիճանով էոլական ձայնակարգի մասին է, որը  
գալիս է միջնադարից և տիպիկ հեղինակային երևույթ է:

Նման հետևության է հանգում նաև Ք. Քուշնարյանն՝  
այս դեպքին ավելացնելով նաև իջեցված վեցերորդ աս-  
տիճանով իոնական և իջեցված չորրորդ աստիճանով  
փոյուզիական ձայնակարգերը (6. էջ 536): Ակնա երգերի  
գերակշռող մասը դորիական կամ իջեցված հինգերորդ  
աստիճանով էոլական ձայնակարգում են:

էոլ V

փոյուզ IV

Անտունիների հաջորդ տարբերակը կվարտային  
հիմքով հիպոդորիական-էոլական ձայնակարգում է:

Դժ. Մանր. Largo [tempo rubato]

Աղ - վոր մի ծար - վու - թե սի -  
կըտ - ռիճ մի ա - նոր սի -

են, լուն

կըս - տեր է  
զը լուն զը - նաց է հ

զը ռիս խո - վը սը - լուն

Այստեղ նույնպես դիտարկվում է տոնայնություննե-  
րի տեղիցիային համադրումը (B-իոն. - g-էոլ.): Ինչպես  
նշվեց, այս երևույթը՝ տոնայնությունների տեղիցիային  
համադրումը, հետագայում լայնորեն օգտագործվել է  
աշուղական ստեղծագործությունների մեջ, ինչը կար-  
ծում ենք, մեկ անգամ ևս հավաստում է, որ աշխարհիկ  
պրոֆեսիոնալ արվեստի ներկայացուցիչների՝ աշուղնե-  
րի ստեղծագործությունները միջնադարյան գոսասնա-  
կան երկերի շարունակությունն են հանդիսանում և  
կրում են վերջինիս բնորոշ ստեղծագործական ձեռքբե-  
րումները, արդեն ձևավորված ստեղծագործական  
հնարները և այլն:

Գոսասնական երգերին բնորոշ գծերից է նաև լար-  
ված բարձրակետից մեղեդու հանգուցալուծումը դեպի  
հիմնահնչյուն: Ք. Քուշնարյանը նմանօրինակ ելևէջի  
զարգացման ընթացք գտնում է «Անտունին», «Օրոր»  
երգերում, երբ ձայնակարգի վերին օժանդակ ոլորտնե-  
րում ելևէջի ծավալումից, մեղեդին՝ շրջագարդելով հե-  
նակետային հնչյունները, վերադառնում է դեպի հիմնա-  
ձայն և հաստատվում (1. էջ 170): Հավանաբար, այս  
հնարի հիմքը նույնպես սկիզբ առնելով միջնադարյան  
գոսասնական արվեստում, այնուհետև փոխանցվել է ուշ  
ժամանակաշրջանի ստեղծագործողներին՝ աշուղներին:

Շարում կան երգեր, որոնք բովանդակության տաղա-  
չափական, ձայնակարգային և կառուցվածքային առում-  
ներով հարում են ժողովրդապրոֆեսիոնալ երգ-երաժշ-  
տությանը, և հիշեցնում մեր վաղ աշուղական և ուշ գու-  
սասնական երգերի ավանդույթները: Նման վառ օրի-

# Ֆոլկլորագիտություն

նակներից է «Պեզրկյանն իջեր է Խանը» երգը:

Գկ. Չափավոր. Moderato  
Միջակ. Allegretto

Ա - մար: Պե - գզը - կյանն ի - ջեր է խա - նը,  
լճի - ջե - բը ջուն, ցո - թելս ար - թուն,

աստ - վան ա - գո - ղե իր քա - նը, Տեր լո - սե խա - ղը - պին ծա - նը՝  
սերս ինչ ա - նուջ քան է մար - ղուն, ա - նա - վի - տուն կար - միդ վար - ղուն,

իզ - մա կար - թըն - նա, կար - թըն - նա:  
իզ - մա կար - թըն - նա, կար - թըն - նա:

Հ. Ճանիկյանն այս երգը վերագրում է նվագածուներին և աշուղներին, որոնք մշտապես ժողովրդական և միջնադարյան գուսանական երաժշտության պահպանողն ու փոխանցողն են եղել (7. էջ 455): Նվագածուները մասնակցել են ծիսական արարողություններին, քաջատեղյակ են եղել ժողովրդական և գուսանական ավանդական երաժշտության՝ հին ժամանակներից պահպանվող ժառանգությանը (3. էջ 175): Նրանք նաև տեղյակ են եղել արևելյան աշուղական տաղաչափական կանոններին, եղանակներին, որոնք Ակնում նույնպես տարածված ու սիրված են եղել (3. էջ 175): Այս երգի մեջ հիշատակվում է մեկ աշուղի անուն՝ Մայիլ Օղլի: Մայիլ Օղլի աշուղ անվանումն ապացուցում է, որ այդ անցումային ժամանակաշրջանում գուսան և աշուղ անվանումները, թերևս, հավասարագոր են եղել և ուշ շրջանում գոյատևել են միաժամանակ կողք կողքի:

Աշուղական երգերի կանոններից մեկն այն է, որ հեղինակներն իրենց հորինած երգերի վերջին տան մեջ հիշատակում են իրենց անունը: Բնական է, դա ունեցել է մի նպատակ, որ հետագայում հայտնի լինի և հիշվի հեղինակի անունը: Այս երգում հեղինակը հետևել է աշուղական օրենքին և իր անունը հիշատակել է վերջում:

Մայիլ օղլուն զարկավ սազը,  
Ինչ անուշ կըլլա ավազը.  
Դուն ուր արիք շիֆե նազը,  
Ես ալ արթնցա, արթնցա:

Տաղաչափական առումով երգը նույնպես ենթարկվում է աշուղական տաղաչափության հիմնական ձևերին:

Հետաքրքրական է այս նմուշը, որ, ասես, գտնվում է գուսանական արվեստից դեպի աշուղական արվեստ անցնելու սահմանագծին: Այն ցույց է տալիս աշուղական արվեստում սաղմնավորվող գծերը և միևնույն ժամանակ՝ գուսանական արվեստի շունչը:

Տաղաչափական առումով առանձնանում են նաև Շարի երկու անտունիները, որոնք հայրենների տաղաչափությամբ են.

Այ իմ հարըստի դըստրիկ, 7 վանկ  
Ծոցդ էգի, ծառդ արմավենի: 8 վանկ  
Արմավրն քու ծառդ կու լնի,  
Պյուպյուր քու ձեղըդ կու թառի:  
Նման տաղաչափություն ունեն Կոմիտասի «Ակնա

շարի» շատ երգեր՝ «Անտունի», «Օրոր», Ակնա ժողովրդական երգերի նորահայտ գրառումներից «Աղբյուր մի Մըզրա լեռը» անտունին, որն ի դեպ, Ռ. Աթայանը համարում է միջնադարյան գուսանական նշանավոր նմուշներից մեկը (8. էջ 52):

Միջնադարյան հայրեններին լիովին համապատասխանող վարպետորեն հյուսված մեղեդիներն, իրենց զարդարանքներով, ուրույն դարձվածքներով, պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանին բնորոշ արտահայտչամիջոցների, ոգու, խոսքի և երաժշտական լեզվի մյուս տարրերի:

Անդրադառնալով երգերին բանաստեղծական տեսակետից՝ հետաքրքիր է նշել նաև դրանց լեզվական առանձնահատկությունները: Հայրենների, անտունիների բանաստեղծությունները հորինված են ոչ թե գրաբար, այլ ժամանակի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, որը XII դարից սկսած դարձել է գրական լեզու: Այն երգերը, որոնց լեզուն հին կամ միջին հայերենով է (XII-XVI դդ), բնականաբար կրում են հնության կնիք: Նշենք, որ «Անտունիների» լեզուն հիմնականում միջին հայերենն է՝ բարբառային դրսևորումներով:

Հարկ է նշել նաև գուսանական երգերի մեղեդիների ռիթմական մտածողության մասին: Գուսանական երգերի ռիթմին բնորոշ է կվանտիտատիվ (ժամանակաչափական) բնույթը: Չէ՞ որ կվանտիտատիվությունը ռիթմի յուրահատուկ դրսևորում է, որը բնութագրական է հնագույն ժամանակների բանավոր ավանդույթի ժողովրդական և ժողովրդապարտֆեսիոնալ երաժշտությանը, որտեղ ռիթմը չափավորված է և ենթարկված կայուն բանաձևերի՝ ոտքերի: Ռիթմի այս տեսակի հիմնարար սկզբունքն է կարճ և երկար տևողությունների հարաբերությունը, բառի շեշտի անկախությունը տակտային շեշտադրությունից: Այս տիպի ռիթմի պայմաններում տակտի գիծն ստանում է գուտ բաժանարար, այսինքն սինտաքսիկ (շարահյուսական) նշանակություն: Ավելացնենք նաև, որ պարային բնույթի նմուշներում առկա են ռիթմի թե՛ կվանտիտատիվ՝ ժամանակաչափական և թե՛ կվալիտատիվ (շեշտային) դրսևորումները, ընդ որում տակտի մետրական միավորների սահմանները համընկնում են չափավորված ոտքի սահմաններին (8.):

Փաստորեն, միջնադարյան ժողովրդապարտֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության՝ գուսանական երգարվեստի ուսումնասիրությունը հանգեցրեց վերը նշված եզրակացություններին, որոնք բնութագրում են այդ արվեստի լեզվաոճական առանձնահատկությունները:

Երգերի վերլուծական աշխատանքի հմքում ընկած են Կոմիտասի, Ք. Քուշնարյանի, Ռ. Աթայանի և այլոց մշակած երաժշտատեսական սկզբունքները և մեթոդները:

Հարկ է նշել նաև, որ հայ մոնոդիկ երաժշտության այս ճյուղի լուսաբանումը ուշադրության մեծ կարիք ունի: Միջնադարյան երաժիշտ-բանաստեղծների՝ գուսանների ստեղծագործական ժառանգության և դրանց հարուստ երաժշտական լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրումը կարևոր է հատկապես աճող սերնդին՝ ճիշտ իրազեկելու ու մատուցելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Քուշնարյան Ք., Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Եր., Ամրոց Գրուպ, 2008 թ., - 512 էջ: *Qushnaryan Q.*, Hay monodik yerazhshtutyan patmutyan ev tesutyan hartzer, Yer., Amrotz Grup, 2008 th. - 512 ejj.
2. Մելիքյան Ս., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Եր., Մելրոնյան ֆոնդի հրատ., 1935 թ., - 88 էջ: *Meliqyan S.*, Urvagits hay yerazhshtutyan patmutyan, Yer., Melqonyan fondi hrat., 1935 th. - 88 ejj.
3. *Կոմիտաս*, Երկերի ժողովածու, հատոր 9, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999 թ., - 208 էջ: *Komitas*, Yerkeri zhoghovatsu, hator 9, Yer., HH GAA "Gityutun" hrat., 1999 th. - 208 ejj.
4. *Բրուսյան Մ. Ա.*, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր., Լույս, 1982 թ., - 320 էջ: *Brutyun M. A.*, Hay zhoghovrdakan yerazhshtakan steghtsagortsutyan, Yer., Luys, 1982 th. - 320 ejj.
5. *Пахлеванян А. А.*, Вопросы армянской музыкальной фоль-

- клористики., Ер., Издательство ЕРК, 2010, - 220 с. *Pakhlevanyan A. A.*, Voprosy armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Izdatef'stvo EРK, 2010, - 220 s.
6. *Кущнарев Х.*, Вопросы истории и теории армянской монодической музыки., Ленинград: Гос. муз. изд., 1958., - 625 с. *Kushnarev Kh. S.*, Voprosy istorii i teorii armyanskoj monodicheskoy muzyki., Leningrad: Gos. muz. izd., 1958. - 625 s.,
7. *Ճանիկյան Հ.*, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, Մ. Գ. Ռօտինյանցի տպարան, 1895 թ., - 516 էջ: *Dchanikean H.*, Hnuthihq Aknay, Thiflis: M. D. Rotinyantz tparan, 1895 th, - 516 ejj.
8. *Փահլևանյան Ա. Ա.*, Հայ երաժշտական ֆոլկլորի ռիթմիկայի ստանձնահատկությունները, Եր., Ամրոց Գրուպ, 2014 թ.: *Pahlevanyan A. A.*, Hay yerazhshtakan folklori rithmikayi arandznahatkutyunner', Yer.: Amrotz grup, 2014 th.

**Բանալի-քառեր.** Ակնա Շար, Կոմիտաս, Հ. Ծանիկյան, Ք. Քուշնարյան, Ռ. Աբայան, գուսանական արվեստ , ֆոլկլոր:  
**Ключевые слова:** цикл Акна, Комитас, О.Джаникян, Х. Кушнарев, Р. Атаян, творчество гусанов, фольклор.  
**Keywords:** Akna Shar, H. Janikyan, Q. Qushnaryan, R. Atayan, Komitas, gusan art, folklor.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱՎՈՐՅԱՆ արվեստագիտության թեկնածու: Սովորել և ավարտել է՝ 1997-2001 թթ. Երևանի Ռոմանո Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, 2001-2006 թթ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, 2006-2009 թթ. նույն բուհի ասպիրանտուրան: Գ-ասպիանդում է՝ 2006-ից առ այսօր Երևանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջում՝ դասախոս, 2017-ից առ այսօր Երևանի պետական մանկավարժական համալսարանի Երաժշտության Մանկավարժության ամբիոնի՝ դասախոս: Հեղինակ է՝ շուրջ 10 գիտական հոդվածների:

**Сведения об авторе:** АРМИНЕ АШОТОВНА АКОБЯН, кандидат искусствоведения. Окончила: Ереванский государственный музыкально-педагогический колледж им.Р.Меликяна (2001); Ереванскую государственную консерваторию им.Комитаса (2006); аспирантуру по специальности "Музыкаведение" (2009). Работала: с 2006 г. - в Ереванском государственном музыкально-педагогическом колледже им. Арно Бабаджаняна; с С 2017г. в Армянском государственном педагогическом университете имени Хачатуря Абовяна. Автор около 10 научных статей.

**Information about the author:** ARMINЕ ASHOT HAKOBYAN. Academic credentials candidate of PhD, 1997-2001 - student of Yerevan State music college after R. Meliqyan. 2001-2006 - student of Yerevan State Conservatory after Komitas, department "Muzikology". 2006-2009- aspirant of Yerevan State Conservatory after Komitas, department "Muzikology". Work experience Since 2006 – Yerevan Arno Babajamyana state musical-pedagogical colleje. Since 2017- Armenian state pedagogical university after Khachatur Abovyan.

Резюме

Кандидат искусствоведения, преподаватель АГПУ им. Х. Абовяна *Армине Ашотовна Акобян.* - "Специфика музыкального языка гусанского искусства".

В армянском музыкознании не было отдельного специального исследования, посвященного музыкальному компоненту народно-профессионального песенного творчества гусанов позднего средневековья. Сложность задачи состояла в том, что по сравнению с поэтическим творчеством гусанов, их музыкальное творчество было малодоступным, так как нотных записей музыки не существовало. В результате изустного бытования гусанской песни она "растворилась" в фольклоре, в таговом и раннем ашугском искусстве. В качестве достоверных образцов гусанского песнетворчества (по свидетельству О. Джаникяна, Комитаса, Х. С. Кушнарева, Н. К. Тагмизяна, Р. А. Атаяна) анализируются записанные Комитасом песни из сборника "Акна шар", впервые изданного армянской нотописью в 1895 году в Эчмиадзине. Анализ песен Акна позволил выявить целый ряд музыкально-языковых особенностей, которые составили представление о стилистике позднесредневекового творчества гусанов.

В заключение обобщаются результаты исследования и приводятся выявленные характерные особенности, присущие гусанскому песнетворчеству.

Summary

Candidate PhD., pedagogue ASPU after Kh. Abovyan *Armine Ashot Hakobyan.* - "The specifics of the musical language of the folk-professional gusan art".

In contemporary musicology there are still some uncovered questions concerning the creative heritage of medieval poets- musicians, gusans. These facts put obstacles in finding the tracks of gusan art. The existing materials, which belong to gusan art, are mixed with other branches of Armenian monodia, appearing as patterns of folklor, ashugh and tagh art, etc. Specialists (H. Janikyan, Q. Qushnaryan, R. Atayan, N. Tahmizyan, A. Qocharyan) consider Komitas' "Akna Shar" songs as patterns of medieval gusan art. The analysis of "Akna Shar" shows that these songs refer to professional music and are out of folk thinking.

They belong to the creative heritage of medieval poet-musicians or minstrels gusans.

**СВЕТЛАНА КОРЮНОВНА  
САРКИСЯН**

*Доктор искусствоведения,  
профессор Ереванской государственной консерватории  
им. Комитаса*

E-mail. svetlana.sarkisyan@mail.ru

**КАНТАТА “ПЛАЧИ АРМЕНИИ” ТОМАСА БУХОЛЬЦА**

*Вспомни, Господи, что над нами свершилось;  
призри и посмотри на поругание наше.  
Наследие наше перешло к чужим, дома наши – к  
иноплеменным.*  
Плач Иеремии 5, 1-2

*Кожа наша почернела, как печь,  
от жгучего голода.  
Жен бесчестят на Сионе, девиц –  
в городах иудейских.*  
Плач Иеремии 5, 10-11

*Обрати нас к Тебе, Господи, и мы обратимся;  
обнови дни наши как древле.*  
Плач Иеремии 5, 21

Эти ветхозаветные строки на латинском из “Плача Иеремии”, пророка VII в. до н.э., легли в основу трех из шести частей кантаты “*Armenia clamans*” («Ողբը Հայաստանի», “Плачи Армении”) для двух гобоев, чтеца и смешанного хора Томаса Бухольца. Автор воспользовался пятой, последней главой “Плача пророка Иеремии”, озаглавленной “Молитва о милосердии”<sup>\*</sup>.

Слова Иеремии являются литературным текстом хоровой партии, они составляют содержание четных частей кантаты, именуемых композитором “*Invocatio*” (лат. *воззвание*, арм. *կոչ*): *Invocatio I, Invocatio II, Invocatio III*. Нечетные части кантаты – первая, третья, пятая – озаглавлены “Тренодия” (лат. *trenodia* – жалобная песнь), соответственно: *Trenodia I, Trenodia II, Trenodia III*. В “Тренодиях” (в партитуре эти части

идентифицированы с армянским языком как «Ողբերգ», с русским – “Плач”) композитор вводит партию чтеца, предусматривая исполнение на немецком либо на армянском языке на фоне вокализа в партии хора.

По своему содержанию ведущую в кантате Бухольца партию чтеца составляют документальные тексты о Геноциде армян, относящиеся к июлю 1915 года в Адане (используется запись консула Кукхоффа), августу 1915 года в Урфе (запись одного австрийского свидетеля), июлю 1916 года (запись графа Вольф–Меттерниха) и 1918 года (запись доктора филологии И. Лепсиуса). Эти тексты взяты композитором из всемирно известного Архива Иоганнеса Лепсиуса в Галле<sup>\*\*</sup>.

В партитуре указаны номера всех архивных фондов: LXXVII, LXXVIII, LXXIX, LXXX – в *Trenodia I*, CXXX–CXXXI – в *Trenodia II*, LXIX – в *Trenodia III*. Эту последнюю заключают слова самого Бухольца: «*Möge Gott die schmerzen lindern und Armenien frieden geben*» («Աստված, մեղմացրո՞ւ ցավերը և խաղաղություն տուր Հայոց աշխարհին»)\*\*\*.

Теперь об авторе и его произведении. Томас Бухольц (*Tomas Buchholz*), композитор и теоретик музыки, родился в 1961 году в Айзенахе. Основное образование получил в Высшей музыкальной школе Лейпцига у Гюнтера Нойберта (1983–1988) и в Берлинской Академии искусств у Рут Цехлин (1988–1991). Как теоретик музыки Бухольц сотрудничает с Университетом

<sup>\*\*</sup> Архив Иоганнеса Лепсиуса (1858–1926), крупнейшего немецкого общественного деятеля, доктора филологии, историка, является важнейшим источниковедческим центром Европы по проблеме Геноцида армян. Факты, связанные с трагическими событиями в Османской империи, Лепсиус, будучи непосредственным свидетелем, начал тщательно комплектовать уже в 1894–1896 годах. В 1914 году он основал в Галле Германо–армянское общество, был его председателем до своей кончины в 1926 году.

<sup>\*\*\*</sup> Перевод всех текстов на армянский язык в партитуре Т. Бухольца осуществлен немецким арменоведом, доктором наук, профессором Университета Мартина Лютера в Галле Арменуи Дрост–Абгарян.

<sup>\*</sup> Интересно, что избранные строки на латинском из первой, третьей и пятой глав “Плача Иеремии” служат литературной основой наиболее масштабного духовного произведения Игоря Стравинского, созданного им в последний период творчества. Это “*Threni*” (“Плачи”) для 6 солистов, смешанного хора и оркестра (1957–1958) – произведение, благодаря объединению техники серийной композиции с канонами старой полифонии, ставшее образцом для композиторов последующих поколений.

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Աննա Մենի Արևշատյանի՝ 14.11.2020 թ. և ընթերցվել է գիտաժողովում, ընդունվել տպագրության՝ 16.11.2020 թ., ներկայացրել է հեղինակը՝ 10.10.2020 թ.



Томас  
Бухольц

Мартина Лютера в Галле и Академией Хайнриха Шютца в Тюрингене. С 1996 года живет в Галле.

Культурными связями с Арменией Бухольц обязан нашему талантливому композитору Степану Лусикяну (1956–2001), в 1990–е годы, будучи на посту замминистра культуры Армении, основавшему Центр духовной музыки. Участие Лусикяна в Фестивале духовной музыки в Галле и знакомство с Бухольцем, в те годы председателем регионального Союза композиторов, определило будущее общение Бухольца с Арменией и армянскими музыкантами. В течение 1998–2000 годов он вел мастер–классы по композиции в Ереванской государственной консерватории им. Комитаса, приезжая два раза в году – весной и осенью, одновременно читал тематические лекции о музыке XX века и эпохе Барокко, в частности, о Высокой мессе *h-moll* И. С. Баха. Добавим, что он снабдил библиотеку Ереванской консерватории новыми научными изданиями о музыке.

Именно в Ереване Бухольц сочинил кантату *“Armenia clamans”* и “Весеннее трио” для скрипки, альтя и фортепиано, которые были исполнены. Впервые кантата была представлена Ереванским камерным хором под руководством Арутюна Топикяна в 1999 году. Немецкая премьера кантаты с тем же хором, но совместно с местными музыкантами (гобоисты Бернхард Фостер и Вальтер Клиннер, чтец Херманн Гольц) состоялась в 2000 году в городской церкви Галле. Позже Ереванский камерный хор во главе с Арутюном Топикяном с успехом повторил это исполнение в 2005 году в Галле в рамках ежегодной Недели музыки *«Die Hallischen Musiktage»* и было записано на CD.

“Весеннее трио” вместе с Тремя ариями–барокко для скрипки и органа, “Домино” для двух фортепиано, Рапсодией для альтя и гитары, фортепианными пьесами *“Exclamations”* (“Восклицания”), а также камерной симфонией “Эллипс” составили программу памятного авторского концерта Томаса Бухольца в ереванском Доме камерной музыки в октябре 2000 года\*.

Концерт состоялся силами студентов Ереванской государственной консерватории им. Комитаса, сам Бухольц выступил как дирижер и как автор комментариев к произведениям. В своем вступительном слове композитор остроумно заметил, что его музыка “нахо-

дится между Бахом и Генделем”, имея в виду степень постоянного притяжения двух великих соотечественников, а также, видимо, то, что родился он в Айзенахе, родине И. С. Баха, а теперь живет в Галле, на родине Генделя.

Действительно, полюс притяжения духовной музыки эпохи Барокко, как и наследие более раннего времени, чрезвычайно важен для Бухольца. В этом плане его творчество вписывается в общее направление новой сакральной музыки, кстати говоря, далеко не всегда связанной с использованием священно–канонических и литургических текстов. Примером может служить кантата *“Orplid”*, исполненная в Лейпциге на концертах к 250–летию смерти И. С. Баха. Показательна и его *“Missa solaris”* для сопрано, баритона и смешанного хора – композиция в пяти разделах, литературной основой которой в начале и в конце произведения служит текст Ординария мессы: *Kyrie eleison Christe eleison Kyrie eleison u Dona nobis pacem*, а в середине – стихи из “Гимна Солнцу” св. Франциска Ассизского и строка на латинском из Второй книги Псалтири (Ps 44, 23).

Опыт работы с разными текстами, осуществленный Томасом Бухольцем в *“Missa solaris”* (1991), показателен и для кантаты *“Armenia clamans”*, где также совмещаются различные тексты. Не менее показательна и адаптируемая композитором вокальная техника, объединяющая традиционное псалмопение со свободным скольжением звука, что сообщает музыке достоверность современного мировосприятия. В целом стоит отметить, что композиторская позиция Бухольца не замыкается на стиливой реконструкции прошлого. Автор много и весьма успешно экспериментирует с формой и музыкальным материалом давних эпох. Интересен в этом отношении опус *“BACH 2000”*: Камерная музыка для флейтовых инструментов, гитары и ударных, созданная в один год с кантатой *“Armenia clamans”*, однако по стилистике отличающаяся от нее абстрактным характером используемого материала.

В рассматриваемой кантате *“Armenia clamans”* Бухольца сочетаются три вида текста. Это документальный текст у чтеца *sprechstimme*, затем ему сопутствующий чисто фонетический, невербальный текст у хора (части *Trenodia I – II – III*) и литературный текст “Плача пророка Иеремии” у хора (части *Invocatio I – II – III*). Сочетание столь дистанцируемых по стилю и эпохе текстов напоминает аналогичный прием в известной кантате “Уцелевший из Варшавы” для чтеца, мужского хора и оркестра А. Шенберга, где в партии чтеца повествуется о реальных событиях в варшавском гетто, после чего, как обобщение, следует уподобленный гимну хоровой унисон на иврите с текстом староеврейской молитвы Израиля к Адонаю (Господу).

Однако фактом сочетания документального текста (партия чтеца) с ветхозаветным (партия хора) сходство обеих кантат заканчивается. В музыкально–концептуальном плане они абсолютно различны, ибо разнятся время и сам адресат музыкального повест-

\* По этому поводу нами была опубликована статья в газете “Азг”, Ереван, 31 октября 2000 года.



хоровых партиях всех “Тренодий” (“Плачей”). Правда, в *Trenodia I* хор вокализует на спаянных согласных “ng”, но в *Trenodia II* – уже на гласных “a”, “e”, “i”. Протянутость голосами хора отдельных гласных, вычленение слогов, дифтонгов, как и прием внутрислогового распева, ассоциативно воспроизводят общую раннекатолическую певческую музыкальную практику, заметно проявляющуюся в частях *Invocatio*. Отметим, что в *Invocatio III*, самом экспрессивном в кантате воззвании к Господу, в отличие от частей *Invocatio I* и *Invocatio II* партии обоих гобоев объединены с хором. Инструментальный музыкаль-

вованная. Созданная в конце XX века кантата “*Armenia clamans*” Бухольца проникнута мыслью и чувством о Геноциде армян. При этом композиторская позиция не связана с цитированием или стилистической имитацией национального мелоса; автор склонен лишь к косвенным приемам, тонко наводящим на “армянский след”. В частности, это опевание реликтовых интонаций – на секундах и терциях с их инверсиями, а также самой манеры интонирования – микротоновые колебания. Этот колорит более всего отражен в партиях двух гобоев, используемых во всех частях *Trenodia* и в последней, *Invocatio III*, имеющей итоговое значение после кульминационной *Trenodia III*.

Не случаен выбор композитором двух гобоев, тембр которых приближен к народному инструменту дудук. Он более других духовых инструментов в Армении является аналогом человеческого голоса, глубины дыхания и вибрации, для него естественными становятся тончайшие интонационные изменения в зоне одного тона. В музыке Бухольца создающая ощущение импровизационной первозданности игра гобоев, тем не менее, в партитуре с точностью фиксируется благодаря системе современной нотации.

Два гобоя, начиная произведение с интонационных колебаний в зоне “ля”, будто настраивают весь, преимущественно строгий, материал кантаты на этот звук. Далее он становится для тематизма сквозной тоновой опорой, повторяется чаще других в партиях и гобоев, и хора, именно на данном звуке строится кульминация в *Trenodia III*. Выполняя роль своего рода гравитации, то есть мелодического притяжения, конструктивная функция звука “ля” косвенно ассоциируется с древнеармянской традицией бурдонного голосоведения. Еще одно замечание по поводу этого звука, в латинской фонетике “a”. Эта открытая гласная фонема, наиболее удобная для вокализа, преобладающе используется в

ный материал, вначале противопоставляясь хоровому, позже с ним идентифицируется. Краткие соло хора на вокализе фонемы “a” вторят фразам гобоев. Хор четырехкратно взывает *Domine*, все более растягивая это сакральное слово “*Do-mi-ne*”, особенно его последний слог, ассонансно плавно переходя к заключительному *Amen* на общем звуке “ля”.

... Появившаяся в канун 85-й годовщины Геноцида армян в Османской Турции кантата Томаса Бухольца “*Armenia clamans*” органично вписывается в общественно-научную деятельность многочисленных немецких просветителей, более ста лет ратующих за всемирное осознание великой трагедии армянского народа.

P.S.

Необходимо дополнить статью о кантате “Плачи Армении” фактами творческой биографии Томаса Бухольца в XXI веке, свидетельствующими о важности его интереса к духовной культуре Армении. А в этом значительную роль сыграло сотрудничество с историком, теологом, арменоведом доктором–профессором Херманном Гольцем (1946–2010), основавшим в 1981 году в Галле Архив И. Лепсиуса, а в 1988 году в Потсдаме Дом–музей Лепсиуса и в Галле в Университете Мартина Лютера исследовательский Месроп-центр, а также с коллегой Гольца доктором–профессором Арменуи Дрост–Абгарян. Безусловна роль и супруги Бухольца Эрмине Бухольц–Назарян, в 1990–е годы, как переводчица, сопровождающей композитора в Ереване.

С начала века Бухольцем был написан целый ряд “армянских” опусов. Это “*Шаракан*” для сопрано и камерного оркестра (2002), “*Lacrymae*” – Концерт для альты и хора (2002), “*Fractale*” для большого симфонического оркестра (2010), “Посвящения” для струнного

оркестра (2012), наконец “*Armenische Hymnen*” (“Армянские гимны”, то есть “Шараканы”), для солирующего меццо-сопрано, смешанного хора и двух гобоев (2013).

Премьера последнего произведения состоялась в Ереване 21 мая 2015 года в зале Музея-института Комитаса в рамках международных мероприятий в Германии и Армении, посвященных 100-летию Геноцида армян. Символическое название этого концерта “При реках Вавилона” ассоциировалось с 136-м Псалмом, на основе которого были написаны исполнявшийся в этот вечер в оригинальной немецкой версии хоровой Псалом Комитаса и – впервые – немецкого композитора Манфреда Вайса (род. 1935). Куратор германо-армянских мероприятий (кроме Еревана, состоялся концерт в Гюмри) Томас Бухольц обеспечил приезд в Армению замечательных немецких музыкантов: камерного хора из Дрездена “*Vocal Modern*” под руководством Кристфрида Бройделя, меццо-сопрано Аннет Маркерт, гобоистов Арнфрида Фалька и Кристофа Герберта, органиста Михаела Кеплера. Основу концерта – во многом знаменательно-исторического – составили два крупных сочинения. Это созданные, как и 136-й Псалом в Берлине «Հայկական եկեղեցական երգախոսություններ» (“Армянские церковные песнопения”, известные как “Берлинский Патараг”) Комитаса и уже отмеченные “Армянские гимны” Бухольца.

Располагая подаренной композитором после концерта партитурой (издательство *Schott Music*, 2014), а также на высоком профессиональном уровне изданным в Германии двуязычным буклетом (перевод с немецкого Астхик Тарлоян и Эрмине Бухольц-Назарян), можно судить о художественных принципах “Армянских гимнов”. Эта работа Бухольца есть своего рода приношение Армении, вобравшее его многолетний опыт осознания ценностей Комитаса, музыки Армянской Апостольской Церкви и литературного сокровища национальной духовной культуры “Шаракноца” (“Гимнария”). Именно тексты шараканов, взятые из канонов на Страстную Седмицу, вдохновили композитора на написание “*Armenische Hymnen*”. В соответствии с идеей автор структурирует форму из семи частей: Канон на Страстную Понедельник, Канон на Страстную Вторник, Канон на Страстную Среду, Канон на страстную Четверг, Канон на Страстную Пятницу, Канон на Страстную Субботу, Канон на Новое Воскресенье (так именуется второе воскресенье после Воскрешения Христа. – С.С.). Отбор отдельных строф шараканов был осуществлен по полному поводу

“Шаракноца” на немецкий язык, осуществленному силами ученых А. Дрост-Абгарян и Х. Гольца. В каждый Канон вошли отрывки из шараканов с 45-го по 56-й, согласно немецкоязычному изданию.

В музыкальном отношении композитор продолжает стиливые особенности ранней кантаты “Плачи Армении”. Партии двух гобоев отличаются ритмическим разнообразием и изящными контрапунктическими сплетениями, они подчеркнута инструментальны и нередко, в случае отказа от метризации текста, создают ощущение свободной импровизации. Партия солирующего меццо-сопрано (в партитуре фигурирует как *Alt Solo*), объединяющая в одно целое зоны инструментальности и вокальности, наиболее значима в образно-эмоциональном отношении. Кроме того, ее тематизм порой корреспондирует с партиями то гобоев, то хора, хотя в ряде случаев – в Канонах на Вторник, Четверг и Новое Воскресенье заметно противостоит им по вокальной мелизматической инкрустации. В наиболее насыщенной по тематическому материалу партии пятиголосного хора Бухольц демонстрирует излюбленную им стилистику фактурной плотности (посредством контрапункта, аккордики или комплекса внетрической репетитивности голосов) либо фактурной разреженности (посредством уменьшения количества голосов, введения линий-педалей, а также отсутствия партии хора – в Каноне на Вторник). Плюрализм приемов композиции, определяющий драматургическую линию развития, богатство тематических реминисценций придают “Армянским гимнам” Томаса Бухольца ценность не только как произведения, которое относится к новой сакральной традиции.

В заключение приведем слова композитора из буклета к концерту по поводу его работы с музыкальным материалом: “*Имеются репетитивные мотивы, пульсирующие звуки, микротоновые нюансы, виртуозные арабески, звуковые расслоения, чистые гармонические трезвучия, острые диссонансы и так далее, но то, как я собираю все это в одно целое – моя способность создавать музыку заново. Этой эстетической позиции я, возможно, ближе к Комитасу, чем к европейскому авангарду. Новая музыка есть до предела непрерывный натиск, что вообще и делает развитие возможным. Здесь необходим бодрствующий дух, уходящий своими корнями в старые века и даже воссоздающий старые века*”.

---

**Բանալի-քառեր.** «Երեմիա Մարգարեի Ողբը», Բուխոլց, հոգևոր երաժշտություն, «Ողբը Հայաստանի» կանտատը, հոգևոր ավանդույթներ:

**Ключевые слова:** “Плач пророка Иеремии”, Бухольц, духовная музыка, кантата “Плачи Армении”, сакральная традиция.

**Keywords:** Book of Lamentations, Buchholz, sacred music, “Armenia Clamans” Cantata, sacred tradition.

# Մշակութային կապեր (Գերմանիա)

**Сведения об авторе:** САРКИСЯН СВЕТЛАНА КОРЮНОВНА. Окончила теор. ф-т ЕГК им. Комитаса (рук. проф., к. и. Р. А. Атаян), аспирантуру СПбГК им. Н. Римского-Корсакова (канд. дисс. "Особенности развития армянской музыки в 1960-х гг. XX века", 1975, рук. проф., д. и. Г. Г. Тигранов). Докт. дисс. "Армянская музыка в контексте XX века" (МГК им. П. Чайковского, 1999). Проф. кафедры теории музыки ЕГК. Читала лекции в консерваториях Вильнюса, Москвы, Санкт-Петербурга, Львова, Майкопа, участвовала на конференциях (68) в Армении, России, Польше, Чехии, Великобритании, Грузии, Азербайджане, Белоруссии, Литве. Книги: Вопросы современной армянской музыки (Ер., 1983); Армянская музыка в контексте XX века. Исследование (М., 2002); Armenian Music and Composers (London-Yerevan, 2004); Арам Хачатурян. Научный справочник (Ер., 2004, на рус., арм., англ.); На рубеже веков. Музыка и ее сферы (М., 2014). Автор около 500 научных статей в сборниках и журналах Армении, России, Венгрии, Германии, Хорватии, Украины, Грузии, Польши, Болгарии, Чехии, Львове и др., а также в Муз. энциклопедии, Муз. Энциклопедическом словаре, Большой Российской Энциклопедии (М.), The New Grove Dictionary of Music and Musicians (London, 1980, 2001), Grove Dictionary of Opera (London, 1992), Contemporary Composers (London-Chicago, 1992), Die Musik in Geschichte und Gegenwart, Gbr(Kassel). Является Засл. деятелем культуры Армении (2009), Засл. деят. польской культуры (Польша, 2013).

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՍԱՐԳՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԿՈՐՅՈՆՈՎՆԻ Ավարտել է ԵՊԿ և Ն. Ռիմսկի-Կորսակովի անվ. Մոսկովյան պահպանողական (արվեստագիտ. թեկնածուական թեզն է՝ «Հայկական երաժշտության զարգացման առանձնահատկությունները XX դարի 1960-ական թվականներին», 1975 թ.: Դոկտորական թեզը՝ «Հայկական երաժշտությունը XX դարի համատեքստում» (Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ, 1999 թ.): ԵՊԿ տեսության ամբիոնի պրոֆեսոր է: Կարդացել է դասախոսություններ տարբեր երկրների կոնսերվատորիաներում (Վիլնյուս, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Լվով, Մայկոպ): Մասնակցել է 68 գիտաժողովների (Հայաստան, Ռուսաստան, Լեհաստան, Չեխիա, Անգլիա, Վրաստան, Արբերջան, Բելառուս, Լիտվա): Հեղինակ է գրքերի՝ «Հայկական ժամանակակից երաժշտության հարցեր», (ռուս. լեզուով), Եր., 1983 թ., «Հայկական երաժշտությունը XX դարի համատեքստում», ռուսամասիրություն (ռուսերեն), Մ., 2002 թ., «Արամ Խաչատրյան». գիտական տեղեկատու, Եր., 2004 թ., (ռուս., հայ., անգլ. լեզուներով), «Դարերի սահմանագծում. Երաժշտությունը և նրա դրոշմները», (ռուս. լեզուով), Մ., 2014 թ. և շուրջ 500 գիտական հոդվածներ Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Լեհաստանի, Բուլղարիայի, Հունգարիայի, Գերմանիայի, Խորվաթիայի, Չեխիայի, Լիբանանի և այլ երկրների ժողովածուներում և ամսագրերում: Հեղինակ է հոդվածների հանրագիտարաններում և երաժշտական բառարաններում (М.). Grove Dictionary of Music and Musicians (London, 1980, 2001), Grove Dictionary of Opera (London, 1992), Contemporary Composers (London-Chicago, 1992), Die Musik in Geschichte und Gegenwart (Kassel). ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2009), Լեհաստանի մշակույթի վաստակավոր գործիչ (Լեհաստան, 2013):

**Information about the author:** SARKISYAN SVETLANA KORYUN studied at the YSC and completed postgraduate studies at the St. Petersburg State Conservatory, where she obtained her PhD in 1975 with a thesis entitled "Development of Armenian Music in the 60s years of the 20<sup>th</sup> Century. Later, in 1999, she earned the title of Dr. Hab. of Musicology from the Moscow State Conservatory with a thesis entitled "Armenian Music in the Context of the 20<sup>th</sup> Century. From 1974 to the present, she has been Professor of Chair of Music Theory at the YSC. She has also lectured at music academies and conservatories in St. Petersburg, Moscow, Vilnius, Lvov, Maikop. She has participated at 68 symposia in Armenia, Russia, Poland, the Czech Republic, Great Britain, Georgia, Azerbaijan, Belarus, Lithuania. Author of books: Problems of Contemporary Armenian Music., (In Russian), Yerevan, 1983; Armenian Music in the Context of the 20<sup>th</sup> Century. Research. Moscow, 2002; Armenian Music and Composers., (In Russian), London-Yerevan, 2004 (In English); Aram Khachaturyan, Reference Book. Yerevan, 2004 (In Russian, Armenian, English); At the Boundary of Centuries. Music and its Spheres. Moscow, 2014 (In Russian, Armenian, English, French, German) and about of 500 scientific articles in Armenian, Russian, Ukrainian, Georgian, Polish, Bulgarian, Hungarian, German, Croatian, Czech, Lebanon collections and journals. She has written articles on Armenian music and musicians in The Music Encyclopedia and Musical Dictionary (Moscow), The New Grove Dictionary of Music and Musicians (Ed. by S. Sadie, London, 1980), Grove Dictionary of Opera (London, 1992), Contemporary Composers (Ed. by P. Collins, B. Morton, London-Chicago, 1992), The New Grove Dictionary of Music and Musicians II. Rev.Ed. (Ed. by S. Sadie & J. Tyrrell, London, 2001) and Die Musik in Geschichte und Gegenwart (Ed. by L. Finscher, Kassel), edited and compiled a few monographs and collections of scientific articles. Member of Union of Armenian Composers (Yerevan, 1975), International Music Union (Moscow, 2004). She was awarded the Honoured Worker of Culture of Armenia (Yerevan, 2009), Honoured for Polish Culture (Poland, 2013).

## Ամփոփում

Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր, **Սվետլանա Կորյունի Մարգարյան. - «Թոմաս Բուխհոլցի «Ողբ Հայաստանի» կանտատը»:**

Հոդվածն ընթերցվել է Հայոց Յեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Հայաստանի Կոմպոզիտորների միության գիտաժողովում (2015 թ.): Թ. Բուխհոլցն (ծ. 27.8. 1961 թ.) իր "Armenia Clamans" («Ողբ Հայաստանի»)՝ կանտատում գրված 2 հորդի, ասմունքողի և խառը երգչախմբի համար, օգտվել է Երեմիա Մարգարեի Ողբի 5-րդ գլխի լատիներեն տողերից և 1915-1918 թթ. Հայոց Յեղասպանության վկաների մասնակցությամբ փաստավավերագրական ֆիլմից, (գերմաներեն լեզուով տեքստերը կարդում է ասմունքողը: Կա նաև երկի հայերեն տարբերակը): Հոդվածի հեղինակը դիտարկում է Բուխհոլցի 6-մասանի կանտատի կառուցվածքը և կոմպոզիտորական ոճի առանձնահատկությունները: Այն, 1999-ին ստեղծվել է առաջին անգամ հնչել է Երևանում, Երևանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ, Հարություն Թովիկյանի ղեկավարությամբ: Հոդվածն ունի հետգրություն կոմպոզիտորի ստեղծագործական ուղու հակիրճ բնութագրով՝ առնչված հայ հոգևոր մշակույթի հետ:

## Summary

PhD Doctor , Professor of YSC *Svetlana Koryun Sarkisyan. - "Thomas Buchholz The "Armenia Clamans" Cantata".*

The article was first introduced in 2015 at the Conference of the Union of Composers of Armenia dedicated to the 100<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide. The "Armenia Clamans" Cantata is written for two oboes, a narrator, and a mixed choir. Thomas Buchholz (b. 1961), a modern German composer, used the Latin text of the Fifth chapter of the "Book of Lamentations", and the documentary testimonies of eyewitnesses who survived the Genocide of 1915-1918 (texts are narrated in German and Armenian versions). The article analyzes the structure and the compositional style of the six-part cantata. Cantata was written and first performed in Yerevan in 1999 by the Yerevan State Chamber Choir under the direction of Harutyun Topikyan. In the epilogue author comments on Buchholz's interest in the Armenian religious culture.

ԱՍԿԱՐ ԶԱՆԱԲԻ  
ՎԱՏԱԲ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ  
E-mail: A.janabi@LIVE.com

ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ-պատմամշակութային գրականություն

## ՖԻՐԴՈՒՄԻԻ «ՇԱՀՆԱՄԵԻ» ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏՈՒՄ

Անհար է գերազնահատել Ֆիրդուսիի «Շահնամեի»՝ իրանական ազգային էպոսի գեղարվեստական, գրական նշանակությունն ու դերն Իրանի մշակութային կյանքում: «Շահնամեի» Իրանի հերոսական անցյալի խորհրդանշան է եղել և կա: Ստեղծվելուց՝ X դարից ի վեր այն ընդունվել է բազմազգ Պարսկաստանի լայն ժողովրդական զանգվածների կողմից և կարճ ժամանակում դարձել ամեն մի ընտանիքի կենցաղի, ժամանցի ու միջոցառումների անբաժան մասը: Այն երգվել է, պատմվել, ներկայացվել և իմաստավորվել տարբեր հարթակներում՝ ձեռք բերելով բարոյախրատական ու դաստիարակչական կարևոր գործառույթ: Այս ազգային գրական կոթողում վեր է հասնում Իրանի պատմությունը՝ աշխարհի արարումից մինչև VII դար՝ իսլամի հաստատումը: Էպոսի ստեղծմանը զուգընթաց ձևավորվել են դրա կատարման եղանակները՝ տեղը, ժամանակը, կատարողի՝ Շահնամե-խվանի, մասնագիտական հմտություններն ու ուղեկցող երաժշտական գործիքների կիրառության սկզբունքները: Ժամանցի ազգային հավաքատեղիներում՝ թեյարաններում ու սրճարաններում բյուրեղացել են «Շահնամեի» դրվագների որմնակարչության, իսկ ավելի ուշ՝ գրքային նկարազարդումների ավանդույթները:

Իրանի ազգային էպոսը կատարվել է ասերգային ոճով: «Շահնամեի» երաժշտական տարրերը ըստ էության պայմանավորված են տեքստի ռիթմով, հանգով, հնչերանգի ներդաշնակությամբ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ֆիրդուսին, լինելով տաղանդավոր բանաստեղծ, մարդկային խոհերն ու զգացումներն արտահայտել է կուռ կառուցվածք ունեցող չափածոյի տեսքով (I. էջ 561-563): Շահնամեի բոլոր երգվածքներում պահպանված է II վանկանի մութաբարիբ մետրի տարատեսակը՝ հետևյալ բանաձևով.

U - - U - - U - - U ~

Այս մասին L. Երնջակյանը գրում է, որ Շահնամեի երաժշտականությանն առնչվող ըմբռնումները չեն սահմանափակվում գեղագիտական դատողություններով, դրանք վերաբերում են էպոսի դարերով հղկված երաժշտարանատեղծական կատարողական ավանդույթի

հստակ դրսևորումներին (2. էջ 73): Ցավոք, ժամանակի ընթացքում աստիճանաբար մոռացության են մատնվել «Շահնամեի» երգասացությունները և բանավոր ընթերցելու ավանդույթն առհասարակ: Իրանի էպիկական հրաշակերտ կոթողը՝ «Շահնամեի», այսօր խնդիր ունի երաժշտական բաղադրիչի գրառման, վերակառուցման և պահպանման: Եվ չնայած այդ խնդրին, ինչպես նաև Իրանի Իսլամական հեղափոխության (1979 թ.) հետևանքով XX դարի վերջին ստեղծված անբարենպաստ պայմաններին, Ֆիրդուսիի անմահացրած պատմահերոսական և առասպելական պատումների հանդեպ պարսիկ ժողովրդի հետաքրքրությունը չի նվազել: XX դարից սկսած Իրանի դասական երաժշտարվեստի զարգացմանը զուգահեռ «Շահնամեի» նորանոր մարմնավորումներ է ստանում ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտարվեստում: Հողվածի նպատակըն է ներկայացնել իրանցի ժամանակակից կոմպոզիտորների անդրադարձումները «Շահնամեին», որոնք նոր շունչ են հաղորդում էպիկական երկին՝ նպատակաուղղելով դրա կենսունակությունը նաև դեպի ժամանակակից արվեստ:

Հարկ է նշել, որ Ֆիրդուսիի պերճախոս լեզուն և պատումների հարուստ պոեզիան լայն հնարավորություն են ընձեռում «Շահնամեի» երաժշտաբեմական մարմնավորումների համար, որի օրինակները բազմաթիվ են Իրանում: Կարելի է հավաստել, որ վերջինիս օպերային արարումները և երաժշտական ներկայացումների ավանդույթը բավական հին են: Այսպես, կին գրող, դրամատիկ թատերական ռեժիսոր Փարի Մաբերին (ծնվ. 1932 թ.) «Շահնամեի» հիման վրա ստեղծել է մի շարք գործեր, այդ թվում՝ «Բեժան և Մանիժե», «Լեյլի և Մեջնուն», «Շամս է Փարանդե» (Թոշող Շամսը), «Յուսուֆ և Ջուլեյխա» և «Ռոստամ և Իսֆանդիար»: Նրա կարծիքով «Շահնամեի» ունի եզակի ենթատեքստ, և Ֆիրդուսին իր պատումներում չի գիջում Շեքսպիրին\*։ «Շահնամեում» պատկերված «Ջահակ և Ջամշիդ» լեգենդի հիման վրա նա բեմադրել է օպերա-

\* Այս մասին հեղինակը խոսել է Ֆիրդուսիի հոբելյանական տարում տրված հարցազրույցներից մեկում, 2010թ. <https://poretoos.blogspot.com/1389/08/12/post-248/>

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Լիլիթ Վարդգեսի Երնջակյանի՝ 2.11.2020 թ. և ընդունվել տպագրության՝ 2.12.2020 թ., ներկայացրել է հեղինակը 28.10.2020 թ.

յատիպ մի ստեղծագործություն «Մորդ է Բարան» (Անճրևի թռչունը), որի երաժշտությունը՝ հանձնարարված ջնարին, թմբուկին, ջութակին և թամբուրին գրել է Արսալան Քամբարը\*։ Ուշագրավ է, որ այն ստեղծվել է իրանական ավանդական դրամայի սկզբունքով, որտեղ առկա են հնագույն թատերական ներկայացումների՝ նաղալի (պատմողի), թագիեի (ողբի և տառապանքների ծիսական արարողությունների) և սիահ բագիի (սև խաղ, սևադեմ կատակերգուի ժողովրդական ներկայացումների) բնութագրական դրսևորումները։

Դասական երաժշտարվեստում Ֆիրդուսիի և իրանական պատմահերոսական թեմաներին անդրադարձել են նաև Իրանում ապրած և ստեղծագործած անվանի հայ կոմպոզիտորները, ինչպես օրինակ՝ Աշոտ Պատմագրյանը (1898–1981), Էմմանուիլ Մելիք-Աւլանյանը\*\* (1915–2003)։ Անվանի կոմպոզիտոր և դիրիժոր Լորիս Ճգնավորյանը (ծնվ. 1937թ.), մեծ հետաքրքրություն տածելով պարսկական ավանդական երաժշտության, ինչպես նաև ավանդապատումների հանդեպ, հեղինակել է «Ռոստամ և Ջոհրաբ» օպերան, «Միմորդ» բալետը, որոնց հիմքում «Շահնամեի» հայտնի դրվագներն են։ Երկու ստեղծագործություններին էլ հեղինակը ձեռնամուխ է եղել 1960-ականների սկզբներին և տարիների ընթացքում բազմիցս վերանշակել։ Օպերան հաջողությամբ բեմադրվել և համերգային կատարումներով հնչել է ինչպես Իրանում, այնպես էլ Հայաստանում ու աշխարհի տարբեր բեմերում։

«Շահնամեի» տեքստերով ներշնչված երաժշտական ստեղծագործություններն իրականում ավելի շատ են, քան մեր տրամադրության տակ գտնվող նյութերը։ Որոշակի դժվարություններ կան դասական արվեստի նմուշների պահպանման և հայթայթման հետ։ Այսուհանդերձ, հնարավոր է նույնիսկ մեզ մատչելի ստեղծագործություններով որոշարկել այն հիմնական ժանրային շրջանակներն ու երաժշտատնական առանձնահատկությունները, որոնք առկա են այս երկի անդրադարձումներում։

«Շահնամեի» ժանրային ընդգրկումները բավական լայն են, երգից ու գործիքային պիեսներից՝ մինչև սիմֆոնիկ և վոկալ գործիքային մեծակտավ ստեղծագործություններ։ Դրանց հեղինակներ՝ Մորթեզա Հաննանեն, Ալիմոհամմադ Խադեմ Միսակը, Հոսեին Դեհլավին, Ահմադ Փեժմանը, Համիդ Մորթեբասենը և այլ անվանի և բեղուն գրչով կոմպոզիտորներ իրանական երաժշտության ասպարեզում հայտնի անձնավորություններ են\*\*\*։

Ալիմոհամմադ Խադեմ Միսակը (1907-1958 թթ.)

\* Քամբարը (ծնվ. 1960 թ.) անվանի պարսիկ երաժիշտ է, եվրոպական և ազգային գործիքների վարպետ կատարող։

\*\* Իրանական երաժշտական մշակույթում իրանահայ կոմպոզիտորների խաղացած դերի և նշանակության մասին (3. էջ 171-178)։

\*\*\* Իրանցի կոմպոզիտորներին վերաբերող նյութերի հիմնական աղբյուրը էլեկտրոնային պաշտոնական կամ ընդհանուր տեղեկատվական կայքէջերն են, ինչպես օրինակ՝ <https://rateyourmusic.com/list/REDvv/iranian-contemporary-composers/> էջն է։

անվանի երաժիշտ, կոմպոզիտոր, հայտնի՝ որպես Թեհրանի սիմֆոնիկ նվագախմբի հիմնդիրներից, Շահի ժամանակ աշխատել էր Մշակույթի նախարարությունում։ Նա նաև կոմպոզիցիայի դասընթաց է վարել Թեհրանի կոնսերվատորիայում։ Ա. Խադեմ Միսակի ստեղծագործություններից մեր տրամադրության տակ է Ֆիրդուսիի «Շահնամեի» բանաստեղծություններից մեկով ներշնչված դաշնամուրային երկ՝ նվիրված Շահի գովերգմանը։ Երկը կոչվում է «Սուրուդե սեթադեշե շահ» (Շահի փառաբանման օրհներգ)։

Օրինակ 1:



Շահի փառաբանման օրհներգը եվրոպական դասական երաժշտության պարզ արտահայտչամիջոցներով, տոնայնական ֆունկցիոնալ հարաբերություններով, պարբերական կառույցով և քայլերգային ոճով բնութագրվող մի նմուշ է, որ ժամանակակից տարածված Փարվարեշ գովերգող ժանրի արտացոլումներից է։

Մորթեզա Հաննանեն (1923-1989թթ.)՝ կոմպոզիտոր, գալարափողահար և երաժշտագետ, սովորել է Թեհրանի կոնսերվատորիայում անվանի երաժիշտ Փարվիզ Մահմուդի դասարանում։ Ինչպես և ուսուցիչը, նա նույնպես մեծ ներդրում ունի Իրանում սիմֆոնիկ երաժշտության ավանդույթների և համերգային կյանքի կայացման գործում։ Հաննանեն ստեղծագործել է կամերային-գործիքային, նվագախմբային և վոկալ ժանրերում՝ հիմնականում պարսկական թեմաներով և ազգային երաժշտասարտահայտչական բնորոշ տարրերի լայնահուն կիրառումով։

Հաննանեի երկերի շարքում կա մի պիես՝ սուրանոյի և դաշնամուրի համար, որը նվիրված է Ֆիրդուսիի հիշատակին (op. 14)։ Այն եվրոպական դասական եռմասանի ձևին մոտ կառույց է՝ գործիքային նախանվագով։ Սակայն մեղեդային շարադրանքն ամբողջու-

\* Դաշտի՝ իրանական ավանդական երաժշտության հիմքում ընկած դաստգահների համակարգի ածանցյալ մասերից մեկի անվանումն է (4. էջ 100-105)։

թյամբ ընթանում է իրանական ավանդական երաժշտության ոլորտում: Գլխավոր մեղեդին (վոկալ) շարադրված է Դաշտի ձայնակարգում\*:

Օրինակ 2



Որոշակի շեղումներից հետո, պիեսի երրորդ մասում նորից անցում է կատարվում Դաշտի դաստգահ, ուր հնչում է հիմնական մեղեդին և եզրափակվում փոքրիկ կողայով:

Հոսեին Գեիլավին (1927-2019 թթ.) ծնվել է Թեհրանում: Երաժշտության առաջին ուսուցիչը հայրն է եղել: Դասեր է առել իրանական դասական երաժշտության ակումբներում կանգնած մասնագետներ Աբդուհասան Սարայի և Հոսեյն Նասեհի մոտ: Ավարտելով Թեհրանի կոնսերվատորիայի կոմպոզիտորական դասարանը, մեկնել է Գերմանիա և Ավստրիա՝ ուսումը շարունակելու նպատակով: Ավստրիայում կոմպոզիցիայի դասընթաց է ստացել Թոմաս Բ. Դեվիդի դասարանում: Ա. Սարայի մահից հետո նա հանձն է առնում Սարայի նվագախմբի դիրիժորի պարտականությունը: 1968-ին Գեիլավին հիմնում է Ռուդաբի համերգասրահի սիմֆոնիկ նվագախումբը:

Ստեղծագործական առաջին իսկ փորձերից Գեիլավին մեծ հետաքրքրություն է ցուցաբերել իրանական կամիթավոր, աղեղնավոր ու փողային գործիքների նկատմամբ: 1993 թ.-ին նա հիմնադրել է ազգային կրսմիթավոր գործիքների նվագախումբ, հանդես է եկել բազմաթիվ համերգներով: Ռոհուլա Խալեդիի հրավերով սկսել է դասավանդել Թեհրանի ազգային երաժշտության կոնսերվատորիայում, հետագայում դառնալով դրա ռեկտորը՝ մինչև 1975 թ.\*: Նրա ղեկավարության տարիներին ուսանած շրջանավարտների մեծ մասը

արև այսօր ճանաչված երաժիշտներ են:

Գեիլավին ստեղծագործել է տարբեր ժանրերում: Նրա գործերից են «Խոսրով և Շիրին», «Բիժան և Մանիժե» և «Մանա և Մանի» օպերաները: Առաջին երկու օպերաները բեմադրվել են, վերջինը հնչել է միայն համերգային կատարմամբ՝ որպես նվագախմբային սյուիտ: Նա հեղինակել է շուրջ 2 տասնյակ նվագախմբային գործեր, ինչպես սիմֆոնիկ, այնպես էլ պարսկական ազգային նվագարանների համար: Գործերի մեծ մասը՝ ազգային մեղեդիների գործիքավորումներ և բազմաթիվ այլ հեղինակային պիեսներ հնչել են, հրատարակվել և թողարկվել 2 խոսակալառակներով: Գեիլավին հեղինակել է նաև մանկավարժության, գործիքագիտության և կատարողական տեխնիկայի հարցերին նվիրված ձեռնարկներ ու դասագրքեր: Նրա վերջին գիրքը՝ «Պոեզիայի և վոկալ երաժշտության կապը» կոմպոզիտորի ստեղծագործական և հետազոտական գործունեության ընթացքում կուտակված գիտելիքի ու փորձի արգասիքն է: Գիրքը հրատարակված է:

«Բիժան ու Մանիժե» ստեղծագործությունը գրվել է 1974-1975-ին՝ ըստ Ֆիրդոսիի «Շահնամի»։ այն նվագախմբի, իրանական ժողովրդական գործիքների և մենակատարների համար ստեղծված երկ է, որ առաջին անգամ հատվածաբար կատարվել է Վիենայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կողմից (դիրիժոր՝ Թոմաս Բ. Դեվիդ), այնուհետև Գերմանիայում՝ իրանական ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններին նվիրված փառատոնի շրջանակներում: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ «Բիժան ու Մանիժեն» իր ավանդական լեզվաճով հեռու է իրանական ժամանակակից երաժշտության մեջ իշխող հիմնական միտումներից: Մյուսին ներկայացնում է պարսկական անտիկ ժամանակաշրջանը և հեղինակը նպատակահարմար չի գտել կիրառել ժամանակակից լեզվարտահայտչական տարրեր այս գործում: Կոմպոզիտորը նշում է - «...ես փորձել եմ ստեղծել ամբողջական նվագախմբային սոնորիստիկա, որ պետք է փոխանցի իրանական երաժշտության ոգին և արտահայտչականությունը, ինչը պարտիտուրում ժամանակ առ ժամա-

\* Այս մասին նշված է «Բիժան և Մանիժե» ստեղծագործության խոսակալառակի ներդիրում:

\*\* «Բիժան և Մանիժեի» բովանդակությունը հետևյալն է. Բիժանը պարսիկ երիտասարդ հերոս էր: Նա Քեյ-Խոսրովի՝ պարսից արքայի հրամանով պետք է մեկնի Էրմանիստան ծառայության, որը սահմանակից էր Պարսկաստանին և Թուրանին: Իր առաքելությունն ավարտելուց հետո պատվիրակության ղեկավար Գորգինը Բիժանին տանում է Մանիժեի կազմակերպած խնջույքին: Մանիժեն Թուրանի թագավոր Աֆրասիաբի դուստրն է: Գորգինը իրականում կազմակերպել էր դավադրություն. նա ուզում էր Բիժանին սպանել Աֆրասիաբի ձեռքով, ով նույնպես Իրանի հետ թշնամի էր: Մակայն Բիժանին տեսնելով և սիրահարվելով՝ Մանիժեն խնդրում է հերոսին մնալ իր արքունիքում: Բեժանը պատասխանում է, որ պետք է վերադառնա Պարսկաստան: Մանիժեն դիմում է խորամանկության և սպասուհու օգնությամբ կախարհական լամպիքով քնեցնում է Բիժանին և պահում պալատում: Պալատի կառավարիչը թագավորին հայտնում է սենյակներից մեկում քնած անձանոթ երիտասարդի մասին և նրան ձերբակա-

\* Ռոհուլա Խալեդի (1906-1965 թթ.)՝ անվանի պարսիկ երաժշտագետ, կոմպոզիտոր, դիրիժոր, ջութակահար, որը մեծ ներդրում ունի Իրանի մշակութային կյանքի զարգացման ասպարեզում: Ազգային երաժշտական ընկերության և Պարսկական ազգային երաժշտական կոնսերվատորիայի հիմնադիրն է Թեհրանում (1949 թ.): Հեղինակել է պարսկական երաժշտությանը նվիրված երկհատորյակը, եվրոպական և իրանական երաժշտության տեսությանն առնչվող տարբեր աշխատություններ:

նակ ցայտուն դրսևորումներով է երևակվում»\*: Ցավոք, մեր տրամադրության տակ չկան նոտային օրինակներ\*\*:

Ահմադ Փեժմանը (ծնվ. 1935) անվանի կոմպոզիտոր է և ջութակահար: Նա կրթություն է ստացել Վիենայի երաժշտական ակադեմիայում և դեռ ուսանող տարիներից հաջողությամբ հանդես եկել թե՛ որպես հեղինակ, թե՛ որպես կատարող: Հետագա գործունեությունը շարունակել է Իրանում, իսկ Իսլամական հեղափոխությունից հետո Միացյալ Նահանգներում՝ Նյու-Յորքում: Գրել է օպերաներ, բալետներ, սիմֆոնիկ և այլ ստեղծագործություններ, որոնք հիմնականում կատարվել են: Զգալի են նրա ստեղծագործությունների շարքում իրանական ազգային պատմահերոսական թեմատիկայով, ինչպես նաև իրանական ազգային նվագարանների կիրառությամբ ստեղծված երկերը: Այդ շարքում ուշագրավ է «Ռոստամի յոթ խոչընդոտները» բալետը (1996), որի պարտիտուրը մեզ չի հաջողվել ձեռք բերել:

Իրանի դասական երաժշտության անվանի ներկայացուցիչներից է Համիդ Մոթեբասսեմը (ծնվ. 1958 թ.): Նա երաժիշտների ընտանիքում է մեծացել, մանկուց նվագել է թառ, սիթար: Սովորել է Թեհրանի արվեստների համալսարանում և Պարսկական երաժշտության կոնսերվատորիայում: Նրա ստեղծագործությունները արժանացել են Եվրոպական մի շարք պատվավոր մրցանակների. «Բամդադ» («Արևածագ»), «Ծովի երգը», «Ավագ», Նոն («Նոր երգ»), «Դաստան տրիո», «Դաստան դուետ», «Շուրիդե», «Դրախտի ծաղկունքը», «Հանուն կարմիր վարդի» և այլ գործեր ձայնագրվել և բազմիցս կատարվել են:

«Միմորդ» վոկալ գործիքային ստեղծագործությունը գրվել է 2006-2010 թթ.: այն մեծ երաժշտական նախագծի շրջանակներում ընդգրկված հիմնական նպատակներից մեկն էր և կատարվել է համանուն նվագախմբի կողմից:

Այս մեծակտավ գործի հիմքում «Շահնամեի» համանուն պատումն է՝ մեռնող և մոխիրներից հարություն առնող թռչունի՝ Միմորդի մասին: Ֆիրդոսիի երկի այս ամենատպալուրիչ պատմվածքն աչքի է ընկնում ոչ միայն պերճախոսությամբ, այլև տեքստի ներքին երաժշտականությամբ: Այս գործոնն է առավել տրամադրել Մոթեբասսեմին երկը ստեղծելի, որտեղ պարսկական ավանդական մելոսի հնչողությունն ընդգծելու նպատակով հեղինակն օգտագործել է բացառապես ազգային երաժշտական գործիքներից կազմված նվագախումբ՝ նեյ, քամանչա, գեյչակներ, տրահի, սանթուր, թառ, բարբաթ, ինչպես նաև հարուստ հարվածային գործիքների խումբ, մենակատար (տենոր) և երգչախումբ: Ինչպես հեղինակն է նշում, «Միմորդում» օպերային հատուկ որոշ տարրեր համատեղված են արևելյան մոնոդիկ երկարաշունչ երգի հետ, ինչպես նաև եվրոպական խմբերգային արվեստի սկզբունքները խարսխված են իրանական ավանդական երաժշտության և «Շահնամեի» ընթերցումների վրա (6.):

Մոթեբասսեմի ինքնատիպ գործերն առանձնանում են վառ արտահայտված ազգային նկարագրով. հեղինակային ձեռագրի բնութագրական հատկանիշներից

են ավանդական ձայնակարգերում պոլիմելոդիկ մտածողության դրսևորումների բազմազան կիրառությունները՝ ժողովրդական նվագարանների տեխնիկական հնարավորությունների նորովի բացահայտումներով: Այս առումով նա նորարար կոմպոզիտոր է, որի համարձակ երաժշտական մտահղացումները նոր ուղիներ են նշանավորում ազգային գրական ու երաժշտական ավանդույթի ժամանակակից մեկնաբանումների ասպարեզում:

«Շահնամեի» էպիկական պատմությունների երաժշտական կերպավորումները՝ գրական տեքստերին հարիր մեղեդային նկարագիր ստեղծելու տեսանկյունից առնչվում են մի շարք մշակութաբանական, կրոնագեղագիտական ու գեղարվեստական հարցերի հետ, որոնք պայմանավորված են նաև երաժշտական արվեստի տարրեր ժանրային ոլորտների նկատմամբ ձևավորված ավանդական պատկերացումներով: Երաժշտամտածողական կարծրատիպերը հաճախ խոչընդոտել և բարդություններ են հարուցել պրոֆեսիոնալ երաժիշտների համար, ընդհուպ բացասական վերաբերմունք ձևավորելով երաժշտի նկատմամբ (7. էջ 222-226):

Միմորդի պատմության հիման վրա իրանական ժողովրդական գործիքների համար պոլիմելոդիկ պիեսներ գրելով, կոմպոզիտորը մի համարձակ գաղափար է իրականացրել՝ նա ընտրել է այնպիսի տպավորիչ մեղեդիներ, որոնք արտահայտում են հերոսների զգացմունքներն ու վերարտադրում պատմության էպիկական, խորհրդավոր մթնոլորտը՝ Էպոսի ոգուն համարժեք երկեր ստեղծելու դժվարությունը մինչ օրս հետ է պահել շատ կոմպոզիտորների՝ «Շահնամեն» երաժշտական ստեղծագործություն մեկնելու առումով: Իբրև Շահնամեի վարպետ «պատմող», նա պիտի ճիշտ նկարագրի յուրաքանչյուր պատկեր, ինչպես նաև հերոսների զգացմունքներն ու ձգտումները՝ իրանական ազգային նվագարանների օգնությամբ:

Վերադառնալով Մոթեբասսեմի «Միմորդին», ասենք, որ դա «Շահնամեի» ամենագեղեցիկ դրվագներից մեկն է, ուր խոսվում է Զալի՝ Իրանի դյուցազուն հերոսներից մեկի ծնունդի ու մեծանալու, նրա և Ռուդաբեի՝ Քարալի արքա Մեհրաբի աղջկա սիրո պատմության մասին: Այս առասպելական-էպիկական մասում Ֆիրդոսին դաստում է մարդկային երջանկության, ճակատագրի, նախանձի, վախի ու անպատվության մտահոգությունների, սիրո և փառքի տենչանքի վերաբերյալ: Կոմպոզիտորը տպավորիչ երաժշտական լեզվով արտահայտում է Զալի հանդեպ Ռուդաբեի սերը, նկարագրում դեպի Ալբորզի լեռները՝ Միմորդի բույն արշավող ռազմիկներին, ինչպես նաև Նարիմանի որդի Սամի հիասթափությունը:

Ստեղծագործությունը բաղկացած է վեց մասերից. «Նախաբան», «Զալի ծնունդը», «Սամ և Զալ», «Միմորդ և Զալ», «Զալի վերադարձը», «Ռուդաբե և Զալ»: Ավանդության համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Սամը՝ Իրանի հերոսների հերոս Նարիմանի որդին, իր որդու՝ Զալի ծնունդը տոնելիս նկատում է, որ մանուկը արևի պես գեղեցիկ է, սակայն ծերունու սպիտակ մա-

# Իրանի կոմպոզիտորական արվեստը

գեր ունի: Ոչ որ չէր համարձակվում ծեր Սամին ասել, որ գեղեցկուհի կինն է լույս աշխարհ բերել Ջալին, նա էլ խուսափելով ծաղրի առարկա դառնալուց հրամայում է երեխային հեռացնել իրենց քաղաքից: Նրան թողնում են Ալբորզի լեռներում, որտեղ իր բույնն էր հյուսել առասպելական Միմորդ թռչունը՝ հեռու քաղաքկրթությունից: Կեր փնտրելիս Միմորդը գտնում է լքված փորրիկ Ջալին, տանում լեռան զագաթը, սակայն խնայում է նրան և որոշում իր ձագերի հետ մեծացնել:

Հսկա հերոս է մեծանում Ջալը, նրա հզոր ձայնն աշխարհով մեկ է հասնում: Գեղեցկադեմ երիտասարդի մասին լուրը հասնում Սամին և նա որոշում է գտնել որդուն: Հերոս որդին կարողանում է ներել հորը և վերադառնալ տուն: Շուտով Ջալը մեկնում է Քարուլիստան, որտեղ պետք է հանդիպեր Ռուդաբեի կրքոտ սիրուն: Քարուլիստանի հարուստ ու ննգամիտ արքա Մեհրաբը, հայտնի գեղեցիկ ու բարձրահասակ արտաքինով, անմիջապես հեռանում է քաղաքից, երբ իմանում է Ջալի մոտենալու լուրը: Նա վերցնում է իր հետ զանձերն ու արքունիքը: Սակայն պալատականներից մեկն ասում է Ջալին, որ թագավորն ունի մի անգին հարստություն՝ անպատմելի գեղեցկության արքայադուստր Ռուդաբեն: Ինքը Ռուդաբեն, լսելով հերոսի ուժի և գեղեցկության մասին, նույնպես սիրահարվում է Ջալին: Նրանց սերն անասանան է և հարստն (8.), (տե՛ս օրինակ 3):

Անշուշտ, մեր ներկայացրած գործերով չի ավարտվում «Շահնամեի» երաժշտական վերապատումների և «Շահնամեով» ոգեշնչված երկերի շարքը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, նոտային հրատարակությունների և նույնիսկ անտիպ ձեռագրերի բացակայությունը չափազանց բարդացնում է երևույթի երաժշտական արժևորումն իր ամբողջական ընդգրկումով:

Օրինակ 3.

Մեր նպատակը Ֆիրդոսիի անմահ երկի տարբեր երաժշտաժանրային մարմնավորումների ներկայացումն էր Իրանի պրոֆեսիոնալ կոմպոզիտորական ստեղծագործության մեջ, որպես ազգային մշակույթի և ազգային արժեքների հարստնման, շարունակության և վերափմաստավորման ինքնատիպ բնագավառներից մեկի:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Стариков А., Фирдоуси и его поэма “Шахнаме”., Фирдоуси, Шахнаме., т. I., М., 1957. Starikov A., Firdousi i ego poema “Shakhname”., Firdousi, Shakhname., t. I., M., 1957.
2. Ериджакян Л. Вю, О бытовании иранских эпических мотивов в Армении и музыкальной традиции исполнения «Шахнаме»., /Традиция и современность. Вопросы армянской музыки., книга 2., Ер.: Гитутюн, НАН РА, 1996. Erndzhakyan L. V., O bytovanii iranskikh epicheskikh motivov v Armenii i muzykal'noj traditsii ispolneniya “Shakhname”., /Traditsiya i sovremennost'. Voprosy armjanskoj muzyki., kniga 2., Yer.: Gitutyun, NAN RA, 1996.
3. Այվազյան Շ. Գ., Հայ արվեստագետները Իրանում, /«Կանթեղ» գիտական հոդվածներ, դ 3 (68), Եր., Ասողիկ, 2016 թ.: Ayvazyan Sh. G., Hay arvstagnetner' Iranum, /“Kanthegh” gitakan hodvatsner, d 3 (68) ., Asoghik, 2016 th.
4. Երնջակյան Լ., Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1991 թ.: Ernjakyan L. V., Hay-Iranakan yerazhshtakan kaperi patmuthyunitz, Yer, HH GAA hrat., 1991 th.
5. Dehlavi H., The association between poem and lyric music, Tehran, 2000. Mahour publication.
6. Հ. Մոթերասսեմի պաշտոնական կայք. <https://www.simorq.org/Home.20.0.html> Գիտման ամսաթիվը՝ 19.10. 2020 թ. Ժամը՝ 16.55:
7. Nasr S. H., Islam and Music: The Legal and the Spiritual Dimensions, Music in the World's Religion, ed. by Lawrence E. Sullivan. Cambridge, Mass., Harvard UP, 1997.
8. Ստեղծագործության բովանդակությունը գտնելված է

**Բանալի-բանը.** Ֆիրդուսի, «Շահնամն», իրանի հայ կոմպոզիտորներ, իրանի պրոֆեսիոնալ երաժշտություն:

**Keywords:** Ferdowsi, "Shahnameh", Armenian composers living in Iran, Iranian Professional Music.

**Ключевые слова:** Фирдоуси, "Шахнаме", армянские композиторы в Иране, профессиональной музыке Ирана.

**Сведения об авторе:** АСХАР ДЖАНАБИ ВАХАБ (р. 1984, Иран). Окончил: подготовительные курсы отделения "Оперное пение" ЕГК (2004), магистратуру отделения "Оперное пение" (2010) вокально-теоретического факультета ЕГК, класс В. Арутюняна (2010); дополнительные высшие курсы исполнительского и творческого мастерства (2012). В 2011-2012 был соискателем ЕГК по теме «Музыка в поэме "Шахнаме" Фирдоуси» (научный руководитель – доктор искусствоведения Лилит Ернджакян). В 2010-2013 участвовал в мастер-классах Нодара Андгуладзе (Тбилиси, Грузия). С 2020 преподает сольфеджио в Государственном университете исламского искусства в Тебризе, а также ведет классы вокала и сольфеджио в Музыкальном институте Пульян (Тегеран). С 2016 года – директор и преподаватель в частной Академии вокального искусства «Хонаре Аваз» в Кередже. Составитель Сборника материалов Первой международной научно-исследовательской конференции иранских студентов «Роль музыки в поэме Шахнаме» (Ереван, Изд-во посольства ИРИ, 2011, на перс. яз). Автор статей: «Золотой век оперы в Италии, бельканто» в журнале "Музыкальное искусство", Тегеран, 2011, № 11-12; "Музыка в иллюстрациях к поэме Шахнаме», Сборник материалов Десятой научной сессии молодых армянских искусствоведов, Ереван, 2016, с.239-248; «Музыкально-исполнительская традиция поэмы "Шахнаме" в Зурханэ» Сб. научных статей "Кантех", № 2 (67), Ереван, 2016, с. 263-270; 2016, с. 263-270; Music and Musical Instruments in Shahnameh, Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]:77-82 ([www.scholarsresearchlibrary.com](http://www.scholarsresearchlibrary.com)).

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՄՂԱՐ ՋԱՆԱԲԻ ՎԱՀԱԲ (ծ. 21.03.1984 թ., Իրան): Ավարտել է՝ 2003-2004 թթ. ԵՊԿ նախապատրաստական կուրսերի օպերային վոկալի բաժինը, 2010-ին վոկալ-տեսական ֆակուլտետի օպերային երգեցողության բաժինը, (բալետավարականը և մագիստրոսականը՝ Վ. Հարությունյանի դասարան), 2011-2012 թթ. ԵՊԿ Կատարողական և ստեղծագործական բարձրագույն վարպետություն րազուցիչ կրթության լրիվ դասընթացը, 2011-2014 թթ. ԵՊԿ հայցորդ՝ «Երաժշտությունը Ֆիրդուսու Շահնամնում» թեմայով, գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Լիլիթ Երնջակյան: 2010-2013 թթ. հաճախել է Նոդար Անդղուլաձեի (Վրաստան, Թիֆլիս) վարպետության դասերին: Աշխատել է՝ 2020-ից Թավրիզի իսլամական արվեստի պետական համալսարանում՝ որպես դասախոս (սոլֆեջո), 2020-ից՝ Փոյան (Թեհրան) երաժշտական ինստիտուտի դասախոս (վոկալ, սոլֆեջո), 2016-ից առ այսօր՝ Վոկալ արվեստի («Հոնար ավագ») մասնավոր ակադեմիայի տնօրեն և դասախոս, Բարաջ: Հեղինակ է՝ Երաժշտության դերը «Շահնամնում», Իրանի ուսանողների 1-ին միջազգային գիտահետազոտական կոնֆերանսի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ-ում ԻԻՀ դեպարտամենտ, 2011թ (պարսկերեն), Օպերայի ոսկեդարն Իտալիայում, Բելկանտո, «Երաժշտական արվեստ» ամսագիր, Թեհրան, 2011 թ., N 11-12, Երաժշտությունը «Շահնամնի» նկարագրողումներում, Երիտասարդ հայ արվեստագետների գիտական տասներորդ նստաշրջանի նյութերի ժողովածու, «Գիտություն», Երևան, 2016, էջ 239-248, «Շահնամնի» երաժշտակատարողական ավանդույթը Ջուրխանայում, «Կանթեք» գիտական հոդվածներ, N 2 (67), «Ատոլիկ», Երևան, 2016, էջ 263-270, Music and musical instruments in Shahname, Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]:77-82 (Available online at [www.scholarsresearchlibrary.com](http://www.scholarsresearchlibrary.com)):

**Information about the author:** ASGHAR JANABI VAHAB (b. 1984, Iran). In 2003-2004 he studied at the preparatory courses of the Department of Opera Singing at the YSC, and in 2010 he graduated with a Master's degree from the Department of Opera Singing at the YSC (class of V. Harutyunyan). In 2011-2012 he graduated from the Higher Courses in Performing Arts. In 2011-2012 he was a postgraduate student at the YSC researching "Music in Shahnameh poem by Ferdowsi" (Senior Adviser Lilit Yernjakyan, Doctor in Art Sciences). In 2010-2013 he participated in Master-classes by Nodar Andguladze (Tbilisi, Georgia). Since 2020, he is teaching solfeggio at the State University of Islamic Arts in Tevriz and singing, and solfeggio at the Pulian Music Institute (Tehran). Since 2016, he is a director and teacher at the private Academy of Vocal Art "Honare Avaz" in Keredzha. He compiled the proceedings of the First International Research Conference of Iranian Students "The Role of Music in Shahnameh" (Yerevan, Publishing House of the Iranian Embassy, 2011, in Persian). He is also the author of the following articles: "The Golden Age of Opera in Italy, Bel Canto" / "The Art of Music" magazine, Tehran, 2011, No. 11-12; "Music in Illustrations to Shahnameh" / "Proceedings of the Tenth Research Session of Young Armenian Art Critics, Yerevan, 2016, pp. 239-248; "Music and Performing Tradition of "Shahnameh" in Zurkhane" / "Kantech" Collection of Research Articles No. 2 (67), Yerevan, 2016, pp. 263-270; "Music and Musical Instruments in Shahnameh", Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]: 77-82 (available at [www.scholarsresearchlibrary.com](http://www.scholarsresearchlibrary.com)).

## Резюме

Соискатель НАН Армении Асхар Джанаби Вахаб. - "Поэма Фирдоуси «Шахнаме» в профессиональной музыке Ирана".

